ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ

II մաս

Երաշխավորված է Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից 2023 թվականին

10

Նինո Կապանաձե, Նինո Տալախաձե

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՍԻԴԻ

Քաղաքացիություն 10, II մաս
Ուսուցչի գիրք տասներորդ դասարանցիների համար
Թբիլիսի, 2023
Հեղինակներ՝ Նինո Կապանաձե, Նինո Տալախաձե

Խմբագիր՝ Թեոնա Բեքիշվիլի
Ձևավորող՝ Իա Մախաթաձե
Տեխնիկական ձևավորող՝ Դաչի Կոճաուրի

© «Սիդի» հրատարակչություն, 2023
Բոլոր իրավունքները պաշտպանված են

ՍՊԸ «Սիդի հրատարակչություն»
Հեռ.՝ 599623610
Կայք էջ՝ www.ceed.ge
Էլ.-փոստ՝ info@ceed.ge , ceedgeorgia@yahoo.com
https://www.facebook.com/ გამომცემლობა სიდი

Citizenship 10
Student's Book
© Ceed Publishing, 2023
all rights reserved.

Tbilisi, Georgia, 2023

ISBN 978-9941-8-3927-7

Բովանդակություն

Դասագրքի հայեցակարգը..... 4

Դիմում՝ ուսուցչին.....6

Երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլան (Առարկայական չափորոշիչ – “Քաղաքացիություն” առարկա).....7

Թեմա 2. Իրավական մշակույթ (մատրիցա). 10

Հավելվածներ..... 74

Դասագրքի հայեցակարգը

Այս գիրքը տասներորդ դասարանի «Քաղաքացիություն» առարկայի աշակերտի դասագրքի երկրորդ մասի հետ զույգացված ռեսուրսն է, որի նպատակն է օգնել ուսուցչին արդյունավետ կերպով կազմակերպելու ուսանում-ուսուցման գործընթացը:

Երկու գիրքն էլ բովանդակային առումով և մեթոդապես համապատասխանում են բազային աստիճանի Ազգային ուսումնական պլանի, առարկայական չափորոշչի պահանջներին:

Աշակերտի գիրքը առաջարկում է տասներորդ դասարանի երկրորդ՝ «Իրավական մշակույթ» թեմայի համատեքստում կազմված երկարաժամկետ նպատակներին/թիրախային հասկացություններին կողմնորոշված միջանկյալ նպատակներ՝ համալիր առաջադրանքների տեսքով, և համապատասխան ակտիվություններ: Աշակերտի գրքում այդ թեմայով ընտրված **հարցերը** տրված են 13 պարագրաֆով, այդ պարագրաֆները միավորված են 4 ենթագլխում – համալիր առաջադրանքից մինչև համալիր առաջադրանք բաժանված:

Յուրաքանչյուր պարագրաֆ սկսվում է կենսական իրավիճակի/իրավիճակների, այսպես կոչված, քեյսերով և դրանց մասին դատողությամբ: Սրան հետևում են աշակերտների կողմից նմանատիպ իրավիճակների հիշեցում-վերլուծությունը, բանավեճերը, խմբային և անհատական աշխատանքը՝ ուղղորդված ինչպես առարկայական նպատակներին, այնպես էլ՝ ներառարկայական (մակրո) հասկացություններին, մետակոգնիտային և գործառնական՝ ֆունկցիոնալ ունակությունների զարգացմանը:

Տեսական տեղեկությունները ներկայացված են չափավոր, բազմաբնույթ դիդակտիկ միջոցներով. լուսանկարներով, սխեմաներով, դիագրամներով, ինֆոգրաֆիկայով, ինչը հեշտացնում է ըմբռնումը: Աշակերտի կողմից ինքնուրույն կատարված եզրահանգումները, ընդհանրացումը և առաջարկված տեղեկությունը նպաստում են հարցի ընկալման և գիտելիքի ամբողջականացման գործընթացին:

Աշակերտի գրքում տրված են խորագրեր, որոնք կօգնեն նրանց կողմնորոշվել, ուղղորդվել գրքում: Ներկայացված ակտիվությունների ամբողջ հավաքածուն, մոդելավորման սցենարները, քննարկումները, բանավեճերը պարունակում են երկընտրանքային խնդիրներ:

Այստեղ եթե նշենք, որ երբ ակտիվությունը վերաբերում է երկընտրանքային իրավիճակին, այնտեղ չունենք «ստույգ», «ճիշտ» պատասխանների ո՛չ սպասելիքներ և ո՛չ անհրաժեշտություն, նման իրավիճակը լավագույն միջոցն է զարգացնելու աշակերտի քննադատական մտածողությունը և փաստարկների, տարբեր դիրքորոշումների վերաբերյալ խորհելու ունակությունները:

Ավանդաբար, բոլոր ենթագլուխները սկսվում են **միջանկյալ նպատակով, նույն՝ համալիր առաջադրանքով**, և ենթագլխում միավորված պարագրաֆները ներառում են այդ միջանկյալ նպատակին հասնելու անհրաժեշտ տեղեկատվությունը, ակտիվությունները և լրացուցիչ ռեսուրսներ:

Ինչպես աշակերտի, այնպես էլ ուսուցչի գրքում տրված թեմատիկ մատրիցան պարունակում է 4 թիրախային հասկացությանը կողմնորոշված 4 միջանկյալ նպատակ/համալիր առաջադրանք: Նրանցից յուրաքանչյուրը մատրիցայում ունի դուրս գրված ակտիվություններ: Ընթացիկ բարեփոխման նորույթները

նկատի ունենալով՝ դիզայնը փոխեց նաև մեր մատրիցան: Հարմար օգտագործման նպատակով՝ մատրիցան սկսվում է բովանդակությամբ, առաջին աղյուսակը արտացոլում է թիրախային գիտելիքը/գիտելիքի կառուցվածքը, որը աշակերտը պետք է ձեռք բերի: Ուսուցիչը պարզորոշ տեսնում է, թե կոնկրետ թիրախային հասկացության վրա որ միջանկյալ նպատակը/համալիր առաջադրանքն է կողմնորոշված, ինչ հիմնական հարցի համատեքստ է առաջարկված, որ ենթահասկացությունն ենք թիրախավորում և որ ենթահարցն է ընտրված որպես կիզակետ, ինչպես նաև թեմայի որ բնածին՝ կայուն պատկերացումներն է ծածկում մեր առաջադրանքը: Դրան հաջորդում է յուրաքանչյուր միջանկյալ նպատակին հատկացված և երկու բաղադրիչից կազմված բլոկ: Առաջին բլոկը մանրամասնորեն և ակնհայտորեն ներկայացնում է միջանկյալ նպատակի/համալիր առաջադրանքի կառուցվածքը: Իսկ երկրորդ բլոկը կազմված է համալիր առաջադրանքի պայմանի և դրա կատարման հանձնարարականներից: Հանձնարարարականները դուրս են գրված առաջադրանքի կատարման փուլերի և երկրորդ փուլում որպես քայլեր ներկայացված գնահատման չափանիշների համաձայն: Այդ քայլերին հարմարեցված են ռեսուրսներն իրենց ակտիվություններով և ուղղորդող հարցերով:

Պարբերաբար, հարցերի բլոկի վերջում կհանդիպեք մուգ գույնով գրված հարցերի, որոնք կողմնորոշված են ընթացակարգային գիտելիքին և ստացած տեղեկության ու եզրահանգումների կոնկրետ քայլերին, ու աշակերտին ուղղորդում են կատարվելիք առաջադրանքում այդ ամենը կիրառելու մասին մտածել: Թեմատիկ մատրիցայում բոլոր բաղադրիչները դասավորվում են ակնհայտորեն և ուսուցչի համար հեշտացնում են գործընթացի կազմակերպումը: Որոշ ակտիվությունների կցված են սակավ հանձնարարականներ, որոնք ճշգրտում են հարցը կամ առաջարկում են այլընտրանքային ակտիվություններ:

Պարզ է՝ Դուք մնում եք գործընթացի գլխավոր «վարող», և Ձեր մեկնաբանությունները կլինեն այս դասագրքին նոր կյանք տվող:

Տեղեկատվական ռեսուրսը առատ է, գիրքը տալիս է այլ ակտիվություններ կիրառելու հնարավորություն, նշված են լրացուցիչ ռեսուրսների էլեկտրոնային հղումները, առանց որոնց չենք կարող պատկերացնել ուսումնական գործընթացը:

Եթե համացանցի հասանելիությունը սահմանափակ է, այս գրքի հավելվածներում տեսնում եք առաջադրանքի արդյունավետության համար նախատեսված նյութի կարճ նկարագրություններ, որոնցով կարող եք կիսվել աշակերտի հետ՝ պարզելու նյութի բնույթը: Իսկ լրացուցիչ տեղեկություն կարելի է գտնել՝ անցնելով հղումին:

Բոլոր միջանկյալ նպատակների/**համալիր առաջադրանքների համար** հավելվածներում տրված է Ազգային ուսումնական պլանի արդյունքների **տաքսոնոմիայի** հիման վրա պատրաստված **զարգացնող գնահատման գործիք,** որով նկարագրվում է կոնկրետ հարցի առնչությամբ թիրախային հասկացության իմաստավորման աստիճանը: Դա ուսուցչին կօգնի աշակերտի առաջադիմությունը վերլուծելու մեջ:

Գործիքը, **զարգացնող մեկնաբանության մեջ վերին մակարդակի նկարագրության համաձայն,** կօգնի աշակերտին ճիշտ և կոնկրետորեն խորհուրդ տալ՝ ինչ քայլեր պետք է կատարել հասած մակարդակից հաջորդ մակարդակը հաղթահարելու համար: Բոլոր չորս առաջադրանքների հանձնարարականների վերջում նշված են համարժեք գործիքի հավելվածի համարը և էջը:

Մաղթում ենք հաջողություններ:

Ողջույն, սիրելի՛ ուսուցիչ:

Տասներորդ դասարանի «Քաղաքացիութուն» առարկայի աշակերտի դասագրքի երկրորդ մասին համապատասխանող «Ուսուցչի գիրքը» ստեղծվել է ընդհանուր կրթության բարեփոխման շրջանակներում ընթացող գործընթացներում Ձեզ աջակցելու համար:

Երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլանի համաձայն, միջնակարգ աստիճանի տասներորդ դասարանի երկրորդ կիսամյակում առաջադրված է մեկ թեմա՝ իրավական մշակույթ: Ուսուցչի գիրքը նույնպես նվիրված է այդ թեմային:

Ընդհանուր կրթության Ազգային նպատակները դպրոցի առջև դնում է ժողովրդավարական արժեքներով և հմտություն-ունակություններով հագեցած քաղաքացու աճեցման խնդիրը: Իսկ այդպիսի քաղաքացին առանց պայմանի պետք է լինի իրավական մշակույթի կրող: Իրավական պետության ստեղծողները իրենք՝ քաղաքացիներն են: Նրանք արդարացի ընտրություններով պետք է ընտրեն իշխանություն և հետո նրանից պահանջեն սահմանադրական և օրինական գործողություններ, և իրենք նույնպես պետք է գործեն օրենքի և կանոնի շրջանակներում: Իսկ այդ համատեղ պատասխանատվությունը իմաստավորելու համար որոշակի գիտելիք և վերլուծություն է հարկավոր:

Դուք՝ ուսուցիչներդ, դասասենյակում կոնկրետ համալիր առաջադրանքների, կոնկրետ ակտիվությունների, երկընտրանքային իրավիճակների կիրառմամբ պետք է օգնեք աշակերտին հաղթահարելու երկարաժամկետ նպատակների հետ կապված նաև իրավական գիտելիքը, և ձեռք բերելու իրավական մշակույթի կարևոր ունակություն-հմտություններ:

Ուսուցչի գիրքը այդ գործընթացը վարելու մի տարբերակ է առաջարկում:
Հույս ունենք, որ այն Ձեր սպասումները կարդարացնի:

Շնորհակալություն, որ հենց այս դասագիրքն եք ընտրել:

Երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլան (առարկայական չափորոշիչ- «Քաղաքացիություն» առարկա)
Ուսուցանվում է շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 72 ժամ

Հասարակական գիտություններ, միջնակարգ աստիճան
գ) Քաղաքացիություն

Ներածություն
Դասընթացը հատկացված է միջնակարգ աստիճանի աշակերտների համար: Դասընթացի շրջանակներում լայնանում և խորանում է բազային աստիճանում քաղաքացիության շրջանակներում ձեռք բերված գիտելիքը:

Չափորոշչում արդյունքների ու թիրախային հասկացությունների տեսքով սահմանված են երկարաժամկետ նպատակները:

Բովանդակությունը նկարագրված է թեմաների (ենթաթեմաների), հարցերի և ենթահասկացությունների տեսքով: Ազգային ուսումնական պլանը սահմանում է պարտադիր թեմաներ: Թեմաների համապատասխան հարցերը ինքը՝ դպրոցն է ընտրում:
Յուրաքանչյուր թեմայի կցված են արդյունքներին հասնելու ինդիկատորներ՝ուղղիչներ: Նրանք սահմանում են, թե ինչը պետք է գնահատվի ուսանում-ուսուցման գործընթացում: Ինդիկատորները խմբավորված են ըստ թիրախային հասկացությունների:

Աստիճանի արդյունքները
Միջնակարգ աստիճանի չափորոշչում նկարագրված յուրաքանչյուր արդյունքին նախորդում է առջևից կցված ցուցիչը, որը մատնացույց է անում առարկան, ուսուցման փուլը և չափորոշչի արդյունքի համարանիշը, օրինակ. «**Քաղ. միջ. ընտր. 1»:**

«Քաղ. » ցույց է տալիս առարկան. «Քաղաքացիություն»,
«միջ. » ցույց է տալիս աստիճանը,
«1» ցույց է տալիս չափորոշչի արդյունքի համարանիշը:

Քաղաքացիության չափորոշչի արդյունքները միջնակարգ աստիճանում		
Արդյունքների ցուցիչ		**Թիրախային հասկացություն**
	Աշակերտը պետք է կարողանա.	
Քաղ. միջ. 1	Որոշումներ կայացնելիս և համապատասխան գործողությունը կատարելիս՝ հաշվի առնել գերագույն իրավական փաստաթղթերը (այդ թվում՝ Վրաստանի սահմանադրությունը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Երեխայի իրավունքների կոնվենցիան):	**Հասարակություն** (անձ, անհատ, սոցիալականացում) (Քաղ. միջ., 1,2,4)

Քաղ. միջ. 2	Բացահայտել հասարակության համար ակտուալ գլոբալ և տեղային սոցիալ-քաղաքական խնդիրները և սեփական մասնակցությամբ հոգ տանել դրանք ուղղելու մասին՝ հաշվի առնելով ժողովրդավարության սկզբունքները:	**Ժողովրդավարություն** (*մարդու իրավունքներ, իրավական փաստաթղթեր, ժողովրդավարության սկզբունքներ*) (Քաղ. միջ. 1,2,3,4)
Քաղ. միջ. 3	Գործել՝ ըմբռնելով կայուն զարգացման սկզբունքները (այդ թվում՝ գործել առօրյա և արտակարգ (բնական և տեխնոգեն պատճառներով առաջացած) իրավիճակում անվտանգության կանոնները պահպանելով):	**Քաղաքացիական մասնակցություն** (Քաղ. միջ. 2,4)
Քաղ. միջ. 4	Հասարակության մեջ դրական փոփոխություններին ուղղված գաղափարները շահարկել և փաստարկել տարբեր հետաքրքրությունների խմբերի և պետական հաստատությունների հետ համագործակցությամբ:	**Կայուն զարգացում** (Քաղ. միջ. 3)

Պարտադիր թեմաներ

X դասարան
1. Գլոբալ քաղաքացիություն
2. Իրավական մշակույթ
XI դասարան
3. Ձեռներեցություն և բիզնես
4. Քաղաքականություն և քաղաքական մշակույթ
XII դասարան
5. Վրաստանը և գլոբալացում
6. Գլոբալ տնտեսություն և Վրաստանը

Հանձնարարական՝ ուսանում-ուսուցման գործընթացում դպրոցները պահպանեն թեմաների առաջարկված հերթականությունը (խորհուրդ է տրվում մեկ կիսամյակում սովորել մեկ թեմա):

Պարտադիր թեմաներն ու գնահատման ինդիկատորները կապող աղյուսակներ.
Յուրաքանչյուր աղյուսակում տրված է թեմայի վերնագիրը, դրա նկարագրությունը և գնահատման ինդիկատորները, որոնցում ցույց է տրված, թե կոնկրետ թեմայում ինչպես են իրացվում արդյունքները:

X դասարան

Թեմա 2. Իրավական մշակույթ Թեման ենթադրում է իրավական մշակույթի ձևավորման կարևոր տեսանկյունների (օրինահնազանդություն, մարդու իրավունքների ճանաչում) ուսումնասիրում, կոնկրետ մեխանիզմների, օրինակների և երկընտրանքների քննարկում այն բանի հետ կապված, թե ինչպես է տեղի ունենում իրավունքի վրա հիմնված լծակների գործարկման կոնկրետ հիմնախնդիրների լուծումը (օրինակ՝ բռնության կանխարգելում, կիբեռանվտանգության ապահովում և այլն):
Թեմայի շրջանակներում արդյունքի հասնելու ինդիկատորները ըստ թիրախային հասկացությունների. **Հասարակություն -** Աշակերտը պետք է կարողանա. • Հասարակությունում գոյություն ունեցող հիմնախնդիրների որոշակիացում և վերլուծում, որոնք նպաստում են/խոչընդոտում են իրավական մշակույթի արմատավորմանը: **Ժողովրդավարություն-** Աշակերտը պետք է կարողանա. • Իրավական պետության բնորոշիչները, արդարադատության համակարգի և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները վերլուծել ժողովրդավարության սկզբունքների կտրվածքում: **Քաղաքացիական մասնակցություն-** Աշակերտը պետք է կարողանա. • Իրավական մշակույթի արմատավորմանը աջակցության համար սահմանել քաղաքացու անհատական դերն ու կոնկրետ ակտիվությունները: **Կայուն զարգացում-** Աշակերտը պետք է կարողանա. • Իրավական մշակույթի հետ կապված հիմնախնդիրների և երկընտրանքների մասին դատողությունների ժամանակ հաշվի առնել կայուն զարգացման սկզբունքները:

Թեմա 2. Իրավական մշակույթ

Թիրախային գիտելիք/գիտելիքի կառուցվածք, որը աշակերտը պետք է ձեռք բերի թեմայի շրջանակներում (տես՝ էջ 11)

Միջանկյալ նպատակ 1.

- Միջանկյալ նպատակի կառուցվածք (տես՝ էջ 14)
- Համալիր առաջադրանքի պայման, հանձնարարականներ համալիր առաջադրանքի կատարման համար (տես՝ էջ 16)

Միջանկյալ նպատակ 2.

- Միջանկյալ նպատակի կառուցվածք (տես՝ էջ 31)
- Համալիր առաջադրանքի պայման, հանձնարարականներ համալիր առաջադրանքի կատարման համար (տես՝ էջ 33)

Միջանկյալ նպատակ 3.

- Միջանկյալ նպատակի կառուցվածք (տես՝ էջ 48)
- Համալիր առաջադրանքի պայման, հանձնարարականներ համալիր առաջադրանքի կատարման համար (տես՝ էջ 49)

Միջանկյալ նպատակ 4.

- Միջանկյալ նպատակի կառուցվածք (տես՝ էջ 61)
- Համալիր առաջադրանքի պայման, հանձնարարականներ համալիր առաջադրանքի կատարման համար (տես՝ էջ 62)

Զարգացնող գնահատում

- Գործիքներ զարգացնող գնահատման համար, Հավելված 1 (տես՝ էջ 74)
- Լրացուցիչ տեղեկատվություն ուսուցչին՝ ուսուցման հարցերի կապակցությամբ, Հավելված 7 (տես՝ էջ 85)

Թեմա – Իրավական մշակույթ			**Ժամերի հավանական քանակ - 36**	
Թիրախային գիտելիք/գիտելիքի կառուցվածք, որը աշակերտը պետք է ձեռք բերի թեմայի շրջանակներում				
Թիրախային հասկացություն	**Ենթահասկացություն**	**Օրինակ՝ թեմայի շրջանակներում** /ենթահարցեր	**Տրանսֆերի տիրույթ/** այո/ոչ օրինակներ	**Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ** (ընդհանրացումներ թեմայի շրջանակներում)
Ժողովրդավարություն (Մարդու իրավունքներ, իրավական փաստաթղթեր, ժողովրդավարության սկզբունքներ **(Քաղ. միջ. 1,2,3,4)**	Ժողովրդավարության սկզբունքներ	Իրավական պետություն	Տարբեր երկրների իրավապահների և շարքային քաղաքացիների երազանքները կապվում են օրենքի գերակայության սկզբունքի պահպանման, իրավական պետությունում ապրելու հետ (այո՝ օրինակ): Դատախազի դրվագ – երբ պաշտոնյա անձը դրդում է վարորդին գործել՝ անցնելով օրենքի կողքով (ոչ՝ օրինակ):	• Մարդու իրավունքների և կարևորագույն իրավական փաստաթղթերի գիտելիքը և նկատառումը իրավական պետության, իրավական մշակույթի գոյության հիմքն են: • Իրավական պետությունում և՛ իշխանությունը, և՛ քաղաքացիները պետք է գործեն Սահմանադրության և այլ օրենքներին համապատասխան և դրա համար հարկավոր է դրանց մասին գիտելիք:
Հասարակություն (անձնավորություն, անհատ, սոցիալականացում) **(Քաղ. միջ. 1,2,4)**	Անձնավորություն, անհատ, մարդու պահանջմունքներ և կարիքներ	Քաղաքացիական հասարակություն	Քաղաքացիական շարժում «Պատվավոր աշխատանքի հարթակը» աշխատանքի իրավունքների պաշտպանության համար ներկայացնում է, թե ինչպես կարող է հասարակությունը հոգալ անհատի մասին և ազդեցություն գործել ինստիտուցիաների վրա,	• Օրենքը անկողմնակալ և ճշմարտացիորեն պետք է տարածվի բոլորի վրա, հասարակությունը, քաղաքացիները պետք է ենթարկվեն օրենքին: • Իրավական մշակույթ ունեցող հասարակությունը գիտի, որ օրենքները պաշտպանում են մարդու լավագույն շահերը, այդ պատճառով ինքն է պաշտպանում

			(այո՝ օրինակ) ինչպես են փողոցում հետիոտները և վարորդները խախտում երթևեկության կանոնները և վարորդը ինչպես է ռիսկեր ստեղծում անձանց և հասարակության համար, քանզի փոխում է իրավական միջավայրը (ոչ՝ օրինակ)	այդ օրենքները և անհանդուրժող է օրինախախտումների նկատմամբ:
Քաղաքացիական մասնակցություն (Քաղ. միջ. 2,4)	Կամավորականություն, փաստաբանություն՝ գիտակցության բարձրացման համար	Իրավական մշակույթի ակտորներ	Վրաստանի դատարանի կողմից երեխայի իրավունքների պաշտպանության ապահովման անկարողություն (ոչ՝ օրինակ) Քաղաքացիները մասնակցում են արդարադատությանը – արդարության պաշտպանության գործընթացին՝ որպես երդվյալ ատենակալներ: (այո՝ օրինակ) ՄԱԿ-ի Երեխայի կոմիտեն վերականգնում է արդարացիությունը (այո՝ օրինակ)	• Քաղաքացին գիտակցում է անձնական պատասխանատվություն իրավական մշակույթի արմատավորման մեջ: • Ակտիվ քաղաքացիները հոգում են հասարակության գիտակցության բարձրացման մասին, որպեսզի քաղաքացիները գիտենան և գործարկեն մարդու իրավունքների պաշտպանության տեղական և միջազգային լծակները և մեխանիզմները:
Կայուն զարգացում	Կայուն զարգացման նպատակներ	**16-րդ նպատակ.** Խաղաղություն,	Անչափահասների կողմից զենքի	• Օրինահնազանդությունը նախատեսում է այնպիսի

		արդարադատություն, ամուր ինստիտուցիաներ	կիրառման և միջավայրի պահպանության հետ կապված օրենքների խախտում, և անչափահասների արդարադատություն (այո և ոչ՝ օրինակ) Ուոթերգեյթի սկանդալը – Նիքսոնի պաշտոնանկություն - ամուր ինստիտուցիաներ – իրավական որոշում (այո և ոչ՝ օրինակ)	տեղայնացված գործողություններ, որոնք կապվում են գլոբալ արդյունքների հետ, • Օրինախախտող անչափահասի համար զարգացման հնարավորությունների պահպանումը դեռահասի ապագա հեռանկարների և քաղաքացիական անվտանգության մասին (ոչ բռնապետական հասարակության ձևավորում) հոգատարության արտահայտություն է:

Միջանկյալ նպատակ 1.
Միջանկյալ նպատակի կառուցվածք

Հիմնական հարց	**Արդյունք**	**Քննարկվող դեպք/օրինակ**	**Հանգուցային հարց**	**Դասագիրք/օժանդակ ռեսուրսներ**
Իրավական պետություն	Երկու աղյուսակ/սխեմա և մտածելու հարցեր՝ հարցի կապակցությամբ,	Իրավական պետություն	• Ինչպե՞ս արտահայտեմ աղյուսակում/սխեմայում իրավական և ոչ իրավական պետության բնորոշիչները և օրինակները: • Ի՞նչ հարցեր կմտածեն իմ հասակակիցները պետության առջև առկա երկընտրանքների և դրանց հաղթահարման ուղիների մասին:	Պարագրաֆ 1. Վրաստան՝ իրավական պետություն, էջ 7 Պարագրաֆ 2. Պետություն և քաղաքացի, էջ 22 Պարագրաֆ 3. Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն, էջ 30 Պարագրաֆ 4. Իրավական պետություն և կոնստիտուցիոնալիզմ, էջ 36 Վրաստանի սահմանադրություն, հոդված 4, գլուխ երկրորդ. https://matsne.gov.ge/ka/document/view/30346?publication-36
Թիրախային հասկացության կապակցությամբ կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ.			**Գնահատման չափանիշներ** Աշակերտը կարող է.	**Համալիր առաջադրանքի առնչությամբ կոնկրետացված** Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.
Ժողովրդավարություն 1. Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար, սեփական արժանապատվությամբ և իրավունքներով: 2. Մարդն ունի քաղաքացիական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և կոլեկտիվ իրավունքներ, Վրաստանի			• վերլուծել, ինչպես կարող է իրավական պետությունը, համապատասխան իրավական նորմերը նկատի ունենալով, իր ջանքերն ուղղել մարդու ազատության և արժանապատվության, մարդու	• ինչպե՞ս են համապատասխանում իրավական/ոչ իրավական պետության որոշումները, արարքները մարդու ազատության, հավասարության, արժանապատվության հարգմանը: Բերե՛ք օրինակներ: **(Կայուն պատկերացում՝ Կ.պատկ. 1.3.)**

Սահմանադրությունը և միջազգային փաստաթղթերը (հռչակագիր, կոնվենցիաներ) ապահովում են այդ իրավունքների պաշտպանությունը, **3.**ժողովրդավարական հասարակությունում/պետությունում ամենագլխավոր արժեքը մարդու իրավունքներն են, 4. ժողովրդավարությունը հիմնվում է հիմնարար սկզբունքների (հավասարություն, օրենքի գերակայութուն, թափանցիկություն, իշխանության բաշխում, արդարացի ընտրություններ, պատասխանատվություն, ինկլյուզիվություն, ոչ բռնապետական մեթոդներով գործողություն, հանդուրժողականություն) վրա, առանց որոնց պաշտպանության ժողովրդավարական պետությունը գործել չի կարողանա:	իրավունքների պաշտպանությանը: • Դատել, թե ինչո՞ւ է կարևոր այն, որ քաղաքացիական հասարակությունը գիտենա սեփական և ուրիշների իրավունքները, և իրավական պետությունը գործի դնի դրանց պաշտպանության մեխանիզմները: • Դատողություն անի ժողովրդավարության սկզբունքների պաշտպանության անհրաժեշտության մասին իշխանության և հասարակության ցանկացած սեգմենտի գործունեությունում:	• Ինչպե՞ս են հաշվի առնում իշխանական կողմերը, քաղաքացիները Վրաստանի Սահմանադրությունը, օրենքները, միջազգային փաստաթղթերը և դրանցում արտացոլված մարդու իրավունքները: Հիմնավորե՛ք օրինակներով: **(Կ. պատկ. 2.)** • Ի՞նչ ազդեցություն է գործում տարբեր պետական ճյուղերի, քաղաքացիական հասարակության, շարքային քաղաքացիների իրավական/ոչ իրավական վարքը պետությունում ժողովրդավարության սկզբունքների պաշտպանության (կարող եք յուրաքանչյուրի առնչությամբ տարբեր սկզբունքների մասին խոսել) և ժողովրդավարության որակի վրա: Ինչո՞ւ: **(Կ. պատկ. 4.)**

Համալիր առաջադրանքի պայման.

Պատկերացրեք, որ Դուք քաղաքացիության ուսուցիչ եք և տասներորդ դասարանցիների հետ պետք է զրուցեք: Ակնհայտության համար պատրաստե՛ք **երկու աղյուսակ/սխեմա,** որում արտացոլված կլինեն.
1. Իրավական պետության բնութագրիչները և համապատասխան կենսական օրինակներ:
2. Ոչ իրավական պետության բնութագրիչները և համապատասխան կենսական օրինակներ:
Աղյուսակներին կցեք **3-4 հարց,** որոնք «աշակերտներին» մտածել կտան իրավական պետության առջև ծառացած երկընտրանքների և դրանց որոշման ուղիների մասին:

Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսում ընդգծված ներկայացրե՛ք.

- Ինչպե՞ս են համապատասխանում իրավական/ոչ իրավական պետության որոշումները, գործողությունները մարդու ազատության, հավասարության, արժանապատվության հարգմանը: Բերե՛ք օրինակներ:
  (Կ.պատկ. 1. 3.)
- Ինչպե՞ս են նկատի առնում իշխանական կողմերը, քաղաքացիները Վրաստանի սահմանադրությունը, օրենքները, միջազգային փաստաթղթերը և դրանցում արտացոլված մարդու իրավունքները: Հիմնավորե՛ք օրինակներով: **(Կ.պատկ. 2.)**
- Ինչպիսի՞ ազդեցություն է գործում տարբեր իշխանական ճյուղերի, քաղաքացիական հասարակության, շարքային քաղաքացիների իրավական/ոչ իրավական վարքը պետությունում ժողովրդավարական սկզբունքների պաշտպանության (կարող եք ամեն մեկի առնչությամբ տարբեր սկզբունքների մասին զրուցել) և ժողովրդավարության որակի վրա: Ինչո՞ւ: **(Կ.պատկ. 4.)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլեր (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I – Ծանոթացում համալիր առաջադրանքի պայմանին
Ռեսուրսներ/իրականացվելիք քեյսեր.

- **Ռեսուրս 1.** Դասագիրք, Իրավական պետություն, Համալիր առաջադրանքի պայման, էջ 6
- **Ռեսուրս 2.** Word –աղյուսակների կազմում աղյուսակի դիզայնի մենյու https://www. Youtube.com/watch?v=dCW8GHgji 8
- **Ռեսուրս 3.** Ինչպե՞ս ստեղծեք կազմակերպչական սխեմա Microsoft Word-ում https://www.winowsnoticias.com/ka/como-crear-un-organigrama-en-microsoft-word/

Համալիր առաջադրանքի պայմանի իմաստավորմանը կողմնորոշված հարցեր.

- Ի՞նչ է աղյուսակը: Սխեմա՞ն: Ի՞նչ ունեն ընդհանուր: Ի՞նչ տարբերություն է դրանց միջև:
- Դիտարկե՛ք դասագիրքը և գտե՛ք աղյուսակներ և սխեմաներ: Ի՞նչ կասե՛ք դրանց մասին: **(Աղյուսակներ, էջ 13, 25, 53, 71… Սխեմաներ էջ 12, 32 , 39, 72, 75, 101…)**
- Բովանդակային տվյալները աղյուսակի մեջ փոխադրելը որքանո՞վ է բարելավում տեղեկատվության ընկալումը, երկու տեղեկատվությունների համեմատությունը: Բացատրե՛ք՝ ինչո՞ւ:
- Ուրիշ ժամանակ գրե՞լ եք, թե՞ ոչ համանման նախագիծ: Ի՞նչ տվյալներ պետք է արտացոլեք աղյուսակում:
- Ի՞նչ տվյալներ պետք է գրեք առաջին սյունակում:
- Ի՞նչ կախվածություն կլինի առաջին սյունակում մտցված տվյալների քանակի և տողերի քանակի միջև:
- Ի՞նչ տվյալներ կկիրառեք աղյուսակի առաջին տողի սյունակում: Ինչպիսի՞ խորագրեր կունենա, այսպես կոչված, աղյուսակը:
- Ի՞նչ տվյալներ կպահանջվի այն բանի համար, որ սահմանեք քանի՞ սյունականոց և քանի՞ տողանոց աղյուսակ պետք է կառուցեք:
- Ինչպե՞ս պետք է մշակվի տեքստը, որը մտցնելու եք աղյուսակի մեջ: Ընդարձա՞կ պետք է լինի, թե՞ կարճ, լակոնիկ: Ինչո՞ւ:
- Երբ երկու աղյուսակ եք կազմում համեմատության համար, անհրաժե՞շտ են, թե՞ ոչ միատեսակ տվյալներ/խորագրեր: Ինչո՞ւ:
- Ձեր կարծիքով, առաջադրանքում տրված բովանդակության տեսողականության համար գերադասելի է աղյուսա՞կը, թե՞ սխեման: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս եք կազմում հարցը, որը ինչ-որ բանի մասին մտածել կտա, ինչ-որ բանի վերլուծություն է պահանջում մեզանից: Բերե՛ք օրինակներ:
- Ի՞նչ է նշանակում երկընտրանք: Բերե՛ք օրինակ:

Համալիր առաջադրանք

- Ձեր բառերով ձևակերպեք՝ ինչի՞ն է վերաբերվում այսօրվա առաջադրանքը, որի վրա մի քանի դասի ընթացքում պետք է աշխատեք:

- Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք այլ ժամանակ կատարե՞լ եք, թե՞ ոչ:

Հանձնարարական ուսուցչին. Բացատրե՛ք աշակերտներին, որ անձամբ կարող են ընտրել առաջադրանքի արդյունքը և դրա կատարման ձևը (էլեկտրոնային/նյութական), խորհո՛ւրդ տվեք աղյուսակի կամ սխեմայի վրա սկսեն աշխատել այն բանից հետո, երբ բովանդակային կողմը արդեն հասկացած կլինեն և կկարողանան տվյալները հստակեցնել: Այն էլ բացատրեք, որ ի պատասխան համալիր առաջադրանքի չափանիշների, բացի աղյուսակից և սխեմայից, պատրաստեն մտածված հարցեր և շնորհանդեսի ժամանակ հարկ կլինի նաև պարզաբանումներ կատարել:
Իսկ շնորհանդեսը բոլոր աշակերտների համար պարտադիր է:

Փուլ II – Համալիր առաջադրանքի վրա աշխատանք
Թիրախային հասկացություն – Ժողովրդավարություն, **ենթահարց.** Իրավական պետություն

Քայլ 1.
Ինչպե՞ս են համապատասխանում իրավական/ոչ իրավական պետության որոշումները, արարքները մարդու ազատության, հավասարության, արժանապատվության հարգմանը: Բերե՛ք օրինակներ: (Կ.պատկ. 1.3.)

Ռեսուրս.
1. Դասագիրք, Վրաստան – իրավական պետություն, էջ 7
2. Վրաստանի սահմանադրություն, առաջին և երկրորդ գլուխներ, https://matsne.gov.ge/ka/document/view/30346?publication=36

Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Ի՞նչ է սահմանադրությունը: https://bit.ly/3cfDYLA

Իրավական պետություն և օրենքի գերակայություն https://bit.ly/31OGZvH

Մարդու ազատություններ https://bit.ly/3nXfBBN https://bit.ly/3b6U32L

Կարճատև XX դար -1933: Նացիստական Գերմանիայի վերելք https://bit.ly/3fhQYyS

Տասը ամենախիստ կառավարիչներ մարդկության պատմությունում https://bit.ly/3LGo3Am

Ակտիվություն. հարց-պատասխան, (նախորդ գիտելիքի ակտիվացում)

Աշակերտները վերհիշելով/ծանոթանալով սահմանադրության չորրորդ գլխին, թվարկում են իրավական պետության բնորոշումները:

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 7

Հարցեր.

- Ծանոթացե՛ք ստորև տրված հոդվածին և պատասխանե՛ք հարցերին.
- Ի՞նչ փոփոխվեց իրավունքների պաշտպանության ուղղությամբ Մարտին Լյութեր Քինգի հայրենիքում նրա հայտնի ելույթից հետո:
- Ձեր կարծիքով, ո՞ր իրավապահի երազանքն է կապված իրավական պետության հասկացության հետ:
- Վերհիշե՛ք, ի՞նչ է նշանակում իրավական պետություն:
- Ինչպե՞ս կարող է իրավական պետությունը կարգավորել իրավապահների երազանքները:
- Ի՞նչ ընդհանուր երազանքներ ունեն ժամանակակից իրավապահները:
- Ի՞նչ է ձեր երազանքը Մարտին Լյութեր Քինգի համանմանությամբ: Ինչպե՞ս կարող եք այն կատարել այսօր:
- Պատկերացրե՛ք, որ ներքևում հիշատակված իրավապահներից մեկն եք: Ինչպե՞ս կգործեիք, որպեսզի ձեր երկրում այդ երազանքն իրականացնեիք:

Ակտիվություն. Մտավոր գրոհ,

- Ինչպիսի՞ պետությունում են ցանկանում ապրել քաղաքացիները: Դո՞ւք:
- Ինչպե՞ս են կապվում այդ ցանկությունները մարդու իրավունքների և ազատությունների հետ: Անվանե՛ք օրինակներ:

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 10

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով (Իրավական պետության «Բողոքի» ստեղծում) էջ 9

Աշակերտները սահմանադրության չորրորդ հոդվածի, երկրորդ գլխի, մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը վերհիշելուն/ծանոթությանը զուգահեռաբար հիշում են իրավական պետության բնորոշիչները և ստեղծում են ցանկալի պետության «դիմանկարը»

Հարց.

- Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է, թե՞ ոչ օրենքի գերակայության սկզբունքի իրականացում առանց քաղաքացիների մեծամասնության աջակցության: Ինչո՞ւ:

Ակտիվություն. Տեքստի վրա աշխատանք (Ակտիվությունը աշակերտի գրքում չկա)

Հրահանգ. Ծանոթացե՛ք 13-րդ էջին տրված վերջին պարբերությանը և 14-րդ էջին տրված «Սա հետաքրքիր է» բաժնին և պատասխանե՛ք հարցերին.

- Օրենքի գերակայությունը իրավական պետության առկայության երաշխի՞ք է, թե՞ ոչ:
- Ի՞նչ է տեղի ունենում այն ժամանակ, երբ օրենքները կազմում են «դրակոնները»: Ինչո՞ւ:

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 15

Հարցեր.

Իրավական մշակույթ ունեցող հասարակությունն իր բնութագրական նշաններն ունի: Դատեցե՛ք.

- Ձեր դպրոցի հասարակությունում գոյություն ունի՞, թե՞ ոչ իրավական մշակույթ:
- Հասարակության անդամները ճանաչո՞ւմ են կանոնների և օրենքների մեծամասնությունը:
- Հասարակությունում գոյություն ունե՞ն կանոնների և օրենքների ուսումնասիրման ուղիներ և հնարավորություններ:
- Հասարակության մեծամասնությունը ցանկանո՞ւմ է ենթարկվել օրենքին:
- Խախտումների դեմ գոյություն ունե՞ն հարկադրանքի և պատժի միջոցներ:

- Հասարակությունը կարեկցո՞ւմ է զոհին և նաև ցանկանո՞ւմ է մեղադրյալի ուղղումը:
- Հանցանքի նկատմամբ հասարակության մեծամասնության կարծիքը բացասակա՞ն է:
- Գոյություն ունի՞ կանոնների/օրենքի փոփոխման/կատարելագործման համակարգ:

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 16

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում. էջ 18

Պատկերացրե՛ք երկու պետություն, որոնցից մեկում պետական իշխանությունը բաժանված է 3 ճյուղի, իսկ երկրորդում իշխանությունը կենտրոնացված է մի անձնավորության կամ խմբի ձեռքում է: Տրված նմուշի համաձայն, կազմե՛ք աղյուսակ, գրառեք երկու պետությունների գերակայությունները և թերությունները իրավական միջավայրի տեսանկյունից:

Հարցեր.

- Ինչպե՞ս պետք է վարվի իշխանության յուրաքանչյուր ճյուղը իրավական պետության բնորոշիչների պահպանության համար:
- Ինչպիսի՞ն պետք է լինի դրանց վերաբերմունքը մարդու ազատության, հավասարության, արժանապատվության և իրավունքների նկատմամբ:
- Ինչպե՞ս են գործում դրանք:

Պետական իշխանությունը բաշխված է երեք ճյուղի	Պետական իշխանությունը կենտրոնացված է մի անձի/խմբի ձեռքում

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 19

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 19

Հարցեր.

Հստակեցրե՛ք իրավական պետության ձևավորմանը մասնակցող 4 կողմերը (իշխանության 3 ճյուղ և մեդիա): Բաժանվե՛ք նույնքան խմբերի և պատրաստե՛ք շնորհանդեսներ՝ հետևյալ հարցերը հաշվի առնելով.

- Ի՞նչ լումա է ներդնում ձեր երկրամասը իրավական պետության ձևավորման գործում և ինչպե՞ս: Բերե՛ք օրինակ:
- Որքանո՞վ են բավարարում ժողովրդավարական, իրավական պետության պահանջներին ձեր երկրամասի ներկայիս արժեքները, մոտեցումները, արարքները:
- Ի՞նչը և ինչպե՞ս պետք է բարելավվի լավագույն իրականության հասնելու համար:
- Դուք ի՞նչ կարող եք կատարել: Ի՞նչ խորհուրդ կտայիք մյուս ճյուղերին:

Հանձնարարական ուսուցչին. Ցանկալի է աշակերտներն իրենք հստակեցնեն իրավական պետության ձևավորման վրա ազդեցություն ունեցող փաստարկները, ինչին ծառայում է նախորդ ակտիվությունը՝ «Աշխատե՛ք զույգերով»: Ճիշտ այդ

փուլում պետք է կատարվի թվարկության փոխադրումը գրատախտակի կամ թերթի վրա, որպեսզի հաջորդ դատողությամբ հստակեցվի 4-5 գլխավոր փաստարկ (օրինակ՝ իրավական օրենքների մշակումը և ընդունումը լայն հասարակության մասնակցությամբ, օրենքի գերակայության սկզբունքի պաշտպանությունը, անկախ դատարան, իրավական ըմբռնումների բարձրացումը, կրթությունը և այսպես շարունակ)

Ակտիվություն. Ամփոփում

Հարց.

Ստացած տեղեկատվությունը և եզրակացությունները ինչպե՞ս կարտացոլեք ձեր համալիր առաջադրանքի արդյունքներում՝ արգասիքներում:

Քայլ 2. Ինչպե՞ս են հաշվի առնում իշխանական կողմերը, քաղաքացիները Վրաստանի սահմանադրությունը, օրենքները, միջազգային փաստաթղթերը և դրանցում արտացոլված մարդու իրավունքները: Հիմնավորե՛ք օրինակներով: (Կ.պատկ.2)

Ռեսուրս. 1. Դասագիրք, Պետություն և քաղաքացի, էջ 22

2. Վրաստանի սահմանադրություն, երկրորդ գլուխ. https://matsne.gov.ge./ka/documrnt view/30346?publication-36

3. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր http://www:parlament.ge/uploads/0ther/137/137343.pdf

Հանձնարարական ուսուցչին. Բոլոր ակտիվությունների ժամանակ, հատկապես քեյսերը մշակելիս՝ աշակերտներին խնդրում ենք վերլուծել՝ դրսևորո՞ւմ են, թե՞ ոչ հերոսները սահմանադրության, այլ օրենքների հետ կապված գիտելիք, ինչպիսի՞ վերաբերմունք ունեն օրինախախտումների նկատմամբ:

Ակտիվություն. Մտավոր գրոհ (նախորդ գիտելիքի ակտիվացում)

Հարցեր.

- Ի՞նչ է մշակույթը: Ինչպե՞ս կպարզաբանե՛ք իրավական մշակույթ հասկացությունը:
- Ի՞նչ/ո՞վ է ստեղծում իրավական մշակույթ: Բերե՛ք օրինակներ:
- Ի՞նչն եք պատկերացնում որպես իրավական մշակույթի ինդիկատոր: Ի՞նչի համաձայն եք ճանաչում իրավական մշակույթի գոյություն ունենալը/գոյություն չունենալը:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, **(Այդ ակտիվությունը աշակերտի գրքում չունենք)**

Ծանոթացե՛ք իրավական մշակույթի մասին տեղեկատվությանը, սխեմայում արտացոլե՛ք «Իրավական մշակույթի բաղադրիչները» տեղեկատվությունը, ներկայացրե՛ք դասարանին:

Հանձնարարական ուսուցչին. Այս խմբային աշխատանքը արձագանքում է առաջադրանքի արդյունքի ձևը (աղյուսակ) և բովանդակությունը միմյանց հետ կապելու ունակության զարգացմանը, միաժամանակ հնարավորություն է տալիս մոնիթորինգ կատարելու, թե որքանով ճիշտ են աշակերտները ըմբռնել առաջին փուլում մշակված տեղեկատվությունը առաջադրանքի արդյունքի ձևավորման մասին, և ինչպես կկարողանան գործնականորեն այն ստեղծել: Թույլ տված թերությունների համապատասխան հետադարձ կապը հնարավորություն կտա խուսափելու թերություններից առաջադրանքի վերջնական արդյունքը ստեղծելու ժամանակ:

Նկատի պետք է ունենաք այն, որ համալիր առաջադրանքի և կոնկրետ այդ ակտիվության արդյունքները պատրաստելիս, մենք աշակերտին աշխատեցնում ենք ոչ միայն առարկայի թիրախային հասկացության, այլև այնպիսի ներառարկայական (մակրո) հասկացության վրա, ինչպիսին է նարատիվը (տեղեկատվության՝ կառուցումը), լրացուցիչ տեղեկատվության համար դիտե՛ք «Քաղաքացիության ուղեցույց» 2022, էջ 14:

Ակտիվություն. Մտավոր գրոհ,

Հարցեր.

- Ինչպե՞ս կգնահատեիք ձեր համայնքի իրավական մշակույթը երեք մակարդակի (լավ, միջին, վատ) համապատասխան:
- Ի՞նչը կցանկանայիք բարելավել:
- Ի՞նչ կարող եք անել այդ նպատակով դուք և ձեր հասակակիցները:

Ակտիվություն. Դատեցե՛ք (ծանոթացե՛ք ստորև տրված իրավիճակին, պատասխանե՛ք հարցերին) էջ 22

Հարցեր.

- Որքանո՞վ համաձայն եք իրավիճակի հերոսի կարծիքին՝ ՍԿՈՒ անձանց հիմնախնդիրը անկախորեն կարգավորելու մասին:
- Ի՞նչ դեր է ստանձնել պետությունը ՍԿՈՒ անձանց իրավունքների պաշտպանության հարցում:
- Ի՞նչ արդյունք հետևեց մի ուսանողի կողմից սկսված շարժմանը:
- Դուք ի՞նչ դեր կցանկանայիք ավելացնել:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է հարկավոր պետությանը քաղաքացիների ակտիվությունը/շարժումը/բողոքը կոնկրետ հիմնախնդիրը լուծելու համար:
- Որքանո՞վ կարգավորված է, ձեր կարծիքով, ՍԿՈՒ անձանց կենցաղը մեր երկրում:
- Ի՞նչ կցանկանայիք կատարել առկա հիմնախնդիրները արմատախիլ անելու համար:
- Ի՞նչ կարող եք կատարել դուք ՍԿՈՒ անձանց՝ հասարակությունում ավելի լավ հարմարվելու համար:
- Ինչպե՞ս եք հասկանում ոչ իրավաչափ հոգատարությունը (պատերնալիզմը): Բերե՛ք օրինակներ:

Հավելյալ տեղեկատվություն. Պատերնալիզմը պետության կամ անհատի կողմից մարդու ազատությանը և ակտիվությանը միջամտությունն է այն մոտիվով, որ դրանով ինքը բարություն է անում նրան, օրինակ, պաշտպանում է վտանգից և դա հաճախ ստիպողական բնույթ է կրում: Այսօրվա դրությամբ, պատերնալիզմը առանձնապես հրատապ է: Այն դրսևորվում է, օրինակ, հոգեմետ, թմրանյութերի միջոցների (օր.՝ մարիխուանա) կամ որոշակի պատրաստուկների առևտրի (բերել-արտադրության և կրել-օգտագործման) վերահսկման մեջ, ինչպես նաև ավտոմեքենա վարելիս փոկ կրելու և մոտոցիկլետի վարորդի՝ սաղավարտ կրելու պարտականության մեջ, այլ կերպ դա հիշատակում են նաև որպես կաշկանդիչ հոգատարություն:

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 25

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 26
Բաժանե՛ք ստորև տրված 2 իրավիճակը, ծանոթացե՛ք և դատողություն արե՛ք յուրաքանչյուրի մոտ տրված հարցերի համաձայն:

Ռեսուրս. Դասագիրք, իրավական պետություն և կոնստիտուցիոնալիզմ, էջ 36

Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Վրաստանի կոնստիտուցիոնալիզմի զարգացման պատմություն https://bit.Iy/3RxCPMw

Ֆրանսիական մեծ հեղափոխություն. https://bit.Iy/3IzJG45

Ակտիվություն. Խմբային աշխատանք **(Այս ակտիվությունը աշակերտի գրքում չկա)**

Կազմում ենք 4 խումբ՝ անվանված պարագրաֆի տեքստը մշակելու համար: Խմբերն աշխատում են տարբեր հարցերի վրա.

1. Կոնստիտուցիոնալիզի ակունքների մոտ (Ֆրանսիական հեղափոխություն- 1789-1899թթ.)
2. Կոնստիտուցիոնալիզմ
3. Կոնստիտուցիոնալիզմը և Վրաստանը (պատմություն և օրենքների հիերարխիա)
4. Վրաստանի Սահմանադրություն (կառուցվածք և փոփոխություններ)

Շնորհանդեսների միջոցով կիսվում են տեղեկատվությամբ:

Հանձնարարական ուսուցչին. «Իրավական պետություն և կոնստիտուցիոնալիզմ» պարագրաֆի մշակման համար առաջարկում ենք 2 այլընտրանք, որը աշակերտների նախորդ գիտելիքը կապում է սահմանադրության հետ և կոնստիտուցիոնալիզմի առնչությամբ: Այստեղ ներկայացված ակտիվությունը ծառայում է նախորդ գիտելիքի կրկնությանը և կուտակմանը ժամանակի ավելի փոքր հատվածում: Եթե Դուք, դասարանի կարիքներից ելնելով, պարագրաֆը ավելի մանրամասնորեն եք ցանկանում մշակել, ապա աշակերտի գրքում տրված ակտիվություններին հետևեք հաջորդականությամբ:

Ակտիվություն. Ամփոփում

Հարցեր.

- Անձամբ դուք որտեղի՞ց եք ստանում տեղեկատվություն սահմանադրության, միջազգային փաստաթղթերի, տարբեր օրենքների մասին:
- Ինչո՞վ է տարբերում սահմանադրությունը տարբեր օրենքներից: Ինչո՞ւ չի կարելի սահմանադրության հաճախակի փոփոխումը:
- Այս հարցերի մասին գիտելիք ստանալու հարցում օգնո՞ւմ է «Քաղաքացիություն» առարկան: Ի՞նչ եք կարծում, այս առարկայի ուսանումը հրատա՞պ է, թե՞ ոչ ապագայի քաղաքացու համար: Ինչո՞ւ:
- Էլի ի՞նչ ձևով կցանկանայիք իրավական հարցերի մասին գիտակցությունը բարձրացնել:

Ստացած տեղեկատվությունը և եզրակացությունները ինչպե՞ս կարտացոլեք ձեր համալիր առաջադրանքի արդյունքում:

Ռեսուրս. Դասագիրք, էջ 48
Առաջադրանք

Քայլ 3. Ինչպիսի՞ ազդեցություն է գործում (տարբեր պետական ճյուղերի, քաղաքացիական հասարակության, շարքային քաղաքացիների) իրավական/ոչ իրավական վարքը պետությունում ժողովրդավարության սկզբունքների պաշտպանության (կարող եք յուրաքանչյուրի առնչությամբ տարբեր սկզբունքի մասին խոսել) և ժողովրդավարության որակի վրա: Ինչո՞ւ: (Կ.պատկ.4)

Ռեսուրս. Դասագիրք, Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն, էջ 26

Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

10 բողոք, որոնք աշխարհը դարձրին տարբեր գույնի https://bit.ly/3aIFz97
Ռասիզմ և էթնիկ նշանով խտրականություն https://bit.ly/3o3Iafk

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 30

Հարցեր.

Ծանոթացե՛ք աշխարհում հայտնի իրավապաշտպանի պատմությանը և պատասխանե՛ք հարցերին.

- Ինչո՞վ աչքի ընկավ Ռոզա Պարքսը:
- Ի՞նչ վերաբերմունք ուներ նրա նկատմամբ ԱՄՆ-ի պետությունը մինչև հայտնի գործադուլը, ժողովրդավարության ո՞ր սկզբունքն էր խախտվում: Գործադուլի՞ց հետո:
- Ձեր կարծիքով, ի՞նչը դարձավ նման փոփոխության հիմք:
- Նկարագրված իրավիճակի համաձայն, այն ժամանակվա համար կարելի՞ է ԱՄՆ-ն անվանել իրավական պետություն:
- Ինչպե՞ս վարվեց դատարանը տարբեր ատյանների դեպքում:
- Ի՞նչը պայմանավորեց գործադուլավորների հաղթանակը:
- Ի՞նչ եզրակացություն կարելի է կայացնել այդ պատմությունից:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 33

Հանձնարարական ուսուցչին. Այստեղ եթե կառաջարկենք ճիշտ պատասխանների տարբերակ. առաջին իրավիճակում խոսվում է զինվորական պարտադիր ծառայության մասին և դա ներկայացնում է քաղաքացու պարտավորությունը պետության առջև:

- Նիկան պետք է ներկայանար զինվորական կոմիսարիատ և այնուհետև գնար զինվորական ծառայություն պարտականությունը կատարելու,
- պետությունը պահանջում է քաղաքացուց (Նիկայից) կատարել օրենքը,
  իսկ երկրորդ իրավիճակում խոսքը հասարակական կազմակերպության գործունեության մասին է, որը ստեղծվեց քաղաքացիների կողմից և չի ներկայացնում պետական կառուցվածք,
- Գիգան կիրառեց իր իրավունքը՝ պաշտպանել շրջապատը,
- քաղաքացին (Գիգա) պահանջում է պետությունից՝ կատարել իր պարտականությունը:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 34

Հանձնարարական ուսուցչին. Բոլոր երեք ակտիվության վրա աշխատելիս՝ խնդրեք աշակերտներին հստակեցնեն համապատասխանությունը ակտիվությունում նկարագրված իրավական/ոչ իրավական արարքների և ժողովրդավարության սկզբունքների միջև, և վերլուծեն, ինչպես է արտացոլվում դա պետությունում ժողովրդավարության որակի վրա: (Օրինակ՝ եթե երկրում սևամորթ բնակչության նկատմամբ գործում էին խտրականության կանոններ, տեղ ուներ սեգրեգացիա, խախտվո՞ւմ էր, թե՞ ոչ հավասարության սկզբունքը, հատվո՞ւմ էին, թե՞ ոչ այս խմբի իրավունքները: Այդպիսի իրավիճակում հնարավո՞ր էր պետության ժողովրդավարության որակի բարձր գնահատում, կամ եթե Նիկան ոչինչ համարեց օրենքով ստանձնած պարտականությունը

զինվորական ծառայության կապակցությամբ, ժողովրդավարության ո՞րսկզբունքը խախտվեց: Օրենքի գերակայության սկզբունքի պահպանության համար պետական կառույցները պետք է գործարկե՞ն, թե՞ ոչ համապատասխան մեխանիզմներ և այդպես շարունակ)

Ռեսուրս. Աշակերտների կողմից դասագրքում հիշատակված կամ բերված կենսական իրավիճակներ, որոնց կապում են ժողովրդավարության որևէ (օրենքի գերակայություն, իշխանության բաշխում, հավասարություն, արդարացիություն, արդարացի ընտրություններ...) սկզբունքի պաշտպանությունը կամ խախտումը:

Ակտիվություն. Նախորդ գիտելիքի ակտիվացում. բանավեճ.

Ատիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 42

Կազմե՛ք 4 խումբ, բաժանե՛ք «Իշխանություն», «Քաղաքացիական հասարակություն», «Քաղաքացիներ», «Մեդիա» անվանումները: Ձեր անվանը համապատասխան պատրաստե՛ք շնորհանդես, թե ի՞նչ պետք է կատարի ձեր սեգմենտը այն բանի համար, որպեսզի գիտենա, ճանաչի և նկատի ունենա Վրաստանի սահմանադրությունը, միջազգային փաստաթղթերը և դրանցում արտացոլված մարդու իրավունքները: Բերե՛ք օրինակներ:

Հարցեր.

- Ո՞ր իրավական փաստաթղթով/երով է ղեկավարվում Ձեր սեգմենտը և ինչո՞ւ:
- Ի՞նչ մեխանիզմներ/մեթոդներ եք կիրառում անվանված փաստաթղթերը ուսումնասիրելու, Ձեր գործունեությունում դրա դերը իմաստավորելու և գործարկելու համար: Բերե՛ք օրինակներ:
- Որքանո՞վ բավարարված եք այդ առնչությամբ Ձեր գործունեությամբ: Ինչպե՞ս են ուրիշները գնահատում Ձեր գործունեությունը:
- Ի՞նչը պիտանի կլինի որպես այն բանի ինդիկատոր, որ իրավամբ գործում եք/չեք գործում անվանված փաստաթղթերին համապատասխան:
- Ժողովրդավարության ո՞ր սկզբունքին են համապատասխանում Ձեր արարքները: Ինչո՞ւ եք այդպես կարծում:
- Ի՞նչ կփոփոխեիք Ձեր արարքներում այդ առնչությամբ:
- Ի՞նչ խորուրդ կտայիք այլ սեգմենտի ներկայացուցիչներին:

Ակտիվություն. Ամփոփում.

Հարցեր.

- Ժողովրդավարության սկզբունքներից որի՞ պաշտպանության/խախտման հետ գործ ունենք իրավական մշակույթի գոյություն ունենալու/գոյություն չունենալու դեպքում: Ինչո՞ւ եք այդպես կարծում:
- Ինչպիսի՞ն է այդ սկզբունքի էությունը և նշանակությունը ժողովրդավարության որակի համար:
- **Ինչպե՞ս արտացոլեմ աշխատանքում և շնորհանդեսում այս սկզբունքի/ների էությունը և նշանակությունը և իրավական մշակույթի դերը դրա պաշտպանության գործում:**

Ուշադրությո՛ւն:

Համալիր առաջադրանքի գնահատման օժանդակ գործիք, դիտե՛ք Հավելված 1, էջ 74

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի կողմից առաջադրված հարցեր կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար.

- Նկարագրի՛ր՝ ինչպես է ընթանում/ուղղորդվում առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:
- Բացատրի՛ր՝ տրված աղյուսակները ի՞նչ նպատակի են ծառայում:
- Ի՞նչ հարցի վերլուծության կողմն են ուղղորդում քո «աշակերտներին» ներկայացված հարցերը:
- Ի՞նչ հարցի մասին արտացոլեցիր քո գիտելիքը համալիր առաջադրանքի միջոցով:
- Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:
- Ի՞նչը օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:
- Ի՞նչը կփոփոխեիր, եթե նորից կատարեիր առաջադրանքը: Ինչո՞ւ:

Միջանկյալ նպատակ 2.

Միջանկյալ նպատակի կառուցվածք

Հիմնական հարց	**Արդյունք**	**Քննարկվելիք դեպք/ օրինակ**	**Հանգուցային հարց**	**Դասագիրք/օժանդակ ռեսուրսներ**
Օրենք և օրինահնազան-դություն	Հետազոտության հաշվետվություն հանձնարարականներով (տեքստ/սլայդ շոու)	Քաղաքացիական հասարակություն (հասարակություն, որը գիտակցում է օրենքների պաշտպանության անհրաժեշտությունը և ինքն էլ հոգում է դրա մասին (լսողությունը կորցրած անձ, «արժանապատիվ աշխատանքի հարթակ», կանանց իրավապաշտպաններ...) (այո, օրինակներ) (Երբեմն հասարակության անդամները չեն գիտակցում/չեն կարողանում գիտակցել մի շարք օրենքների պահպանության անհրաժեշտությունը և	Ինչպիսի՞ն է քաղաքացիական հասարակության դերը քաղաքացիների օրինահնազանդու-թյունը բարձրացնելու, կարծրատիպերի, իներտությունը, անգործությունը հաղթահարելու և իշխանության համար օրենքը պաշտպանելու պարտավորությու-նը հիշեցնելու ուղղությամբ:	<u>Պարագրաֆ 5.</u> Ի՞նչ է օրենքը և ինչի՞ համար այն գոյություն ունի, էջ 50 <u>Պարագրաֆ 6.</u> Օրինահնազանդություն, էջ 63 <u>Պարագրաֆ 7.</u> Ընտանիքում բռնություն, էջ 76

		ձևականորեն են նայում դրանց գործադրմանը (վաղ ամուսնություն, ընտանիքում բռնություն, փողոցում երթևեկության կանոններ...) (ոչ՝ օրինակներ,)		

Թիրախային հասկացության կապակցությամբ կայուն պատկերացումներ <u>Աշակերտը պետք է ըմբռնի, որ.</u>	**Գնահատման չափանիշներ** <u>Աշակերտը կարող է.</u>	**Համալիր առաջադրանքի առնչությամբ կոնկրետացված** <u>աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.</u>
Հասարակություն **1.**Մարդը անձնավորություն է, սեփական աշխարհայացքով (գաղափարներ, արժեքներ) և ձգտումներով, նա ունի սեփական անձի ազատ զարգացման իրավունք: 2. Մարդն ունի տարբեր *(ֆիզիոլոգիական, անվտանգության, սոցիալական կապերի և այլն)* պահանջմունքներ, առանց որոնց բավարարման նա չի կարողանա անձնական զարգացում ունենալ:	**Հասարակություն** • Ինչպիսի՞ն են մարդու աշխարհայացքը (գաղափարներ և արժեքներ) և ձգտումները կոնկրետ դեպքում • Մարդու ո՞ր պահանջմունքներն են (Մասլոուի տեսության համաձայն) բավարարվում/չեն կարողանում բավարարվել տրված դեպքում • Կոնկրետ հարաբերություններ մարդկանց միջև/մարդու և	• Ի՞նչն է հանդիսանում քննարկված խնդրի մասին օրենսդրական նորմի հաստատման հիմք: Վերլուծե՛ք՝ ի՞նչ ուղեկցող բացասական արդյունքներ են կցված այդ օրինախախտմանը և ինչպե՞ս են արտացոլվում դրանք անձնավորության կարիքների և պահանջմունքների, իրավական մշակույթի վրա (Կ.պատկ. 1.2.) • Ինչպիսի՞ն է քաղաքացիական հասարակության դերը հասարակական գիտակցության (տեղեկատվության դեֆիցիտ, կարծրատիպեր և ավանդույթներ) փոփոխության և ինստիտուցիաների վրա ազդեցության (օրենքի գերակայության մոնիթորինգ, հիմնախնդրի փաստաբանություն) գործում **(Կ.պատկ. 3.)**

3. Այլ մարդկանց/սոցիալական խմբերի/ինստիտուցիաների հետ հարաբերությունը մարդուն աջակցում է անձնական զարգացման մեջ: 4. Ասերտիվությունը (անձի ունակությունը վստահորեն արտահայտելու սեփական կարծիքը՝ առանց ուրիշինը վիրավորելու) նպաստում է անձնավորության և սոցիումի ներդաշնակ հարաբերությանը:	սոցիալական խմբի միջև/մարդու և ինստիտուցիայի միջև • Որքանո՞վ ասսերտիվ են այն հարաբերությունները, որոնք երևում են տրված դեպքում	• Ինչո՞ւ և ինչպե՞ս պետք է համագործակցեն քաղաքացիները, քաղաքացիական հասարակությունը և իշխանությունը օրինախախտումների կանխարգելման և օրինահնազանդության բարձրացման համար **(Կ.պատկ. 4.)**

Համալիր առաջադրանքի պայման.

Մեր շրջապատում բազմաթիվ օրինախախտումներ (հետիոտների և վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտում, վաղ ամուսնության դեպքեր, ընտանիքում բռնություն, սահմանափակ կարողություններ ունեցող անձանց աշխատանքային իրավունքների խախտում և այլն) են կատարվում: Օրինազանցը երբեմն քաղաքացիներն են, երբեմն՝ հասարակությունը, պետական ինստիտուցիաները կամ բոլորը՝ միասին: Դու և քո համադասարանցիները թվարկածից առանձնացրե՛ք ձեզ համար առավել ակտուալ հիմնախնդիրը, համայնքում անցկացրեք հարցում ընտրված խնդրի համապատասխան օրենքների մասին իրազեկվածության, և օրենքի գործադրմանը խոչընդոտող պատճառների մասին:

Առաջին փուլում աշխատե՛ք ինքնուրույն. հարցում անցկացրեք տարբեր տարիքի, սեռի, կրթության, ազգության մարդկանց շրջանում (յուրաքանչյուրը՝ 5-6 ռեսպոնդենտ՝ հարցման մասնակից): Վերլուծե՛ք պատասխանները և մշակե՛ք երաշխավորություններ՝ ինչ կարող է անել քաղաքացիական հասարակությունը օրինահնազանդության նկատմամբ հասարակության գիտակցությունը փոխելու և ինստիտուցիաների վրա ազդելու նպատակով: **Երկրորդ փուլում** ստեղծե՛ք խմբեր, կիսվե՛ք միմյանց հետ ձեր հետազոտության արդյունքներով և ամփոփե՛ք դրանք: Խումբը թող պատրաստի և ներկայացնի **հետազոտության հաշվետվությունը՝ երաշխավորություններով՝** տեքստի/սլայդ շոուի ձևաչափով:

Աշխատանքում/աշխատանքի շնորհահանդեսում ընդգծված ներկայացրե՛ք.

- Ի՞նչն է հանդիսանում քննարկված խնդրի մասին օրենսդրական նորմ սահմանելու հիմք: Վերլուծե՛ք՝ ի՞նչ ուղեկցող բացասական արդյունքներ են կցված այդ օրինախախտմանը, և ինչպե՞ս են դրանք արտացոլվում անձի կարիքների և պահանջմունքների, իրավական մշակույթի վրա: **(Կ.պատկ. 1.2.)**

- Ինչպիսի՞ն է քաղաքացիական հասարակության դերը հասարակական գիտակցության (տեղեկատվության պակաս, կարծրատիպեր և ավանդույթներ) փոփոխության և ինստիտուցիաների վրա ազդեցության (օրենքի գերակայության, մոնիթորինգի, խնդրի փաստաբանության) գործում: **(Կ.պատկ. 3)**

- Ինչո՞ւ և ինչպե՞ս պետք է համագործակցեն քաղաքացիները, քաղաքացիական հասարակությունը և իշխանությունը օրինախախտման կանխարգելման և օրինահնազանդության բարձրացման համար: **(Կ.պատկ.4.)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլեր (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I - Ծանոթություն համալիր առաջադրանքի պայմանին

Ռեսուրսներ/քննարկվելիք քեյսեր.

- **Ռեսուրս 1.** Դասագիրք, Օրենք և օրինախախտում, համալիր առաջադրանքի պայման, էջ 49

<u>Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.</u>

- Ի՞նչ է նշանակում հետազոտություն: Ի՞նչ են ենթադրում հարցումը, դիտարկումը, վերլուծությունը:
- Ունե՞ք հետազոտություն անցկացնելու փորձ: Ի՞նչն էր դժվար: Ի՞նչն էր ավելի հեշտ:
- Ի՞նչը կլինի ձեր հետազոտության առարկան: Նպատա՞կը:
- Ձեր նախորդ փորձի նկատառմամբ, հետազոտության ո՞ր փուլերը կառանձնացնեք:
- Նախապատրաստական փուլում ի՞նչ եք մտադիր անել: Ինչպե՞ս կկազմեք հետազոտության հարցաշարը:
- Ի՞նչ է հետազոտության հաշվետվությունը: Ի՞նչ է գրառվում դրանում:
- Ինչպե՞ս հաշվի կառնեք համալիր առաջադրանքի պայմանը և չափանիշները՝ հաշվետվության պլանը կազմելիս:

- Ինչպե՞ս պետք է գրեք հաշվետվություն: Ինչպե՞ս եք պատկերացնում դրա կառուցվածքը:

- Ի՞նչ կարելի է կցել հետազոտության հաշվետվությանը տեսողականության համար:

Համալիր առաջադրանք

- Ձեր բառերով ձևակերպե՛ք, ինչի՞ն է վերաբերվում այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատեք մի քանի դասի ընթացքում:
- Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք այլ ժամանակ կատարե՞լ եք, թե՞ ոչ:

Փուլ II - Համալիր առաջադրանքի վրա աշխատանք

Թիրախային հասկացություն - Հասարակություն: **Ենթահարց.** Քաղաքացիական հասարակություն

Քայլ 1. Ի՞նչն է հանդիսանում քննարկված հիմնախնդրի մասին օրենսդրական նորմի հաստատման հիմք: Վերլուծե՛ք՝ ի՞նչ ուղեկցող բացասական արդյունքներ են կցված այդ օրինախախտմանը և ինչպե՞ս են դրանք արտացոլվում անձնավորության կարիքների և պահանջմունքների վրա, իրավական մշակույթի վրա: (Կ.պատկ.1.2.)

Ռեսուրս. Դասագիրք, Ի՞նչ է օրենքը և ինչի՞ համար այն գոյություն ունի: էջ 46
Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներ https://bit. Iy/3o0dwVI
Մարդու իրավունքների համառոտ պատմություն https://bit.Iy/3IzUBe5
Մարդու ազատություններ https://bit.Iy/3z77CIZ
Դավանանքի ազատություն https://bit.Iy/3RI.0kC3

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 50
Հարցեր.
Քննարկե՛ք ստորև տրված պատմությունը և պատասխանե՛ք հարցերին.

- Ի՞նչ վնաս հասցրեց իրավիճակի հերոսին սեփական իրավունքների չիմացությունը: Օրենքի բարեփոխման ձգձգված գործընթա՞ցը:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են ընտանիքները գաղտնի պահում ՍԿՈՒ անձանց:

- Այս տեսակետից ինչպե՞ս փոխվեց իրավիճակն այսօր:
- Ի՞նչ լումա է ներդնում քաղաքացիական հասարակությունը այդ գործընթացում: Բերե՛ք օրինակներ:
- Ի՞նչ թերություններ ունի սոցիալական օգնության համակարգը այդ իրավիճակի համաձայն:
- Արդյոք սոցիալական ծառայության գործակալությունը մեղավո՞ր է երիտասարդ կնոջ նկատմամբ: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս կզարգանային իրադարձությունները, եթե իրավիճակի հերոսը սեփական իրավունքները պաշտպանելու համար չդիմեր դատարան:
- Որքանո՞վ ընդունելի է Ձեզ համար դատավորի որոշումը: Ի՞նչը դրվեց քաղաքացու հայցը բավարարելու հիմքում:
- Ինչո՞ւ դատավորը նկատի չառավ սոցիալական ծառայության գործակալության ներկայացուցչի խոսքը, որտեղ նա իրեն արդարացնում էր գոյություն ունեցող օրենքով:
- Գտնո՞ւմ եք, թե՞ ոչ, որ նման արարքը մոտիվացիա է այլ ՍԿՈՒ անձանց համար:
- Դուք ի՞նչ խորհուրդ կտայիք նման իրավիճակում գտնվող ՍԿՈՒ անձին:
- Կարելի՞ է այդ իրաիճակի հերոսին անվանել իրավական մշակույթ ունեցող քաղաքացի: Պատասխանը հիմնավորե՛ք:

Ակտիվություն. Դատեցե՛ք. էջ 52

Հարցեր.

- Ի՞նչ եք կարծում, նկատի կունենա՞, թե՞ ոչ օրինաստեղծ գործընթացը մարդու կարիքները, պահանջմունքները և իրավունքները: Ցանկացած օրենքի ընդունմանը նախորդո՞ւմ են, թե՞ ոչ բանավեճեր:
- Ինչպիսի՞ն է քաղաքացիների, հասարակության ընդգրկվածությունը օրինաստեղծ գործընթացում: Ինչո՞ւ:
- Հնարավո՞ր է, թե՞ ոչ օրենքում բաց թողնված լինի որևէ տեսակետ, որը հետո երկիմաստություն կամ անհասկանալիություն կառաջացնի:
- Ի՞նչ է տեղի ունենում այդ ժամանակ, ո՞վ և ինչպե՞ս կարող է հոգալ այդ թերությունները ուղղելու մասին:
- Ինչպե՞ս կարող է կատարվել հասարակության իրազեկումը նոր օրենսդրական փաստաթղթերի, դրանց հիմունքների, բովանդակության և գործադրման մեխանիզմների մասին:
- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է անչափահասի իրավունքների պաշտպանությունը հանդիսանում առանձնահատուկ հոգատարության առարկա:
- Ո՞ր հիմնարար փաստաթղթերն են նախատեսում կոնկրետ օրենսդրական նորմերի մշակում:

Հանձնարարական ուսուցչին. Այս պարագրաֆը, քեյսերը, ակտիվությունները և նաև հետագա քեյսերը ծառայում են նախորդ գիտելիքի ակտիվացմանը և աշակերտների մտածելու գործընթացները օրենքի էության, դրա հիմքերի և նշանակության, այդ գործընթացներում քաղաքացիական հասարակության ընդգրկվածության իմաստավորման կողմը վարելուն, այն բանի յուրացմանը, որ մարդու իրավունքների խախտման պատճառ հաճախ այն շրջապատն է դառնում, որի հասարակության անդամները չեն գիտակցում մի շարք օրենքների անհրաժեշտությունը և ձևական բնույթ են վերագրում դրանց գործադրմանը:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 54

Բաժանվե՛ք 4 խմբի, 2 խումբն աշխատում է «Իրավիճակ 1-ի» վրա, երկու խումբը՝ «Իրավիճակ 2-ի» վրա:
Իրավիճակ 1
Ծանոթացե՛ք «Հանքափորի կնոջ երգը» բանաստեղծությանը, դատողությո՛ւն արեք դրանում արտահայտված խնդիրների մասին և պատրաստե՛ք շնորհանդես ներկայացնելու համար:
Հարցեր.

- Ո՞ր սոցիալական հիմնախնդրի մասին է խոսքը բանաստեղծության մեջ: Ինչո՞ւ եք այդպես կարծում:
- Ի՞նչ գիտեք քաղաքացիական պոեզիայի, արվեստի մասին: Կարելի՞ է, թե՞ ոչ այն համարել քաղաքացիական ակտիվության ձև:
- Նկարագրե՛ք ի՞նչ փոփոխություններ է նկատում կինը «հանքագործի» մոտ: Ի՞նչ են ցույց տալիս այդ փոփոխությունները:
- «Հանքագործի» ո՞ր մտատանջությունն է կիսում կինը և ո՞րն է թողնում անպատասխան: Ինչո՞ւ:
- Կապակցե՛ք այդ պահանջմունքները ձեզ հայտնի «Մասլոուի պահանջմունքների բուրգի» մակարդակներին:
- Թվարկե՛ք հանքագործի մասնագիտության հետ կապված ռիսկերը և օգուտը, համեմատե՛ք և դատեցե՛ք՝ որքանո՞վ են դրանք համապատասխանում միմյանց:
- Մարդու ո՞ր իրավունքներն են խախտում հանքագործների աշխատանքի պայմանները:
- Ինչպե՞ս կարող ենք գնահատել այդպիսի իրավիճակը իրավական տեսակետից: Անվանե՛ք փաստարկներ:
- Ինչի՞ մասին է ակնարկում բանաստեղծության վերջին արտահայտությունը. «Երանի ամուսնուս ձեռքն ու ոտքը առողջ լինեն, որպեսզի հանքախորշ իջնի»:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս պետք է փոխվի իրավիճակը, որպեսզի արդարությունը վերականգնվի:
- Գուցե հիշո՞ւմ եք աշխատանքի պայմանների խախտման այլ դեպքեր: Ո՞վ է տուժում նման իրավիճակում և ինչպե՞ս:
- Ի՞նչ կարող են փոխել նման իրավիճակներում. քաղաքացիական հասարակությունը (ոչ կառավարական կազմակերպությունները, մեդիան, արհմիությունները, արվեստը...), քաղաքացիները:

Հանձնարարական ուսուցչին. Աշակերտներին բացատրե՛ք, որ վրաց լեզվում ճիշտ են «მაღარო» (հանք) և «მაღაროელი» (հանքագործ) ձևերը, իսկ «შახტა» և «მეშახტე» բառերը ռուսերենից փոխառված օտարաբանություններ են: Բանաստեղծության հեղինակը այդ բառերը գործածում է որպես իրական կենցաղի (արտահայտչականության) փոխանցման եղանակ:

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 60

Ծանոթացե՛ք ստորև տրված քեյսին, մատնացույց արված տեսակլիպին և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

- Ի՞նչ գիտեք ձեր մունիցիպալիտետում թափոնները կառավարելու դրության մասին: Ի՞նչը փոխվեց: Ի՞նչը մնաց նույն վիճակում:
- Ի՞նչ կարող եք անել անձամբ դուք՝ թափոնների կառավարման գործում տեղային լումա մտցնելու համար:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս է գործում քաղաքացիական հասարակությունն այդ դեպքում: Կարո՞ղ է, թե՞ ոչ նա ազդեցություն ունենալ միջազգային պայմանագրով ստանձնած պարտականությունների կատարման վրա:
- Ձեր կարծիքով, էլի ի՞նչ ճանապարհով կարող է քաղաքացիական սեկտորը միանալ իշխանության և հասարակության կողմից օրինականության և միջազգային համաձայնագրերի պահպանության գործին:

Ակտիվություն. Բանավեճեր. «Օրե՞նք, թե՞ արդարացիության զգացում», էջ 62

Հանձնարարական ուսուցչին. Մինչև բանավեճը վարելը՝ ցանկալի է աշակերտները ծանոթանան «Օրինակա՞ն, թե՞ արդարացի» տեսահոլովակին https://bit.ly/3yzztjo, որի էլեկտրոնային հասցեն և անվանումը աշակերտները նաև գրքում ունեն մատնացույց արված:

Ռեսուրս. Դասագիրք, Օրինահնազանդություն, էջ 63
Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Ակտիվ քաղաքացի և քաղաքացիական հասարակություն https//bit.ly/3Ptq[1]

Ճանապարհային երթևեկության մշակույթ https://bit.ly/3IXPnJm

Վաղ ամուսնություն https://bit.Iy/3yH0Ck
Անիմացիա /Animacion “Eaarly Marriage https://bit.ly/3AOITdu
Վաղ ամուսնություն https://bit.Iy/3v8OKqr https://bit.ly/2MS3F5G

Ակտիվություն. Դատեցե՛ք (Իրավիճակի քննարկում) էջ 63

Հարցեր.

- Ինչի՞ն է վերաբերվում առաջարկված պատմությունը: Հստակեցրեք հիմնախնդիրը:
- Ինչպե՞ս կկապակցեք այն իրավական մշակույթի հետ:
- Դուք եղե՞լ եք, արդյոք, նման իրավիճակի մասնակից կամ ականատես: Ինչպե՞ս կբացատրե՛ք նման վարվեցողությունը:
- Ի՞նչ եք կարծում, օրենքը (այդ դեպքում՝ ճանապարհային երթևեկության կանոնները) կարգավորո՞ւմ է, թե՞ ոչ նման իրավիճակները:
- Միայն օրենքի գոյությունը կարող է արդյունքի հանգեցնել: Էլի ի՞նչ է հարկավոր:
- Ո՞վ պետք է վերահսկի նման իրավիճակները, և ի՞նչ դրություն ունենք այդ տեսակետից:
- Սահմանված պատժամիջոցները համարժե՞ք են, թե՞ ոչ:
- Այդ դեպքում ո՞վ է հագեցնում իրավական մշակույթի պակասը: Ինչո՞ւմ է դա կայանում:
- Առանց քաղաքացիական հասարակության, քաղաքացու պատասխանատվության հնարավո՞ր է, արդյոք, իրավական մշակույթի արմատավորումը: Ինչո՞ւ:
- Օրինահնազանդ քաղաքացին, հասարակությունը հանդիսանո՞ւմ են, թե՞ ոչ իրավական մշակույթի անհրաժեշտ նախապայման:
- Ի՞նչ է հարկավոր այդ վերաբերմունքը փոխելու համար:

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 65

Հարցեր.

Ծանոթացե՛ք ստորև տրված պատմությանը. «Ինչպե՞ս աղջիկը չդարձավ զոհ», և դատեցեք.

- Ի՞նչ տարբերություն էր Նանայի և նրա քրոջ վարքի միջև, երբ նրանք երկուսն էլ միևնույն վտանգի մեջ հայտնվեցին:
- Ի՞նչը փրկեց Նանային իր քրոջ ճակատագիրը կիսելուց:
- Որտե՞ղ նա ստացավ տեղեկատվություն իր իրավունքների մասին:
- Իրավունքների իմացության հետ միասին, ո՞ր անձնական հատկանիշները օգնեցին աղջկան ստիպողական ամուսնությունից գլուխն ազատելու մեջ:
- Ի՞նչ եք կարծում, առաջին հերթին ինչ պետք է գիտակցեր նա:
- Ինչո՞ւ չկարողացավ Նանայի քույրը բռնության փորձից ազատվել:
- Ինչո՞ւ բավարար չէ միայն իրավունքների իմացությունը:
- Ու՞մ աջակցության հույսը կարող էր ունենալ Նանան:
- Ու՞մ հետ կարող է կապվել զոհը նման դեպքում:
- Ի՞նչ դեր ունի նման իրավիճակում հուզումների կառավարումը:Ասսերտիվությո՞ւնը:

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչն է ծնողների նման վարքի պատճառը: Ինչպե՞ս կարելի է արմատախիլ անել այդ խնդիրը:
- Ինչպիսի՞ տրամադրվածություն է ձեր թեմում համանման խնդրի նկատմամբ:
- Ի՞նչ ազդեցություն է գործում վաղ ամուսնությունը գենդերային հավասարության վրա: Ինչո՞ւ:
- Ի՞նչ կցանկանայիք փոխել և ինչպե՞ս:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 66

Հարցեր.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ ներքին գործերի նախարարությունը անհրաժեշտ գտավ նման հաղորդագրություն տարածել բնակչության շրջանում, երբ երկրում գործում է համապատասխան օրենսդրություն: Ծանոթացե՛ք ստորև տրված իրավական փաստաթղթերին:
- Նկատի ունեցեք այն փաստը, որ Վրաստանում 18 տարեկանը չլրացած անձանց ամուսնությունը օրենքով արգելված է: Դրա հետ միասին չափահաս անձի սեռական կապը մինչև տասնվեց տարեկան տարիքի անձի հետ պատժվում է ազատազրկմամբ՝ 7-ից մինչև 9 տարվա ժամկետով:
- Այս օրենսդրական փաստաթղթերի վրա հենվելով վերլուծեք՝ ինչպե՞ս կարող է վաղ ամուսնությունը դառնալ մարդու իրավունքների խախտման հիմք և աղջիկների անհատական զարգացմանը խոչընդոտող գործոն:
- Ո՞վ է մեղավոր, երբ մի շարք դեպքերում օրենքը խախտվում է և մեղավորը մնում է չպատժված:
- Ի՞նչ և ո՞ւմ կողմից պետք է արվի, որպեսզի անչափահասների մասին օրենքը արդյունավետ գործի:
- Ինչպիսի՞ն է մեր հասարակության մի մասի իրավական մշակույթը վաղ ամուսնության առնչությամբ:
- Վաղ ամուսնության արգելման մասին օրենքը ի՞նչ ռիսկերից է փորձում պաշտպանել անչափահասներին:
- Ի՞նչ տխուր հետևանքներ կարող է ունենալ վաղ ամուսնությունը աղջիկների համար:
- Ինչպե՞ս է կարգավորում օրենքը ծնողի պատասխանատվությունը:
- Ի՞նչը կարող է լինել ծնողների կողմից իրենց օրինական պարտականությունների խախտման պատճառ:
- Ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի ծնողների կողմից այդպիսի արարքները բացառվեն:
- Ի՞նչ կարող է անել քաղաքացիական հասարակությունը այդ տեսակ իրավախախտումների կանխարգելման համար:

Հանձնարարական ուսուցչին. Ցանկալի է խմբերին տարբեր հարցեր առաջադրել մշակելու համար.

ա) վաղ ամուսնության վնասակար ազդեցությունը անչափահասի առողջության վրա,

բ) վաղ ամուսնությունը՝ մարդու անհատական զարգացմանը խոչընդոտող գործոն,

գ) վաղ ամուսնությունը՝ մարդու իրավունքների խախտում,

դ) ինչո՞ւ է մեր հասարակությունը ներողամիտ վաղ ամուսնության փաստերի նկատմամբ:

Իսկ շնորհանդեսների ժամանակ դասարանին ամեն մի հարցի մասին բանավեճի հնարավորություն տանք: Այդ ակտիվությամբ, եթե նրանք որպես հետազոտության առարկա կընտրեն վաղ ամուսնությունը, աշակերտները պատրաստվում են համալիր առաջադրանքի առաջին փուլի համար, որը անհատական պետք է կատարեն: Հիշեցնենք նաև նրանց առաջիկա խնդիրը – հետազոտության հարցաշարի կազմում:
Ակտիվությունը ամփոփելիս առանձին տեղադրենք առաջին երեք խմբի շնորհանդեսային թերթերը, որոնցում ներկայացված են անձնավորության և հասարակության համար վաղ ամուսնության բացասական արդյունքները: Առանձնահատուկ ընդգծենք, որ անչափահասների ամուսնության օրինական արգելքը ճիշտ այդ բացասական արդյունքների և պետության կողմից երեխայի մասին հոգատարության պարտականության հաշվառումով տեղի ունեցավ: Իսկ օրենքի խախտողները ամրապնդում են բացասական արդյունքները և խոչընդոտում են պետությանը իր պարտականությունների կատարման մեջ: Առանձնացված տեղադրենք չորրորդ խմբի աշխատանքը և դրա կապակցությամբ նշենք, որ հասարակության կողմից հանցագործության մասին լռելը, հանցանքի քողարկումը օրինախախտությանը աջակցություն է և ճիշտ այն պատճառների հետազոտությունն է կարևոր, որոնք հասարակությանը մղում են դեպի նման վարք:

Ուշադրություն. Համանման շեշտադրումներով կաշխատեցնենք այս գլխում տրված բոլոր քեյսերը, որոնք վերաբերում են որևէ օրինախախտման և աշակերտների որոշակի մասի համար կարող են վերածվել հետազոտության հարցի:

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, էջ 69

Ակտիվություն.Աշխատե՛ք խմբերում, էջ 69
Հարցեր.

Բաժանվե՛ք խմբերի, ծանոթացե՛ք վաղ ամուսնության մասին ստորև տրված տեղեկատվություններին, դատեցե՛ք.

- Ինչպե՞ս է ազդում վաղ ամուսնությունը անչափահասի վրա, ի՞նչ ռիսկեր են ստեղծվում նրա համար:
- Ձեր համայնքում ի՞նչ չափաբաժնով գոյություն ունի այդ առնչությամբ գիտակցությունը բարձրացնելու կարիք:
- Տեղեկատվությունների համաձայն՝ ի՞նչ հիմնական խախտումներ են հատվում:
- Ի՞նչ տեղեկատվության ճշգրտմանն է նպատամղված ձեր հետագա հետազոտությունը:

Պատրաստե՛ք հարցաշար, որը կօգնի հարցի ուսումնասիրության մեջ:
Հանձնարարական ուսուցչին. Ներկայացված հարցաշարերը համաձայնեցնելիս՝ կիրառե՛ք արդարացված պրակտիկա, որպեսզի հարցերը մոտավորապես այդ բովանդակությունը ծածկեն. համայնքում արդյոք կա՞ն անչափահասների ամուսնության դեպքեր: Հարցմանը մասնակցողները ի՞նչ վերաբերմունք ունեն վաղ ամուսնությանը: Ի՞նչ գիտեն օրենքի մասին: Ի՞նչ գիտեն վաղ ամուսնության

բացասական արդյունքների մասին: Ի՞նչ են ցանկանում գիտենալ: Ի՞նչն է խանգարում օրենքի լրիվ գործադրմանը: Ո՞վ և ի՞նչ պետք է կատարեն դրա համար: Ինչպե՞ս պետք է համագործակցեն քաղաքացիները և պետությունը:
Դիֆերենցված՝տարբերակված ուսուցման սկզբունքի հաշվառումով, կարող ենք ստեղծել երկու տեսակ հարցաշար. մեկը՝ քանակական հետազոտության համար՝ համեմատաբար հեշտ և երկրորդը՝ որակական հետազոտության համար, այսինքն՝ խորացված հարցազրույցի համար (որպես հարցազրույցի մասնակից կարելի է ընտրել մի քանի փորձագետի. դպրոցի տնօրեն, հոգեբան, թաղամասի լիազոր, թեմայի վրա աշխատող ոչ կառավարական կազակերպության ներկայացուցիչ, բժիշկ և այլն): Քանակական հետազոտությունը անց են կացնում 5-6 հարցերին պատասխանողի հետ, որակականը՝ 1-2 փորձագետի հետ:
Հարցաշարը/երը համաձայնեցնելուց հետո աշակերտները նշան են կատարում դրանց վրա: Համաձայնեցրե՛ք ժամկետը անհատական առաջարկը ներկայացնելու համար:

Քայլ 2. Ինչպիսի՞ն է քաղաքացիական հասարակության դերը հասարակական գիտակցության (տեղեկատվության դեֆիցիտ, կարծրատիպեր և ավանդույթներ) փոփոխման և ինստիտուցիաների վրա ազդեցության (օրենքի գերակայության մոնիթորինգ, հիմնախնդրի փաստաբանություն) գործում: (Կ. պատկ. 3)

Ռեսուրս. Դասագիրք, օրինահնազանդություն, էջ 57
Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, էջ 71

Ակտիվություն. Վերհիշե՛ք, էջ 72
Հարցեր.
Մասնակցության ի՞նչ ձևեր/միջոցներ են կիրառում քաղաքացիները Վրաստանում:

- Մասնակցության ո՞ր ձևն եք համարում ամենաընդունելին և արդյունավետը: Ինչո՞ւ:
- Կարո՞ղ են, թե՞ ոչ դպրոցի կառավարմանը մասնակցել աշակերտները, ծնողները, ուսուցիչները: Ինչպե՞ս:
- Ի՞նչ տարբերություն է հանրաքվեի և պլեբիսցիտի միջև:
- Ինչո՞ւ են հանրաքվեն և պլեբիսցիտը համարվում քաղաքականությանը մասնակցության ձև:

Ե՞րբ և ի՞նչ հարցերի մասին Վրաստանում վերջին ժամանակաշրջանում անցկացվեց հանրաքվե և պլեբիսցիտ:

Հանձնարարական ուսուցչին. Մինչև աշակերտները կպատրաստեն անհատական հետազոտության արդյունքները խմբում ամբողջականացնելու համար, ավարտվում են նախորդ երկու ակտիվությունը, որպեսզի աշակերտները մեկ անգամ կրկին հասկանան, որ իրավական մշակույթ ունենալ նշանակում է՝ օրենքի առջև զգալ պատասխանատվություն, բայց եթե գտնում եք, որ օրենքն ունի թերություն, անարդար է, խիստ է և այլն, նման դեպքում օրենքների փոփոխմանը և նոր օրենքի մշակման գործընթացին կարող են մասնակցել նաև քաղաքացիները: Թեև, օրենքները նույնպես որոշակի կանոնների պահպանմամբ, այսինքն՝ օրինական ճանապարհով պետք է փոփոխվեն: Իսկ գործող օրենքը պաշտպանված պետք է լինի նաև այն ժամանակ, երբ այն աննշան կամ ոչ ճիշտ եք համարում:

Ակտիվություն. Մոդելավորում, էջ 74-75

Ռեսուրս. Դասագիրք, ընտանիքում բռնություն, էջ 62

Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Տղամարդկանց ընդգրկվածությունը ընտանիքում https://bit.ly/3Ibiulg

Վնասակար գենդերային կարծրատիպերի հաղթահարում-պոդկաստ № 1 https://bit.ly/3PboeF4

Անիմացիա «Բռնություն ընտանիքում»/Animamation “Family Viole3nce” https://bit.ly/3cuAm5o

Ընտանիքում բռնությունը շատ վատ է անդրադառնում երեխաների և դեռահասների վրա https://bit.ly/3zhgc6T

Ընտանիքում բռնության թեժ գիծ https://bit.ly/3v5thyI

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 76
Հարցեր.

Բաժանվե՛ք 2 խմբի կամ 4 խմբի և բաժանե՛ք իրավիճակները: Ծանոթացե՛ք անանուն հարցազրույցին՝ ընտանիքում բռնության զոհ կանանց հետ, դատողությո՛ւն արեք և պատրաստե՛ք շնորհանդեսներ հետևյալ հարցերի հաշվառումով.

- Ի՞նչ եք լսել ընտանիքում բռնության մասին:
- Նկարագրված իրավիճակում ո՞վ է զոհ և ո՞վ է բռնացող: Ի՞նչ տիպի բռնության հետ գործ ունենք:
- Ի՞նչ ազդեցություն է գործում ընտանիքում բռնությունը դրան մասնակցող կողմերի վրա: Այդ տանը բնակվող երեխաների՞ վրա:
- Ինչպե՞ս է ազդում նման փաստերի վրա հասարակությունը, համայնքը:
- Ընտանիքում բռնության զոհերի պատասխաններից առանձնացրե՛ք կարծրատիպային բովանդակություն ունեցող կարծիքները և բացատրե՛ք՝ ինչո՞ւ եք դրանք համարում կարծրատիպ:
- Ի՞նչ կապ եք տեսնում նկարագրված իրավիճակների և վաղ ամուսնության միջև:
- Ընտանիքում բռնության ի՞նչ պատճառներ է անվանում զոհը: Ի՞նչ կավելացնեիք:
- Ի՞նչ բացասական արդյունք է հետևում ընտանեկան բռնությանը:
- Դուք ի՞նչ որոշում ընդունելու խորհուրդ կտայիք այդ և համանման վիճակում գտնվող մարդկանց: Ինչո՞ւ:
- Ի՞նչ իրավական ճանապարհներ գոյություն ունեն ընտանիքում բռնությունը արմատախիլ անելու համար:
- Այստեղ տրված իրավիճակներում զոհը կանայք են, թեև իրականում այդ դերում տղամարդիկ նույնպես եղել են (ավելի հազվադեպ): Ի՞նչ եք լսել նման դեպքերի մասին:
- Արդյոք հասարակության վերաբերմունքը միանմա՞ն է զոհ կնոջ և զոհ տղամարդու նկատմամբ: Բռնացող կնոջ և բռնացող տղամարդու նկատմամբ:
- Ինչպե՞ս կվարվեիք եթե հարևանի տնից լսվեն բռնության ձայներ. կմիանայի՞ք վեճին/կռվին, կզանգահարեի՞ք 112, կտեղեկացնեի՞ք մնացած հարևաններին, թե՞ կվարվեիք այնպես, իբր ոչինչ տեղի չի ունեցել:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող էին գործել բռնությանը ականատես հարևանները, բարեկամները, որպեսզի վերջին տարիներին տեղի ունեցած ընտանեկան բռնության արդյունքում մահացած կանանց թիվը նվազած լիներ կամ ընդհանրապես չլիներ:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ ենք սովորում ընտանիքում բռնության հարցերը դպրոցում:

Հանձնարարական ուսուցչին. Ամփոփելիս, հարկ կլինի ընդգծել այն, որ գոյություն ունի սերտ կապ ընտանիքում բռնության և վաղ ամուսնության միջև, երկուսն էլ օրինախախտում են և հաճախ, ինչպես հարցազրույցներից է երևում, մեկը մյուսին պայմանավորում է: Բռնության ընտանեկան միջավայրից ազատվելու համար անչափահասը դիմում է վաղ ամուսնությանը այն հույսով, որ կընկնի ավելի լավ միջավայր, իրականում նոր հիմնախնդիրների է հանդիպում: Երբեմն վաղ ամուսնությունը ընտանիքում բռնության ուղղակի արդյունք է, երբ ծնողները ստիպում են անչափահասին «ամուսնանալ»: Բոլոր դեպքերում, անօրեն արարքի հետ գործ ունենք: Գլխավորն այն է, որ շրջապատում գտնվողները (մերձավորներ, համայնք, հասարակություն, դպրոց, տեղական կառույցներ) աչք են փակում և դրան չեն միջամտում, քանզի արմատավորված կարծրատիպերը՝ «ընտանիքի գործում ոչ ոք չպետք է միջամտի», «դա մեր գործը չէ», դեռևս կայուն են գործում և մատնանշում են գիտակցության բարձրացման անհրաժեշտության վրա:

Քայլ 3. Ինչո՞ւ և ինչպե՞ս պետք է համագործակցեն քաղաքացիները, քաղաքացիական հասարակությունը և իշխանությունը օրինախախտումների կանխարգելման և օրինահնազանդության բարձրացման համար: (Կ.պատկ. 4)

Ռեսուրս. Դասագիրք, Ընտանիքում բռնություն, էջ 81

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում (տեքստի վրա աշխատանք) **(Այս ակտիվությունը աշակերտի գրքում չունենք)**

Հարցեր.

Ծանոթացե՛ք 81-84 էջերում տրված տեղեկատվությանը, դատեցե՛ք և պատասխանե՛ք հարցերին.

- Ի՞նչ իրավական մեխանիզմներ են գործում ընտանիքում բռնության դրսևորման, խափանման և պաշտպանության համար: Ի՞նչ են ենթադրում ընտանիքում բռնության զոհերի պաշտպանության ժամանակավոր միջոցառումները:
- Ձեր կարծիքով, ի՞նչ կարող է կատարվել ընտանեկան բռնության կանխարգելման համար:
- Ի՞նչ լումա կարող է մտցնել այդ գործում պետությունը: Հասարակությո՞ւնը: Քաղաքացի՞ն:
- Ձեր հետազոտությունում ինչպե՞ս արտացոլվեց համայնքի իրազեկվածությունը: Ի՞նչ գիտեն նրանք վաղ ամուսնության դրսևորումների, խափանման իրավական մեխանիզմների մասին:
- Ի՞նչ ցույց տվեց հետազոտությունը. ի՞նչ կարելի է անել վաղ ամուսնության մասին գոյություն ունեցող օրենսդրական նորմի արդյունավետ գործարկման համար:
- Ի՞նչ լումա կարող է մտցնել այդ գործում քաղաքացիական հասարակությունը:
- Ինչպիսի՞ն են ձեր հետազոտության երաշխավորությունները վաղ ամուսնության կանխարգելման առնչությամբ:

Ակտիվություն. Խմբային աշխատանք (Այդ ակտիվությունը աշակերտի գրքում չունենք)

Հրահանգ խմբերին. Բաժանվեք խմբերի, մշակե՛ք կանոնները, ունկնդրե՛ք միմյանց հետազոտության արդյունքները և հանձնարարականները, ամբողջացրեք աշխատանքները և պատրաստե՛ք շնորհանդեսի համար:

Հանձնարարական ուսուցչին. Դրանք կլինեն խմբեր, որոնք անդամների անհատական աշխատանքները կամբողջացնեն և համալիր առաջադրանքի վերջնական արդյունքը միասին կներկայացնեն: Անվանե՛ք դրանց «Հետազոտողների խումբ №1, №2, №3 և այդպես շարունակ (աշակերտների քանակի համաձայն, յուրաքանչյուր խմբում քանակը 5-6 աշակերտից չանցնի): Մինչև

համալիր առաջադրանքի ավարտը այդ խմբերը միասին կաշխատեն: Դուք եք որոշելու՝ պատահականության սկզբունքին կհետևե՞ք, թե՞ ձեր տեսակետով, ուժերի հաշվեկշռի հաշվառումով կբաշխեք աշակերտներին: Եթե տարբերակված մեթոդը ընտրեցիք հարցաշարի համար, ապա որակական հետազոտության բաշխման մասին էլ հոգացեք: **Բաց չթողնե՛ք անհրաժեշտ պայմանը**. սկզբում խումբը պետք է համաձայնի համագործակցության կանոնների և օրակարգի, ավելի ճիշտ՝ դասի կամ դասերի կարգուկանոնի մասին, որովհետև այդ գործընթացը կշարունակվի նաև հաջորդ դասերին: Օրակարգում որպես անպայման պայման պետք է հասկացվի խմբի համար անհատական արդյունքները ներկայացնելը և նաև խմբի հետադարձ կապը, ինչպես նաև արդյունքների և երաշխավորությունների ամբողջականացումը և շնորհանդեսի համար պատրաստվելը: Ցանկալի կլինի, եթե դասը/երը, որ կհատկացվեն անհատական աշխատանքները ներկայացնելու-ամբողջականացնելու գործընթացին, դպրոցում առկա ավելի մեծ տարածությունում (հանդիսասրահ, դահլիճ, համակարգչային կենտրոն...) կայանան, որպեսզի խմբերը իրենց անկյունը ունենան աշխատելու համար: Եթե դրա հնարավորությունը չունեք, պարզ է, աշակերտներին խնդրում ենք դասասենյակի տարբեր անկյուններում տեղավորվեն և ցածրաձայն խոսեն:
Դուք այդ իրավիճակում մնում եք ֆասիլիտատորի դերում, հետևում եք անհատական ներկայացումներին և փոխգնահատման գործընթացին, որպեսզի այն բարյացակամության շրջանակներից դուրս չգա:
Այն դեպքում, եթե հետազոտության օրինախախտման ընտրության հարցում տարաձայնություն կլինի, հնարավոր է սկզբից ևեթ ընտրեք տարբեր մարտավարություն և խմբերը ստեղծեք հետազոտության հարցերի համաձայն, օրինակ՝ վաղ ամուսնության, աշխատանքային իրավունքների պաշտպանության մասին և այլն:

Ակտիվություն. Խմբային աշխատանք **(Այդ ակտիվությունը աշակերտի գրքում չունենք)**

Ավարտե՛ք համալիր առաջադրանքի վերջնական արդյունքի վրա աշխատանքը. շնորհանդեսի համար պատրաստե՛ք հետազոտության ամբողջականացման արդյունքները և երաշխավորությունները:

Հանձնարարական ուսուցչին. Հետազոտողների խմբերի աշխատանքը սկսելուն պես և շնորհանդեսին պատրաստվելու ժամանակ աշակերտներին խնդրեք վերհիշեն համալիր առաջադրանքի (առաջին փուլում) ծանոթության դասի ժամանակ հստակեցված հետազոտության հաշվետվության կառուցվածքը, մատնանշեք, որ կարող են գիտության և փորձի հիման վրա ավելի բարելավել հետազոտության հաշվետվության կառուցվածքը և պլանը և համարժեք տեսք տան աշխատանքին: Հիշեցնենք նաև առաջադրանքի գնահատման չափանիշները: Խմբերում աշխատանքի բոլոր փուլերում հիշեցնենք աշակերտներին, որ ընդգրկվածությունը պետք է լինի հավասարաչափ և բոլորի համար հնարավոր:
Նաև խորհուրդ տվեք՝ շնորհանդեսի ժամանակ հաշվի առնել իրենց արդեն լավ հայտնի ախտորոշիչ հարցերը:

Համալիր առաջադրանքի կատարման գործընթացը ներառում է երկու փուլ՝ անհատական և խմբային, ինչը տալիս է

հնարավորություն աջակցել այնպիսի **գործառնական՝ ֆունկցիոնալ ունակության** զարգացմանը, ինչպիսին է **համագործակցությունը:** Ակտիվությունը ամփոփելիս այդ գործընթացի մասին Ձեր առաջադրած հարցերով՝ աշակերտներին նույնպես պետք է մտածել տաք, թե իրենք ի՞նչ ապրումներ ունեցան ակտիվության գործընթացում: Նրանց ապրումները՝ արդյունքի համար հաշվետու լինելու տեսակետից, ո՞ր մակարդակում էին գերակշռում՝ անհատակա՞ն, թե՞ խմբային, թե՞ հավասարաչափ էին: Ձեր կարծիքով, ո՞րն է ավելի արդարացված և ինչո՞ւ:

Ուշադրությո՛ւն:
Համալիր առաջադրանքի գնահատման գործիք, դիտե՛ք Հավելված 2, էջ 76

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի կողմից առաջադրված հարցեր՝ կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք տանելու համար

- Նկարագրի՛ր, ինչպես է ընթանում/տարվում առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:
- Բացատրիր՝ տրված հետազոտության հաշվետվությունը ի՞նչ նպատակի է ծառայում:
- Ի՞նչ հարցի վերլուծությանն են ուղղորդում քո հասակակիցների ներկայացրած արդյունքները և հանձնարարականները:
- Ի՞նչ հարցի մասին արտահայտեցիր քո գիտելիքը համալիր առաջադրանքի միջոցով:
- Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:
- Ի՞նչը օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:
- Ի՞նչը կփոխեիր, եթե նորից կատարեիր առաջադրանքը: Ինչո՞ւ:

Միջանկյալ նպատակ 3.

Միջանկյալ նպատակի կառուցվածք

Հիմնական հարց	**Արդյունք**	**Քննարկվելիք դեպք/օրինակ**	**Հանգուցային հարց**	**Դասագիրք/օժանդակ ռեսուրսներ**
Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներ	**Հոդված/պոստ**	Իրավական մշակույթի ակտորներ	Ովքե՞ր են իրավական մշակույթի ակտորներ և ինչպե՞ս կարող են ակտիվ քաղաքացիներին, խմբերին ընդգրկել իրավական մշակույթի դիտարկման/բարելավման գործում:	Պարագրաֆ 8. Դատական իշխանություն, էջ 88 Պարագրաֆ 9. Նույնական դատական գործընթաց երդվյալ ատենակալների մասնակցությամբ, էջ 103

Թիրախային հասկացության հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ.	**Գնահատման չափանիշներ** Աշակերտը կարող է.	**Համալիր առաջադրանքի առնչությամբ կոնկրետացված** աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսում ընդգծված ներկայացրեք.
քաղաքացիական մասնակցություն 1. Ժողովրդավարական հասարակությունը քաղաքացիական հասարակություն է, որը բաղկացած է ակտիվ քաղաքացիներից: 2. Քաղաքացիական մասնակցությունը հասարակական կարիքների/երկրի մասին հոգատարության միջոց է: 3. Ակտիվ քաղաքացիները տարբեր ճանապարհներով (սոցիալական նախագծերի	• կոնկրետ օրինակների վրա հենվելով, քաղաքացիական մասնակցության նշանակությունը և կարիքները հիմնավորել, քաղաքացիական մասնակցության իրավիճակին հարմարեցված ձև ընտրել **(Կ.պատ.1,2.),** • կոնկրետ տեղային սոցիալական հիմնախնդիրների լուծման մեջ սեփական ներդրումը կատարել **(Կ.պատ.3.),**	• Ինչո՞ւ է անհարժեշտ, որ հասարակությունն ունենա տեղեկատվություն իրավական մշակույթի ակտորների գործառույթ-պարտականությունների և դրանց առջև առկա մարտահրավերների մասին: **(Կ.պատ.1,2.)** • Ինչպե՞ս (ի՞նչ ձևով), ո՞ւմ հետ համագործակցությամբ կարող են քաղաքացիները հոգալ/ազդեցություն ունենալ ակտորների առջև ծառացած

պլանավորմամբ-իրականացմամբ, կամավորական գործունեությամբ, փաստաբանությամբ, լոբբիացմամբ) հոգում են հասարակական հիմնախնդիրների կարգավորման մասին: Այդ ժամանակ նրանք համագործակցում են միմյանց, հասարակական ինստիտուտների, ոչ կառավարական կազմակերպությունների, պետական կառուցվածքների հետ: 4. Քաղաքացիական մասնակցության ժամանակ կարևոր է՝ այլ անձանց շահերը ի նկատի ունենալ: 5. Քաղաքացիական մասնակցությունը բացառում է բռնության արարքները:	• այն գործոնները վերլուծել, որոնք անպայմանորեն պետք է նախատեսված լինեն քաղաքացիական մասնակցության գործընթացում **(Կ.պատ.4,5.)**	երկընտրանքները հաղթահարելու հարցում: Ինչո՞ւ է դա կարևոր: Բերե՛ք օրինակներ: **(Կ.պատ.3.)** • Ինչո՞ւ է կարևոր, որ քաղաքացիական ակտիվությունները-ում և հոդվածում պաշտպանված լինեն այլոց իրավունքները և բացառվի բռնությունը: **(Կ.պատ.4.5.)**

Համալիր առաջադրանքի պայման.

Իրավական մշակույթը բարձրացնելու համար դուք, որպես քաղաքացի-լրագրողներ, որոշեցիք պատի թերթ/բլոգեր ստեղծել: Այդ նախագծի նպատակն է անչափահասների իրազեկումը իրավական մշակույթի ակտորների մասին, նրանց առջև առկա երկընտրանքների և քաղաքացիական ակտիվության հնարավորությունների մասին: Իրավական մշակույթի ակտորներից (դատարան, միջազգային կազմակերպություններ, ոչ կառավարական կազմակերպություններ, քաղաքացիներ) ընտրեք մեկը և պատրաստեք **հոդված/պոստ (250-300 բառ)** իրավական մշակույթի արմատավորման մեջ այդ ակտորի դերի, նրա առջև ծառացած երկընտրանքների և դրանց արձագանքելու հնարավորությունների մասին:

Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրեք.

- Ինչո՞ւ է անհրաժեշտ, որ հասարակությունն ունենա տեղեկատվություն իրավական մշակույթի ակտորների գործառույթ-պարտականությունների և նրանց առջև առկա մարտահրավերների մասին: **(Կ.պատ.1,2.)**

- Ինչպե՞ս (ի՞նչ ձևով), ո՞ւմ հետ համագործակցությամբ կարող են քաղաքացիները հոգալ/ազդեցություն գործել ակտորի առջև առկա երկընտրանքները հաղթահարելու վրա: Ինչո՞ւ է դա կարևոր: Բերե՛ք օրինակներ: **(Կ.պատ.3.)**
- Ինչո՞ւ է կարևոր քաղաքացիական ակտիվություններում և հոդվածում պաշտպանված լինեն այլոց իրավունքները և բացառվի բռնությունը: **(Կ.պատ.4, 5.)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլեր (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I – Ծանոթություն համալիր առաջադրանքի պայմանին

Ռեսուրսներ/քննարկվելիք քեյսեր.

- **Ռեսուրս 1.** Դասագիրք, Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներ, համալիր առաջադրանքի պայման, էջ 88
- **Ռեսուրս 2** . ա) Ինչպե՞ս պատրաստենք հոդված:
  բ) Ինչպե՞ս է գրվում հոդվածը https://www.living-democracy.com/ge/textbooks/volume-3/part-3/unit-7/student-handout-6
  գ) Ինչպե՞ս գրենք հոդված: Դիտե՛ք Հավելված 5, էջ 82

<u>Համալիր առաջադրանքի պայմանի իմաստավորմանը կողմնորոշված հարցեր</u>.

- Ի՞նչ է հոդվածը: Այլ ժամանակ աշխատե՞լ եք, արդյոք, նման արտադրանքի վրա: Ի՞նչն էր հեշտ, ի՞նչն էր դժվար:
- Ի՞նչ ընդհանուր և տարբերիչ բնութագրիչներ ունեն հոդվածը և պոստը:
- Ի՞նչ նպատակ ունի հոդվածը: Ի՞նչ արդյունքի կարելի է հասնել հոդվածի միջոցով:
- Ինչպե՞ս կպլանավորեք ձեր հոդվածի/պոստի բովանդակությունը:
- Ինչպիսի՞ կառուցվածք կունենա հոդվածը/պոստը:
- Դուք ի՞նչ նշանի համաձայն եք ընտրում ընթերցելիք հոդվածը/պոստը:

- Ի՞նչ պետք է ի նկատի ունենաք, որպեսզի ձեր մեդիաարտադրանքը ավելի շատ հետաքրքրություն առաջ բերի, համոզիչ լինի:
- Կարիք կլինի՞, թե՞ ոչ հոդվածի/պոստի սկզբնական տարբերակը ընթերցել-ուղղել:
- Ինչպիսի՞ վերնագիր կընտրեք:
- Ի՞նչ կարելի է օգտագործել հոդվածը/պոստը տեսողական նյութով ձևավորելու համար:

Համալիր առաջադրանք

- Ձեր բառերով ձևակերպե՛ք, ինչի՞ն է վերաբերում այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատեք մի քանի դասի ընթացքում:
- Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք այլ ժամանակ, արդյոք, կատարե՞լ եք:

Փուլ II – Համալիր առաջադրանքի վրա աշխատանք

Թիրախային հասկացություն – Քաղաքացիական մասնակցություն **Ենթահարց.** Իրավական մշակույթի ակտորներ

Քայլ 1. Ինչո՞ւ է անհրաժեշտ հասարակությունն ունենա տեղեկատվություն իրավական մշակույթի ակտորների գործառույթ-պարտականությունների և նրանց առջև առկա մարտահրավերների մասին: (Կ.պատ.1,2.)

Ռեսուրս. Աշակերտների պատմած պատմություններ

Ակտիվություն. փոքր բանավեճ **(Այդ ակտիվությունը աշակերտի գրքում չունենք)**

Հարցեր.

- Վերհիշե՛ք պատմություն, երբ դուք կամ ձեր ծանոթը հայտնվեցիք վիճելի իրավիճակում, գիտեիք, որ ձեր իրավունքները խախտվում են, բայց չգիտեիք՝ ինչպես վարվեիք, որտեղ և ում դիմեիք կամ հակառակը՝ գիտեիք և դիմեցիք:
- Ի՞նչ էիք զգում առաջին դեպքում. շփոթվածություն, մոլորվածություն, անօգնականություն, զայրույթ:
- Ինչպե՞ս պարզաբանեցիք՝ ի՞նչ պետք է անեիք: Ո՞ւմ դիմեցիք:
- Երկրորդ դեպքում. որտեղի՞ց ունեիք տեղեկատվություն, թե այդպիսի ժամանակ ո՞ւմ պետք է դիմեք:
- Ճիշտ վարվեցի՞ք: Ինչո՞ւ եք այդպես մտածում:

- Ինչպե՞ս կվարվեք, եթե փողոցում ոստիկանը կանգնեցնի և մեղադրի որևէ հանցավոր արարքի համար:
- Ո՞ւմ հետ կկապվեիք: Ո՞վ պետք է պաշտպանի ձեր իրավունքները և ինչպե՞ս:

Հանձնարարական ուսուցչին. Այդ ակտիվությունը նախորդ գիտելիքը վերհիշելու և հարցի նշանակության մասին դատողության հարուցման նպատակով է կատարվում: Կարող եք կիրառել իրավիճակներ, որոնք աշակերտներին կհետաքրքրեն, կարդաք իրավիճակը և խնդրեք անվանել՝ ո՞ր արարքն է օրինական և ո՞րը՝ անօրեն: Ճիշտ պատասխանը տրված է փակագծերում: **Դիտեք՝ Հավելված 6 , էջ 83**

Ռեսուրս. Դասագիրք, Դատական իշխանություն, էջ 89
Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Արդարադատության սկզբունքներ https://bit.Iy/3o3Ir4H
Ես, դատավոր... https://bit.Iy/3yOIYvn
Ռութ Գինսբուրգի պատմությունը https://bit.Iy/#PszQmG
Դատավոր Ֆրենկ Կապրիո https://bit.Iy/3IHgVCu
Արդարադատ դատարան արժանապատիվ դատավոր https://bit.Iy/3IEiSzC

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 89
Հարցեր.

- Ծանոթացե՛ք ստորև տրված պատմությանը և պատասխանե՛ք հարցերին.
- Ինչպե՞ս կգնահատեք գործի ընթացքը: Ի՞նչ փաստարկ կօգտագործեք Վրաստանի դատարանին (ստորև տրված կոնկրետ դեպքի համաձայն) աջակցության համար:
- Ինչո՞ւ են Վրաստանի դատարանի և ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի որոշումները տարբեր: Նկատի՛ ունեցեք, որ երկու դեպքում էլ միևնույն ապացույցներն էին քննարկվում:
- Ինչի՞ հիման վրա ՄԱԿ-ի իրավունքների կոմիտեն ընդունեց երեխային աջակցության որոշում:
- Ուշադրությամբ ծանոթացե՛ք ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի որոշումներին և ձևակերպե՛ք՝ ի՞նչ բնորոշիչներ պետք է ունենա լավ դատարանը: Ի՞նչ կավելացնեիք:
- Ինչո՞ւ է կարևոր հետաքննության արագությունը և արդյունավետությունը, որին հետևում է դատավճռի՝ ժամանակին կայացումը: Ի՞նչ բացասական պատճառներ կարող են հետևել ժամանակի մեջ ձգձգված դատավճռին:

- Ինչպե՞ս կգնահատեիք քննիչի իրավասությունը:
- Համեմատե՛ք այդ իրավիճակը նախորդ դասի ժամանակ քննարկված ՍԿՈՒ անձի դատավճռի հետ: Այն դեպքում հայցվոր ՍԿՈՒ անձը, օրենքի վրա հիմնվելով, չէր կարողանում ստանալ համապատասխան օգնությունը և դա միայն դատական ճանապարհով կարողացավ: Ի՞նչ եզրակացություն կարող եք կատարել:
- Արդյոք դատավորի անձնական հատկանիշները կարևո՞ր են դատավճիռ կայացնելիս:
- Որքանո՞վ կարևոր է միջազգային արդարադատության գոյությունը և մատչելիությունը ժողովրդավարական պետության քաղաքացիների համար:
- Գտնո՞ւմ եք, որ ֆիզիկական պատիժը բռնության ձև է: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Ձեր կարծիքով, այդ միջադեպի պատճառով արժե՞ր այդքան ջանք գործադրել:
- Արդյոք օրինակա՞ն է ֆիզիկական պատիժը:
- Կարելի՞ է երեխայի ընտանիքը անվանել իրավական մշակույթ ունեցող: Պատասխանը հիմնավորե՛ք:

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 94

Ծանոթացե՛ք ստորև տրված գործին և պատասխանե՛ք հարցերին.

- Ինչո՞ւ ձերբակալեցին կապիտան Բերիձեին:
- Ինչո՞վ փոխարինվեց նախկին մեղադրանքը:
- Խախտվե՞ց, թե՞ ոչ անմեղության կանխավարկածը Բերիձեի նկատմամբ: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Որքանո՞վ օժանդակեց մեդիան մեղադրյալի հանդեպ հասարակության շրջանում բացասական վերաբերմունքի առաջացմանը:
- Ինչպե՞ս կգնահատեիք հասարակական կարծիքը երկու մասի բաժանվելու փաստը: Դրանցից որի՞ վարքը կարելի է անվանել արդարացի:

  Ո՞ր ատյաններն անցավ Բերիձեի գործը և ի՞նչ արդյունքով:
- Վերհիշեք՝ ի՞նչ նախապայման գոյություն ունի մինչև մարդու իրավունքների եվրոպական դատարան հայտ ներկայացնելը: Ի՞նչ տիպի գործեր է քննարկում Ստրասբուրգի դատարանը:
- Վերհիշե՛ք մոտակա օրինակներ, երբ քաղաքացին Ստրասբուրգի դատարանում հաղթեց պետությանը կամ Վրաստանի պետությունը շահեց գործը այլ պետության նկատմամբ:
- Գտնո՞ւմ եք, թե՞ ոչ մարդու իրավունքների եվրոպական դատարանի գոյությունը որպես միջազգային ձեռքբերում՝ իրավական մշակույթի տեսակետից:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 96

Հարցեր.

- Ծանոթացե՛ք դասագրքում տրված տեղեկատվությանը դատական իշխանության մասին, դատեցե՛ք.
- Անհրաժե՞շտ է, թե՞ ոչ քաղաքացիները, այդ թվում՝ նաև անչափահասները տիրապետեն դատական իշխանության էությանը և գործառույթների մասին տեղեկատվությանը: Ինչո՞ւ:
- Ձեր զննումներով, շրջապատում գտնվողները գիտե՞ն այդ տեղեկատվությունը:
- Որտեղի՞ց կարող են քաղաքացիները գիտենալ իշխանության այդ ճյուղի գործառույթների մասին:
- Վերհիշեք օրինակը, երբ ձեր ծանոթին հարկ է եղել դատարանի հետ հարաբերություն ունենալ: Ի՞նչ դեպք էր: Ո՞վ օգնեց:
- Անհրաժե՞շտ է, թե՞ ոչ ակտիվ քաղաքացիները անձամբ հոգան այդ առնչությամբ գիտակցության բարձրացման մասին: Ինչպե՞ս:
- Ի՞նչն էր ամենակարևորը՝ այն, ինչը դուք հասկացաք և ցանկանում եք այդ մասին կիսվել մյուսների հետ ձեր հոդվածում, թե՞ որպես ակտորներ կընտրեք քաղաքացիներին: Գուցե կընտրեք մեդիա՞ն:
-

Ակտիվություն. Ամփոփում

Քայլի վերջում ակտիվացրեք համալիր առաջադրանքին կողմնորոշված հարցերը.

- **Իրավական մշակույթի ո՞ր ակտորների մասին ստացաք տեղեկատվություն և դատողություն արեցիք:**
- **Ի՞նչ տեղեկատվություն և եզրակացություններ հարմար կլինեն այդ ակտորներին և դրանց առջև ծառացած երկընտրանքները բնութագրելու համար:**
- **Էլի որտե՞ղ կարող եք որոնել լրացուցիչ տեղեկատվություն:**

Հանձնարարական ուսուցչին. Կոնստրուկտիվիզմի սկզբունքները նկատի ունենալով, աշակերտների նախորդ և նոր գիտելիքի ամբողջացման մեջ, գիտելիքների կազմակերպման գործում կօգնի ստորև տրված աղյուսակի աստիճանաբար լրացումը: Այն համալիր առաջադրանքի վրա աշխատանքի տարբեր քայլերով նոր տեղեկատվությամբ կլրացնեն, ինչը հնարավորություն կտա յուրաքանչյուրին ամրապնդել գիտելիքը, համեմատել ակտորների բնութագրիչները, փոխառնչությունները: Իսկ եզրակացությունները օգտագործել նաև հոդվածում վերլուծության համար: Դրանով մենք կարձագանքենք նաև սովորել սովորելու գործընթացին և հանգուցային իրավասություններին: Եթե աղյուսակը մշակենք և մեծ թերթի կամ սլայդի վրա փոխադրենք, **իրավական մշակույթի ակտորների** հարցի ուսուցման լավ ռեսուրս կունենանք:

Ակտոր	Գործառույթ-պարտականություններ	Գործունակություն	Գործունեության հետ կապված երկընտրանքներ	Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ և ինչպե՞ս քաղաքացիական հասարակությունը
Ընդհանուր դատարան				
Միջազգային կազմակերպություններ (Ստրասբուրգ)				
Երդվյալ ատենակալներ				
Ոչ կառավարական կազմակերպություններ				
…				
…				

Քայլ 2. Ինչպե՞ս (ի՞նչ ձևաչափով), ո՞ւմ հետ համագործակցությամբ կարող են քաղաքացիները հոգածություն/ազդեցություն ունենալ ակտորի առջև առկա երկընտրանքները հաղթահարելու գործում: Ինչո՞ւ է դա կարևոր: Բերե՛ք օրինակներ: **(Կ.պատ.3.)**

Ռեսուրս. Դասագիրք, Դատական իշխանություն, էջ 99

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 99

- Ծանոթացե՛ք ստորև տրված Թոմաշի գործին և պատասխանեք հարցերին.
- Ինչո՞ւ դիմեց հայցվորը այդքան դատական ատյանների, երբ հյուրանոցի համար վճարվելիք տուգանքը այնքան էլ մեծ չէր:

- Քանի՞ ատյանում տեղի ունեցավ դատական վարույթը և ինչպիսի՞ հաջորդականությամբ:
- Ի՞նչ փաստարկների վրա հենվելով՝ սահմանադրական դատարանը արդարացրեց իր երկրի քաղաքացուն:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է անհրաժեշտ դառնում ժողովրդավարական երկրում հասնել մինչև սահմանադրական դատարան:
- Արդյոք, ունի՞ իրավիճակի հերոսը իրավական մշակույթ:

Ակտիվություն. Վերհիշե՛ք, էջ 101
Հարցեր.
Վերհիշե՛ք իշխանության ճյուղերը և ստորև տրված սխեմայի օգնությամբ պատասխանեք հարցերին.

- Ո՞ր ինստիտուցիաներն են մտնում իշխանության յուրաքանչյուր ճյուղի մեջ. գործադիր, օրենսդիր, դատական:
- Որո՞նք են անկախ ինստիտուցիաներ:
- Ու՞մ է ընտրում քաղաքացին:
- Ու՞մ է ընտրում խորհրդարանը:
- Ու՞մ է նշանակում նախագահը:
- Ո՞ւմ թեկնածություններն է նախագահը ներկայացնում խորհրդարանին:
- Ինչպե՞ս է ձևավորվում նախարարների կաբինետը:
- Քանի՞ անդամ է սահմանադրական դատարանում:
- Դատավոր նշանակելու համար հարկավո՞ր է, թե՞ ոչ որևէ մեկի կողմից ներկայացնելը, այսինքն՝ երաշխավորություն:

Ակտիվություն. Վերհիշե՛ք, էջ 102
Հարցեր.
- Վերհիշե՛ք, ո՞ւմ կարող է դիմել քաղաքացին, եթե նրա երկիրը չի կարող իր նկատմամբ ապահովել մարդու իրավունքների համարժեք պաշտպանություն:
- Ի՞նչ գործառույթ է ստանձնել մարդու իրավունքների եվրոպական (Ստրասբուրգի) դատարանը:
- Ո՞ր փաստաթղթի վրա հենվելով է Ստրասբուրգի դատարանը իրականացնում արդարադատություն:
- Ո՞վ և ի՞նչ դեպքում կարելի է դիմել Ստրասբուրգի դատարան:
- Ինչպե՞ս կընթանա գործընթացը, եթե հայցը ընդունվի:
- Ինչպե՞ս է իրականացվում մոնիթորինգ դրա կատարման վրա:

Առաջադրանք, էջ 102
Հանձնարարական ուսուցչին. Աշակերտի առաջադրանքին կցված է այս հրահանգը. «Հաջորդ դասի համար պլանավորվում է նմանակված դատավարության անցկացում երդվյալ ատենակալների մասնակցությամբ: Ստորև տրված հղումի կիրառմամբ դիտե՛ք «Երդվյալ ատենակալներ» գեղարվեստական ֆիլմի երեք սերիա (ցանկության դեպքում կարող եք բաժանել սերիաները և մինչև նմանակված դատավարության սկսվելը՝ 5-րոպեանոց շնորհանդես անցկացնել), թեև կարծում ենք ֆիլմի նկատմամբ հետաքրքրությունը սերիաների բաժանման կարիք քիչ առաջացնի: Եթե ֆիլմը դիտելու հնարավորություն չունեն աշակերտները, ապա նախապես խնդրեք բացեն երդվյալ ատենակալների դատարանի մասին 9-րդ դասարանում անցած տեղեկատվությունը:

Ֆիլմ «Երդվյալ ատենակալներ», առաջին սերիա https://bit.ly/3cy.fkD3
Ֆիլմ «Երդվյալ ատենակալներ», երկրորդ սերիա https://bit.ly/3z3dRvQ
Ֆիլմ «Երդվյալ ատենակալներ», երրորդ սերիա https://bit.ly/3aTneGM

Ռեսուրս. Դասագիրք, նմանակված դատավարություն երդվյալ ատենակալների մասնակցությամբ, էջ 103
Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Տեղեկատվություն Երդվյալ ատենակալների մասին https://bit.ly/3zq2wHW
Նմանակված դատավարության Գործ XIII պարեկ տեսուչի նկատմամբ անհնազանդություն https://bit.ly/3B9HYok
Դատավարության ժամանակ հաղորդակցության ընդհանուր սկզբունքներ https://bit.ly/3OrkRIR

Ակտիվություն. Վերհիշե՛ք, էջ 103
Հարցեր.

- Ի՞նչ գործառույթ-պարտականություն է կատարում երդվյալ ատենակալը դատարանում:
- Ի՞նչ տեսակ գործեր քննարկելու հնարավորություն ունեն նրանք:
- Ո՞վ կարող է ընտրվել երդվյալ ատենակալ: Ո՞վ չի կարող:
- Գտնո՞ւմ եք, թե՞ ոչ երդվյալ ատենակալի ինստիտուտը որպես ժողովրդավարական երևույթ:
- Երդվյալ ատենակալությունը ներկայացնո՞ւմ է, թե՞ ոչ քաղաքացու ուղղակի մասնակցության ձև արդարադատության մեջ: Ինչո՞ւ:

Ակտիվություն. Նմանակված դատարան, էջ 104
Նմանակված դատական գործընթաց անցկացնելու համար ծանոթացե՛ք կազուսին (էջ 104-116), բաժանե՛ք դերերը և կատարե՛ք դատական գործընթացի նմանակում: Բացի գործում ներկայացված դեմքերից ընտրե՛ք երդվյալ ատենակալներ 12 աշակերտի կազմով:

Հանձնարարական ուսուցչին. Նախ և առաջ Դուք եք որոշելու այդ ակտիվությունը անցկացնել-չանցկացնելը: Եթե որոշեք, դերերը Դուք բաշխեք: Աշակերտների թվի համաձայն սահմանեք երդվյալ ատենակալների քանակը կամ այլ դերեր, որպեսզի բոլորը լինեն ընդգրկված: Փոքրաթիվ դասարանում կրճատե՛ք ատելակալների քանակը, յուրաքանչյուր աշակերտի տվեք 2 կամ ավելի դեր: Վերջում օգնեք աշակերտներին դուրս գալու դերից՝ թեկուզև որևէ պարզ, ուրախ ակտիվության (էներջայզերի) կատարմամբ: Եվս մի բան. մի՛ տրամադրվեք այն բանին, որ մոդելավորված դատարանը կվարեք անսխալ: Կլինեն թերություններ, հնարավոր է՝ նաև սխալներ, բայց աշակերտները կստանան գլխավոր տեղեկատվությունը, թե որքան կարևոր և պատասխանատու գործընթաց է արդարադատությունը, որքան գիտելիք, բարեխղճություն և նրբազգացություն է անհրաժեշտ արդարացի որոշումներ ընդունելու համար և ինչպիսին է մեր՝ քաղաքացիներիս դերը այդ գործընթացում: Գլխավորը՝ ճիշտ այդ հարցերի մասին մտածելը և դրանց իմաստավորումն է:

Ակտիվություն. Աշխատեք խմբերում (**Այս ակտիվությունը աշակերտի գրքում չկա)**

Կազմենք 4 խումբ, նախապես ասում եք աշակերտներին, որ իրենք պետք է աշխատեն «Արդարացիության և ինստիտուցիաների հաստատման քաղաքացիական լծակներ» շնորհանդեսի վրա, որը պատրաստելիս՝ կարող եք օգտվել դասագրքից և նաև իրենց աղյուսակներից ակտորների մասին, հատկապես դրա վերջին սյունակի գրառումից:

Շնորհանդեսում պետք է արտացոլեն.

1. Ի՞նչ կարող են անձամբ արդարացիության համար պատասխանատու ինստիտուցիաները: Համագործակցության հնարավորություններ:

2. Ի՞նչ կարող են քաղաքացիները: Համագործակցության հնարավորություններ:

3. Ի՞նչ կարող են ոչ կառավարական կազմակերպությունները, մեդիան: Համագործակցության հնարավորություններ:

4. Ի՞նչ կարող են միջազգային կազմակերպությունները: Համագործակցության հնարավորություններ:

Հանձնարարական ուսուցչին. Այս ակտիվության ժամանակ խմբերում բաժանեք հարցերը, եթե «կանգառներով ուսուցման» մեթոդով պտտեք յուրաքանչյուր հարցը՝ բոլոր խմբերը պետք է աշխատեն բոլոր հարցերի վրա: Դա Դուք պետք է որոշեք: Գլխավորն է՝ դասարանը դատողություն անի այն մասին, թե ինչպես կարող են բոլոր ակտորները մասնակցել այդ գործընթացին:

Առաջադրանք
Հարցեր
Պատրաստեք շնորհանդես. «Ես իրավական մշակույթ ունեցող քաղաքացի եմ»: Շնորհանդեսում ներկայացրեք.

- Ի՞նչ հատկություններ պետք է ունենա իրավական մշակույթ ունեցող քաղաքացին:
- Դրանցից ի՞նչ հատկություններ ունեք Դուք:
- Էլի ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի այդ անվանումը իրավամբ համապատասխանի:
- Ի՞նչ կարող եք անել՝ որպես աշակերտ, ձեր շրջապատում մարդկանց գիտակցությունը այդ տեսակետից բարձրացնելու համար:

Քայլ 3. Ինչո՞ւ է կարևոր քաղաքացիական ակտիվությունում և հոդվածում պաշտպանված լինեն այլոց իրավունքները և բացառվի բռնությունը: **(Կ.պատկ. 4.5.)**

Ակտիվություն. Առաջադրանքի հարցում-բանավեճ

Ակտիվություն. Հարց-պատասխան, բանավեճ

- Ինչպե՞ս եք ցանկանում վարվեն ուրիշները:
- Ի՞նչ եք կարծում, նույնը ցանկանո՞ւմ են նաև ուրիշները:
- Արդարության համար հնարավո՞ր է անարդար/բռնության ճանապարհներ կիրառել:
- Ինչպե՞ս պետք է վարվի մեդիան:
- Հնարավո՞ր է նա՝ մեդիան, բռնության կամ զրպարտիչ միջոցների դիմի:
- Խիստ քննադատությունը հնարավո՞ր է կոռեկտ ձևով, առանց վիրավորանքի:
- Որքանո՞վ է կոնստրուկտիվ հաղորդակցությունը ընդարձակում այն բանի հնարավորությունը, որ ընդդիմախոսին տրամադրենք համագործակցության:

Ակտիվություն. Գործնական աշխատանք
Աշակերտներին հանձնարարում ենք ընտրել հոդվածի թեմա և կազմել հավանական պլան, ցանկացողները ներկայացնում են պլանը և ուրիշները տալիս են հետադարձ կապ: Համաձայնում են պլանի լավատեսական տարբերակի հետ, որը կիրառում

են ցանկացողները: Դա չի նշանակում որևէ մեկի օրիգինալ հոդված պատրաստելու հնարավորությունը սահմանափակել:

Ուշադրությո՛ւն:
Համալիր առաջադրանքի գնահատմանը նպաստող գործիք, դիտե՛ք Հավելված 3, էջ 78

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի կողմից առաջադրված հարցերը կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք տանելու համար

- Նկարագրիր, ինչպես է ընթանում/ընթացավ առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:
- Բացատրիր, տրված հոդվածը ի՞նչ նպատակի է ծառայում:
- Ի՞նչ հարց վերլուծելու կողմն է ուղղորդում ընթերցողներին հոդվածի բովանդակությունը:
- Ի՞նչ հարցի մասին արտահայտեցիր քո գիտելիքը համալիր առաջադրանքի միջոցով:
- Ի՞նչ խոչընդոտի հանդիպեցիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:
- Ի՞նչը օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:
- Ի՞նչ կփոխեիր, եթե նորից կատարեիր առաջադրանքը: Ինչո՞ւ:

Միջանկյալ նպատակ 4

Միջանկյալ նպատակի կառուցվածք

Հիմնական հարց	**Արդյունք**	**Քննարկվելիք դեպք/օրինակ**	**Հանգուցային հարց**	**Դասագիրք/օժանդակ ռեսուրսներ**
Կայուն արդարության համար	Շնորհանդես (էլեկտրոնային/նյութական)	Կայուն զարգացման նպատակ 16: Խաղաղություն, արդարություն, ամուր ինստիտուցիաներ	Ինչո՞ւ է արդարության և ամուր ինստիտուցիաների մասին հոգացությունը հանդիսանում անվտանգ հեռանկարի երաշխիք: Ինչպե՞ս են գործում ինստիտուցիաները և քաղաքացիները գլոբալ նպատակների նկատառումով:	Պարագրաֆ 10. Անչափահասների հանցագործություն, էջ 119 Պարագրաֆ 11. Խաղաղություն, արդարություն, ամուր ինստիտուցիաներ, էջ 130 Պարագրաֆ 12. Դատավարական իրավունքներ, էջ 134 Պարագրաֆ 13. Հավասարություն և արդարացիություն, էջ 145

Թիրախային հասկացության հետ կապված կայուն պատկերացումներ	**Գնահատման չափանիշներ**	**Համալիր առաջադրանքի հետ կապված առնչությունների կոնկրետացում**
Աշակերտը պետք է գիտակցի, որ.	Աշակերտը կարող է.	Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրեք

Կայուն զարգացում 1.Ռեսուրսները օգտագործելիս՝ կարևոր է հաշվի առնել հասարակության շահերը և ապագայի հեռանկարը: 2. Տեղայնացված արարքներին հետևում են գլոբալ արդյունքներ (օրինակ՝ հոգածությունը շրջապատի մասին մեկ հայացքով սկսվում է աննշան գործողություններով (օր. աղբը ներքև չգցելը, պոլիէթիլենի տոպրակից հրաժարվելը)):	• Կոնկրետ դեպքում միմյանց կապել ռեսուրսները օգտագործելու հարցը, հասարակության տարբեր խմբերի հետաքրքրությունները և ապագայի հեռանկարը: **(Կ.պատկ. 1.)** • Տեղայնացված արարքները/սպառնալիքները կապել գլոբալ նպատակների/հիմնախնդիրների հետ: **(Կ.պատկ. 2.)**	• Ի՞նչ հնարավորություններ է անհրաժեշտ գործարկել և ինչպե՞ս մեր շրջապատում խաղաղություն և արդարացիություն հաստատելու համար, որպեսզի բոլորն ունենան սեփական և շրջապատի համար անվտանգ հեռանկարի զգացում: **(Կ.պատկ. 2.)** • Ում կողմից և ինչպիսի՞ քայլեր պետք է կատարել/չկատարել գլոբալ արդյունքների (Կայուն զարգացման 16-րդ նպատակ) հասնելու համար: Ինչո՞ւ եք այդպես կարծում: Խոսեք՝ օրինակներ բերելով: **(Կ.պատկ. 2):**

Համալիր առաջադրանքի պայման.

Պատկերացրե՛ք, որ հանդիսանում եք դպրոցական քաղաքացիական ակումբի առաջնորդներից մեկը և ակումբի անդամների (բազային աստիճանի աշակերտների) հետ պետք է զրուցեք Կայուն զարգացման 16-րդ նպատակի (դիտե՛ք տեղեկատվությունը և բաները, էջ 118) մասին: Պատրաստե՛ք **շնորհանդես** (էլեկտրոնային, նյութական), որտեղ այդ նպատակի նշանակության, առկա մարտահրավերների և հասնելու ճանապարհների մասին կոնկրետ օրինակների միջոցով կխոսեք:

Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ցույց տվեք.

- Ի՞նչ հնարավորությունների գործադրում է անհրաժեշտ և ինչպե՞ս՝ մեր շրջապատում խաղաղության և արդարության հաստատման համար, որպեսզի բոլորը՝ իրենք և շրջապատում գտնվողները, ունենան անվտանգ հեռանկարի զգացում**(Կ.պատկ. 1.):**

- Ո՞ւմ կողմից և ինչպիսի՞ քայլեր պետք է կատարվեն/չկատարվեն գլոբալ արդյունքների (Կայուն զարգացման 16-րդ նպատակ) հասնելու համար: Ինչո՞ւ եք այդպես մտածում: Զրուցե՛ք՝ օրինակներ բերելով: **(Կ.պատկ. 2.)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլեր (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I – Ծանոթություն համալիր առաջադրանքի պայմանին

Ռեսուրսներ/քննարկվելիք քեյսեր.

- **Ռեսուրս 1.** Դասագիրք, Կայուն արդարացիության համար, Համալիր առաջադրանքի պայման, էջ 117
- **Ռեսուրս 2.** Ինչպե՞ս պատրաստենք էլեկտրոնային շնորհանդես https://youtube.com/watch?v=QpyRozoDoUU

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.

- Ի՞նչ է իրենից ներկայացնում շնորհանդեսը: Ուրիշ ժամանակ աշխատե՞լ եք, թե՞ ոչ այդ արտադրանքի վրա: Ի՞նչն էր դժվար, ի՞նչն էր հեշտ:
- Այլ արտադրանքների (հոդված, պաստառ) հետ ընդհանուր կամ դրանցից տարբեր ի՞նչ բնորոշիչներ ունեն:
- Ի՞նչ նպատակ է հետապնդում շնորհանդեսը: Ի՞նչ արդյունքի կարելի է հասնել շնորհանդեսային թղթապանակի միջոցով:
- Ինչպե՞ս եք պլանավորում ձեր շնորհանդեսի բովանդակությունը:
- Ինչպիսի՞ կառուցվածք կունենա այն:
- Ինչպիսի՞ շնորհանդեսն է գրավում ձեր ուշադրությունը:
- Ի՞նչ պետք է նկատի ունենաք, որպեսզի ձեր արտադրանքը ավելի շատ հետաքրքրություն առաջացնի, համոզիչ լինի:
- Միջինը քանի՞ սլայդ պետք է լինի շնորհանդեսում, որպեսզի դիտողը հետաքրքրությունը չկորցնի:
- Ի՞նչ կարող եք օգտագործել սլայդները տեսողական նյութով ձևավորելու համար:

Համալիր առաջադրանք

- Ձեր բառերով ձևակերպեք, ինչի՞ն է վերաբերվում այսօր տրված առաջադրանքը, որի վրա մի քանի դասի ընթացքում պետք է աշխատեք:
- Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք արդյոք երբևէ կատարե՞լ եք:

Փուլ II – Համալիր առաջադրանքի վրա աշխատանք

Թիրախային հասկացություն – Կայուն զարգացման **ենթահարց**. Կայուն զարգացման նպատակ 16,

Քայլ 1.* Մեր շրջապատում խաղաղության և արդարացիության հաստատման համար ի՞նչ հնարավորություններ են անհրաժեշտ և ինչպե՞ս իրականացնել դրանք, որպեսզի բոլորն ունենան սեփական և շրջապատում գտնվողների անվտանգ հեռանկարի զգացում:

(Կ.պատկ. 1.),

Ռեսուրս. Դասագիրք, Անչափահասների հանցագործություն, էջ 119

Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Երեխան և արդարադատությունը https://bit.Iy/3PckeEI

Երեխաների իրավունքների օրենսգիրք – նշանակալից փուլ Վրաստանում բնակվող բոլոր երեխաների համար https://uni.cf/3zbirtr

Բացարկի և մեդիացիայի ծրագիրը Վրաստանում – Իրական պատմություն https://bit.Iy/3oa6C08

Աննայի պատմությունը – Մինչև 14 տարեկան տարիքի օրինազանցներ https://bit.Iy/3AWyYCO

revention Story – Beka and Lasha / Կանխարգելում – Բեքայի և Լաշայի պատմությունը, բացարկի ծրագիր https://bit.Iy/3AYSYEP

Uvenile Diversion-Me4diation Programme https://bit.Iy/3Or6ioN

Մինչև 14 տարեկան տարիքի օրինազանցներ https://bit.Iy/3O6MvKY

Անչափահասների արդարադատության միջազգային չափորոշիչներ https:bit.Iy/3IXyBi

Անչափահասների արդարադատության օրենսգիրք https://bit.Iy/3B9STOW

Հանցանքի կանխավարկած դեռահասների շրջանում https://bit.Iy/3B9c6ju

Թվային միջավայրում երեխայի անձնական տվյալների պաշտպանության ուղեցույց https://bit.Iy/3IZ5kPI

Որսորդը պետք է գիտենա: Օրենք որսորդության մասին https://bit.Iy/3cmjT35

(Սկսնակ) որսորդի դասագիրք /Օրենք որսորդության մասին https://bit.Iy/3aZyHEE

Բնապահպանության սկզբունքները https://bit.Iy/3c830ZQ

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 119

Հարցեր.

- Ծանոթացե՛ք ստորև տրված պատմությանը: Օգտվե՛ք որսորդության մասին տեղեկատվությունից և պատասխանե՛ք հարցերին.
- Ձեր կարծիքով, ո՞ր կանոնը/օրենքը/կարգավորումը խախտեցին ընկերները:
- Ունեի՞ն, թե՞ ոչ անչափահասները զենք կրելու իրավունք:
- Ունեի՞ն, թե՞ ոչ զենք կրելու իրավունք նրանց հայրերը:
- Տղաները գիտեի՞ն, թե՞ ոչ, որ որսագողությունը պատժվում է:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է գործում որսորդության օրենքը/կարգավորումները:
- Այն, արդյոք, իրականում զսպի՞չ մեխանիզմ է:
- Ինչո՞ւ չի կարելի ձկնորսություն պայթուցիկ միջոցների կիրառմամբ:
- Ինչո՞ւ որսորդության սեզոնն ունի օրենքի/կարգավորման տեսք և համապատասխան ժամկետներ:
- Ձեր կարծիքով, տղաները հանցանք գործեցի՞ն, թե՞ ոչ :
- Նրանք եթե գիտենային օրենքը (զենք կրելու, որսորդության, որսագողության մասին) և պահպանեին այդ օրենքները, պահպանված կլինե՞ր, թե՞ ոչ նրանց անվտանգությունը:
- Ի՞նչ տեղի կունենա մեր բնության հետ, եթե գոյություն չունենան շրջակա միջավայրի պահպանության օրենքները:
- Ձեր կարծիքով, ի՞նչ պատիժ կսահմանվի անչափահասներին և նրանց հայրերին: Ընդհանրապես կսկսվի՞, թե՞ ոչ հետաքննություն նշված գործով:
- Ի՞նչ գլխավոր տեղեկատվության կծանոթացնեիք սկսնակ որսորդին՝ որսորդության կանոնների և կարգավորումների մասին:
- Ի՞նչ նպատակի են ծառայում որսորդության տարբեր սահմանափակումները: Պատասխանը հիմնավորեք:
- Ո՞ր օրենքի պահպանությամբ էին գործում անչափահասները:
- Ի՞նչ պետք է արվի նման դեպքերի կանխարգելման համար:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 124

Կազմե՛ք 4 խումբ, երկու խումբն աշխատի առաջին իրավիճակի վրա, երկուսը՝ մյուսի երկուսի վրա: Պատասխանե՛ք հարցերին:

Ակտիվություն, Դատեցե՛ք, էջ 126

Հարցեր.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են պատանիները խախտում օրենքը:
- Ինչո՞ւ են նրանք հանցանք գործում:
- Ի՞նչ մոտիվներ և գործոններ են գործում այդ ժամանակ:
- Վերհիշե՛ք՝ ինչ է նշանակում բացարկի և մեդիացիայի ծրագիր: Ինչո՞ւ են դրանք ամենահաճախ գործադրվում անչափասների շրջանում:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 128

Կազմե՛ք 3 կամ 6 խումբ, բաժանե՛ք հարցերը: Տրված տեղեկատվության հիման վրա պատրաստե՛ք փոքր հանձնարարականների թվարկություն ըստ հարցերի, և ծանոթացրե՛ք դասարանին:

Ակտիվություն. Ամփոփում

Հարցեր.

- Ինչո՞ւ է արդարադատությունը նկատի առնում անչափահասների լավագույն շահերը:
- Կապվո՞ւմ է, թե՞ ոչ այդ մոտեցումը կայուն զարգացման նպատակների հետ: Ինչպե՞ս:
- Օրինազանց դեռահասի զարգացման ապագա հեռանկարի մասին հոգածությունը արդյոք հանդիսանո՞ւմ է հոգածություն քաղաքացիական անվտանգության մասին: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս է պատասխանում անչափահասների արդարադատությունը արդարադատության սկզբունքին: Կապակցե՛ք 16-րդ նպատակի ուղղությունների հետ:

Ռեսուրս. Դասագիրք, խաղաղություն, Արդարադատություն, Ամուր ինստիտուցիաներ, էջ 130

Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Նախագահները Ամերիկայի պատմությունում, որոնց հայտարարվեց իմպիչմենտ https://bit.Iy/3Sd7WNr

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 130

Ծանոթացե՛ք ստորև տրված պատմությանը և պատասխանե՛ք հարցերին.

- Ի՞նչ գործեց նախագահ Նիքսոնը, որը խախտեց այնպիսի ամուր ինստիտուցիան, ինչպիսին ԱՄՆ-ի նախագահի ինստիտուտն է:

- Ինչի՞ հետ է կապվում այդ օրինախախտումը/օրինախախտումները: Ո՞ր պետական ինստիտուտները անցկացրին հետաքննություն նախագահի դեմ:
- Ի՞նչ որոշում ընդունեց գերագույն դատարանը:
- Ինչո՞ւ բարձրացավ նախագահ Նիքսոնի իմպիչմենտի հարցը: Ինչպիսի՞ արձագանք հետևեց դրան Նիքսոնի կողմից:
- Ինչպե՞ս վերաբերվեց նախկին նախագահին նոր նախագահ Ֆորդը:
- Ինչո՞ւ է Նիքսոնի հրաժեշտի ելույթը ուշագրավ և զղջում պարունակող: Ի՞նչ եք կարծում, ինչ նկատի ուներ նախագահը:
- Ինչպե՞ս է արձագանքում պետությունը մի մարդու, թեկուզև նախագահի սխալին/հանցանքին, երբ պետական ինստիտուտները աշխատում են պարզ և արդարացիորեն:
- Ինչպե՞ս կկապակցեք Ուոթերգեյթի սկանդալը կայուն զարգացման 16-րդ նպատակի հետ (դիտե՛ք՝ էջ 118, 132):

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 133

Ստեղծեք 4 խումբ, կայուն զարգացման 16-րդ նպատակին հասնելու խնդիրներից ընտրե՛ք 1 կամ 2 խնդիր, խմբում դատողությո՛ւն արեք ստորև առաջարկված հարցերի համաձայն, և ներկայացրե՛ք խմբի ընդհանուր կարծիքները:

- Ի՞նչ հարցեր է պարունակում այդ խնդիրը: Ի՞նչ գիտեք այդ հարցերի մասին:
- Ի՞նչ վիճակ է այդ ուղղությամբ մեր երկրում: Անվանե՛ք ուժեղ և թույլ կողմերը:
- Կապակցե՛ք դասագրքից որևէ իրավիճակի հետ, կյանքի հետ:
- Ինչո՞ւ եք կարծում, որ այդ իրավիճակին համապատասխանում է այս խնդիրը, ի՞նչն է ընդհանուր, ի՞նչն է տարբեր:
- Ու՞մ և ո՞ր իրավունքների պաշտպանությանն է ծառայում այդ խնդիրը: Ու՞մ իրավունքներն են խախտված մինչև դրա կատարումը:
- Որո՞նք են առաջացնող պատճառները:
- Ձեր կարծիքով, ի՞նչ պետք է արվի խնդրի հաղթահարման համար: Ի՞նչ կարող է կատարել պետությունը, միջազգային հանրությունը, քաղաքացիական հասարակությունը, մեզանից յուրաքանչյուրը:

Ի՞նչ տեղեկատվություն և եզրակացություն կկիրառեք Ձեր շնորհանդեսում և ինչո՞ւ:

Քայլ 2. Ո՞ւմ կողմից և ինչպիսի՞ քայլեր պետք է կատարվեն/չկատարվեն գլոբալ արդյունքների (Կայուն զարգացման 16-րդ նպատակ) հասնելու համար: Ինչո՞ւ եք այդպես կարծում: Խոսե՛ք օրինակներ բերելով: **(Կ.պատկ. 2.)**

Ռեսուրս. Դասագիրք, դատավարական իրավունքներ, էջ 134

Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ:

Մարդու դատավարական իրավունքներ https://bit.Iy/3cdYitH

Երեխաների իրավունքների կոնվենցիա (Համառոտ տարբերակ) https://bit.Iy/3zcrRVm

Եվրոպական արժեքներ https://bit.Iy3yNe3iY

Եվրամիության պատմություն https://bit.Iy/3oaAzNU

Եվրամիության կառուցվածք https://bit.Iy/3PzZE02

Եվրամիություն. Պատմություն, նպատակներ https://bit.Iy/3ICfGDE

Մի տարի առանց այցեհրավերի https://bit.Iy/3o4cDvz

Եվրամիության լիազորություններ https://bit.Iy/3uS4COI

Եվրամիության անդամության չափանիշներ https://bit.Iy/3uUODyB

Ասոցացման համաձայնության ընդհանուր տեսություն https://bit.Iy/3z9GGbm

Ասոցացման համաձայնագրի իրականացման ընթացակարգեր https://bit.Iy/3PkeYyw

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 134

Հարցեր.

Ծանոթացե՛ք ստորև տրված պատմությանը և պատասխանե՛ք հարցերին.

- Ի՞նչ սխալ թույլ տվեցին խանութի խորհրդատուները և վարչությունը երեխաների հանդեպ:
- Դուք ինչպե՞ս կվարվեիք խանութի ներկայացուցիչների տեղում եթե լինեիք:
- Ի՞նչ սխալ թույլ տվեցին (եթե ձեզ թվում է, որ թույլ են տվել) երեխաները: Ծնողնե՞րը: Ոստիկանությո՞ւնը: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Իրավական մշակույթի հարցերի մասին գիտելիք ստանալուց հետո Դուք ինչպե՞ս կվարվեիք, երեխաների տեղում եթե լինեիք:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ կանչեցին ոստիկանություն միայն ծնողների գալուց հետո:

- Ինչո՞ւ ծնողները կապվեցին իրավապահ կազմակերպության հետ:
- Նպատակահարմա՞ր եք համարում խանութի վարչության կողմից երեխաներին ներողություն հայտնելուց հետո Ներքին գործերի նախարարությունում հետաքննություն սկսելը:
- Պատմության կերպարների շրջանում ու՞մ կարող եք անվանել իրավական մշակույթ ունեցող:
- Որքանո՞վ հաճախ եք լսել նման մեղադրանքի փաստի մասին:
- Ինչպե՞ս կընթանար սցենարը, եթե երեխաները իսկապես շոկոլադներ գողանային:
- Վերջին ժամանակներում անչափահասների կողմից առևտրական օբյեկտների հաճախակի դարձած թալանը հո չի՞ դարձել երեխաներին հանցագործության մեջ մեղադրելու պատճառ:
- Խախտվե՞ց, թե՞ ոչ երեխաների նկատմամբ անմեղության կանխավարկածը:
- Մինչև կգտնեք հարկադրանքի փաստով նախատեսված Վրաստանի քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի բովանդակությունը, ձեր կարծիքով, ո՞ւմ հանցանքը կհստակեցվի այդ իրավիճակում:

Ակտիվություն. Վերհիշե՛ք, էջ 137

Հարցեր.

- Ինչպե՞ս և ո՞վ է նշանակում ժողովրդական պաշտպանին:
- Ի՞նչ գործառույթներ ունի ժողովրդական պաշտպանը:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 138-139

Հարցեր.

- Ստորև տրված է իրավունքների աղյուսակը: Ամեն մի իրավունքը համապատասխանում է Վրաստանի Սահմանադրության համապատասխան հոդվածին:
- Վերհիշե՛ք յուրաքանչյուր իրավունքի նշանակությունը և դրա դերը մարդու կյանքում և պատրաստե՛ք փոքր շնորհանդես:
- Ո՞ր իրավունքն է բացարձակապես պաշտպանված և անսահմանափակ: Հիմնավորե՛ք:

Առաջադրանք, էջ 143

Դիտե՛ք օգտակար ռեսուրսներում տրված առաջին հղումը և պատրաստե՛ք փոքր շնորհանդես ըստ տեսահոլովակի,

Ռեսուրս. Դասագիրք, Հավասարություն և Արդարություն, էջ 144

Աշակերտի գրքում տրված օգտակար ռեսուրսներ.

Գենդերային հավասարություն սպորտում և ֆիզիկական ակտիվությունում https://bit.Iy/3o5DK9o
Գենդերային հավասարություն սպորտում https://bit.Iy/3AX4kta
Վրաստան -գենդերային հավասարություն սպորտում https://bit.Iy/3zd4xao
Կանանց հավասարություն https://bit.Iy/3PukRsN
Գենդերային հավասարություն Վրաստանում /Gender Equality in Georgia https://bit.Iy/3PsVkjP
Գենդերային կարծրատիպեր https://bit.Iy/3omEqr3
Գենդերային նշանով սեռի ընտրություն Վրաստանում https://bit.Iy/3oncP9a

Ակտիվություն. Դատեցեք, էջ 145
Հարցեր.
Քննարկեք քաղվածքները «Գենդերային հավասարություն սպորտում» հոդվածից և պատասխանե՛ք հարցերին.

- Կարծես ոչինչ արգելված չէ, կանայք կարող են զբաղվել սպորտի այն տեսակով, որը նրանց դուր է գալիս: Ձեր կարծիքով, հապա ի՞նչն է խնդիր առաջացնում: Ինչո՞ւ են սպորտից խուսափում կանայք:
- Այս պատմությունից ելնելով, անվանե՛ք՝ ո՞ր գենդերային կարծրատիպերը հստակեցվեցին:
- Ի՞նչ փաստարկներ գտավ իրավիճակի հերոսը այդ կարծրատիպերը հաղթահարելու համար:
- Ինչպիսի՞ իրականություն հայտնաբերեց Նատոն հետազոտությունից հետո:
- Ձեր կարծիքով, դպրոցի վարչությունը, իշխանությունը ի՞նչ պետք է հակադրի սպորտում գոյություն ունեցող կարծրատիպերին:
- Հիմնախնդրի լուծման ի՞նչ ուղիներ կառաջարկեիք Նատոյին:
- Գտնո՞ւմ եք, թե՞ ոչ, որ վրացական սպորտում առկա թերությունները արմատախիլ անելու համար հարկավոր է օրենսդրական մակարդակով աշխատանք:
- Եթե օրենսդիր լինեք, ի՞նչ օրենք կհաստատեիք այդ թերությունները արմատախիլ անելու համար:
- Երբ պարզվեց, որ պետությունը 2020 թվականի Տոկիոյի օլիմպիադայում ոսկե մեդալի արժանացածին 1 մլն. լարի կփոխանցի, այդ հիացմունքը բոլորին վարակեց: Ի՞նչ տեղի կունենա, եթե պետությունը կին մարզիկների համար նման պարգև հաստատի:

Ակտիվություն. Դատեցե՛ք, էջ 147

Հարցեր.

- Ինչպե՞ս եք հասկանում մարդկանց հավասարությունը, կոնկրետորեն որտե՞ղ պետք է այն արտահայտված լինի:
- Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է, թե՞ ոչ հավասարության ապահովումը այն պայմաններում, երբ բոլոր մարդիկ այլևայլ կարողություններ և տարբեր հետաքրքրություններ ունեն:
- Ի՞նչ եք կարծում, հավասարության խախտո՞ւմ է, թե՞ ոչ պետության կողմից օրենքներով տարբեր սահմանափակումների հաստատումը այս կամ այն իրավունքը ձեռք բերելու կամ պարտականություն ստանձնելու համար (օրինակ՝ տարիքային, մասնագիտական, կրթության համաձայն և այլն): Ո՞ր դեպքում:

Ակտիվություն, Դատեցե՛ք, էջ 148

Հարցեր.

- Մտածե՛ք կոնկրետ օրինակներ՝ մարդկանց համար ինչպիսի՞ սահմանափակումների հաստատումը կլիներ օրենքի առջև նրանց հավասարության սահմանափակում,
- հավասարության թեմայի առնչությամբ՝ ինչպե՞ս եք հասկանում օրենքի արդարացիության թեման:

Ակտիվություն.Աշխատե՛ք խմբերում, էջ 150

Ստեղծե՛ք 4 խումբ.

1. Ընդհանուր դատարանների փորձագետներ,
2. սահմանադրական դատարանի փորձագետներ,
3. ժողովրդական պաշտպանի փորձագետներ,
4. միջազգային դատարանի փորձագետներ:

Ծանոթացե՛ք տրված իրավիճակին և ձեր խմբի իրավասությանը համապատասխան պատրաստե՛ք շնորհանդես, որի ժամանակ այդ իրավիճակը կվերլուծեք և խորհուրդներ կտաք Գելային:

Հարցեր.

Դատողության ժամանակ պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

- Ինչպե՞ս կգնահատեք ստեղծված իրավիճակը:

- Խախտվեցի՞ն, թե՞ ոչ Գելայի իրավունքները, ո՞րը: Ինչո՞ւ եք այդպես կարծում:
- Կարո՞ղ է, թե՞ ոչ ձեր իրավասությանը համապատասխան հաստատությունը այդ գործի կապակցությամբ արդարադատություն իրականացնել: Եթե ոչ, ո՞ւմ խորհուրդ կտայիք դիմել:
- Ի՞նչ քայլեր պետք է կատարի ձեր հաճախորդը:
- Ի՞նչ սպասում կարող է ունենալ նա իր իրավունքների պաշտպանության տեսակետից:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 149
Հարցեր.
Հաճախ օրենքների իրականացմանը խոչընդոտում է հասարակական կարծիքը, որը հետամնաց ավանդույթների և կարծրատիպերի վրա է հիմնված: Դա խոչընդոտում է իրավական մշակույթի արմատավորմանը: Դատեցե՛ք.

- Ձեր կարծիքով, ի՞նչ լծակներ գոյություն ունեն հասարակական կարծիքը փոխելու համար:
- Որտե՞ղ և ինչպե՞ս կարելի է «բողոքարկել» հասարակությանը, որը Մարիտային (Գ. Լեոնիձեի «Երազանքի ծառը») պատժում է:
- Ո՞վ և ինչպե՞ս պետք է միջամտի նման կարծրատիպերի վախը հանելու, փոփոխելու գործընթացին:
- Ի՞նչ կարող եք փոխել դուք ձեր միջավայրում: Ինչպե՞ս:

Ակտիվություն. Ամփոփում-բանավեճ
Հարցեր.

- Վերհիշե՛ք Մարտին Լյութեր Քինգի 1963 թվականի «Իմ երազանքը» ելույթը, այլ իրավապահների երազանքները 50 տարի հետո և այժմ 60 տարի հետո դուք նույնպես մտածեք, ինչ երազանք ունեք, որի իրականացումը իրավական պետությունում կյանքի՝ ապրելու զգացում կառաջացնի:
- Ո՞վ է ստեղծում իրավական պետություն և ամուր ինստիտուցիաներ ժողովրդավարական երկրում:
- Քանի դեռ մեր կողքին թեկուզև մեկ մարդ անարդարությունից կլինի ճնշված, կարելի՞ է երազանքը իրականացված համարել:
- Մենք ինչպե՞ս ենք վարվում, հո ոչ մեկի նկատմամբ չե՞նք դրսևորում անարդարացի վերաբերմունք: Փոփոխո՞ւմ են, թե՞ ոչ մեր շրջապատը մեր տեղայնացված արարքները: Երկի՞րը: Աշխա՞րհը:
- Ի՞նչ կփոխեմ արդարության համար:

Հանձնարարական ուսուցչին. Այս բանավեճի տարածումը հնարավոր է այն բազմաթիվ քեյսերը բացելով, որոնք այս և նախորդ կիսամյակում անցաք: Դա աշակերտներին կօգնի բազմազան շնորհանդեսներ պատրաստելու մեջ:

Ուշադրություն.

Համալիր առաջադրանքի գնահատման օժանդակ գործիք, դիտե՛ք Հավելված 4, էջ 80

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի կողմից առաջադրված հարցեր կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար

- Նկարագրիր, ինչպես է ընթանում/կատարվեց առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:
- Բացատրիր՝ տրված շնորհանդեսը ի՞նչ նպատակի է ծառայում:
- Ի՞նչ հարց վերլուծելու կողմն է ուղղորդում քո ունկնդիրներին/հանդիսատեսին շնորհանդեսի բովանդակությունը:
- Ի՞նչ հարցի մասին արտահայտեցիր քո գիտելիքը համալիր առաջադրանքի միջոցով:
- Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:
- Ի՞նչը կօգնի համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:
  Ի՞նչ կփոխեիր, եթե նորից կատարեիր առաջադրանքը: Ինչո՞ւ:

Հավելված 1.

Զարգացնող գնահատման գործիքներ

Հարց/ենթահարց - Իրավական պետություն

Համալիր առաջադրանք/Միջանկյալ արդյունք 1.

Չափանիշ **Թիրախային հասկացություն** → ↓	Ժողովրդավարություն
Վերացական մակարդակ Աշակերտը կարող է թիրախային հասկացության վրա աշխատանքի գործընթացում ձեռք բերած գիտելիքը և փորձը Ազգային ուսումնական պլանի **գերառարկայական (մակրո) հասկացությունների** հետ կապել:	**Աշակերտը կարողացավ.** ստացած տեղեկատվության հիման վրա սեփական նարատիվը ձևակերպել, որում արտացոլված է հարցի հետ կապված փաստացի նյութ՝ իր նպատակների և լսարանի (դրա բազմազանության) նկատառումով. օրինաչափություններ հայտնաբերել և մոդելավորել նոր իրավիճակի առնչությամբ, ուսումնական նյութը կապակցել այլ գիտելիքի հետ, ռազմավարություններ ընտրել հարցը ուսումնասիրելու կամ առաջադրանքը կատարելու համար, վերլուծել՝ ինչ ազդեցություն գործեց հարցի ուսումնասիրությունը իր քաղաքացիական աշխարհայացքի վրա: Ձեռք բերած գիտելիքի օգնությամբ ասպեկտներ՝ տեսակետներ որոնել սեփական կամ հասարակական կարիքների համար:
Ամբողջացված մակարդակ Աշակերտը կարող է. Թիրախային հասկացության հետ կապված փաստերը և երևույթները քննադատաբար և փոխկապակցված ըմբռնել և վերլուծել, • թիրախային հասկացության կայուն պատկերացումները փոխադարձ կապակցված վերլուծել, • կոնկրետ թիրախային հասկացության հետ կապված տեղեկատվությունը ընդհանրացնել (առարկայի այլ թիրախային հասկացությունների հետ կապակցել):	**Աշակերտը կարողացավ.** թիրային հասկացության հետ կապված փաստերը և երևույթները քննադատաբար և փոխկապակցված ըմբռնել և վերլուծել, թիրախային հասկացության կայուն պատկերացումները փոխկապակցել, ստացած տեղեկատվությունը կապել այլ թիրախային հասկացությունների հետ: Տրված աղյուսակներում/սխեմաներում մտցնել տվյալներ, որոնք հասակակիցների համար կհեշտացնեն իրավական և ոչ իրավական պետության բնորոշիչների համեմատությունը: Տարբերությունները կապեց քաղաքական համակարգի, օրինաստեղծ գործընթացի, իրավական գիտակցության հետ, բերեց կոնկրետ և վառ օրինակներ, այդ բնորոշիչները կապեց ժողովրդավարության սկզբունքների իրականացման հետ: **Շնորհանդեսում հաջորդականությամբ բացատրեց պատճառա-հետևանքային կապերը պետական իրավական որոշումների, հասարակության իրավական կրթության, իրավական վարքի և ժողովրդավարության սկզբունքների միջև: Վերլուծեց կապը տեղական և միջազգային օրենսդրական նորմերի և դրանց ակտիվացման լծակների միջև: Բացատրեց, թե ինչ նշանակություն ունի այդ նորմի իմացությունը և պաշտպանությունը մարդու զարգացման, քաղաքացիական մասնակցության ակտիվացման և կայուն զարգացման տեսակետից: Պատրաստած մտածված հարցերը նպաստում են իրավական խախտումների բացասական արդյունքները հասկանալու և դրանք հաղթահարելու ուղիների մասին մտածելուն:**

Բազմակապ մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, միմյանց հետ չկապակցված, չհամակարգված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի կապակցությամբ	Աշակերտն ունի մի քանի ասոցիացիա սովորելիք հարցի առնչությամբ, թեև նույն հարցի կապակցությամբ նրա կողմից հաղորդված լուրերը չունեն հիմնավոր, հաջորդական տեսք: Աշակերտի աշխատանքում արտացոլված է մի քանի տվյալ **(հիշատակում է իշխանությանը, քաղաքացիներին, օրենքներին, բայց աղյուսակը կարգավորված չի ներկայացրել և չի տալիս համեմատության հիման վրա եզրակացություններ կայացնելու հնարավորություն: Տրված հարցերը կողմնորոշված են միայն գիտելիքի ստուգման և ոչ թե մտածողության գործընթաց հարուցելու վրա: Շնորհանդեսի ժամանակ հիշատակեց ժողովրդավարությունը, բայց չկարողացավ կապակցել իրավական պետության հետ):**
Միակապ մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցվածքային ասոցիացիա/պատկերացում քննարկվելիք հարցի կապակցությամբ	Աշակերտի դատողությունը սովորելու կապակցությամբ սահմանափակվում է հանգուցային բառերի/վերնագրի վրա պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով: Աղյուսակը չկարողացավ ներկայացնել, միայն օրենքի գերակայությունը անվանեց, բայց չկարողացավ հաապատասխանեցնել այլ բնորոշիչներին: Հարցերը անհասկանալի են: Դատողությունը հատվածներով է և ոչ հաջորդական:
Չկապակցված մակարդակ Աշակերտը հարցի կապակցությամբ չունի համապատասխան տեղեկատվություն:	Աշակերտը հստակորեն չի կարողանում հասկանալ հարցի հետ կապված հարցումները/համալիր առաջադրանքի պայմանը: Աշակերտը չունի պատասխանը, կամ նրա պատասխանը ընդհանրապես հեռացած է պահանջից/առաջադրանքի չափանիշներից, առաջադրանքը չի կատարել, չի կարողացել կատարել, պայմանը համարժեքորեն չի ըմբռնել:

Հավելված 2
Զարգացնող գնահատման գործիք

Հարց/ենթահարց -Օրենք և օրինահնազանդություն/Քաղաքացիական հասարակություն **Համալիր առաջադրանք/Միջանկյալ արդյունք 2.**	
Չափանիշ Թիրախային հասկացություն → ↓	**Հասարակություն**
Վերացական մակարդակ Աշակերտը կարող է թիրախային հասկացության վրա աշխատանքի գործընթացում ձեռք բերած գիտելիքը և փորձը Ազգային ուսումնական պլանի **գերառարկայական (մակրո) հասկացությունների** հետ կապել:	Աշակերտը/աշակերտները կարողացավ/կարողացան. ստացած տեղեկատվության հիման վրա սեփական նարատիվը ձևակերպել, որում արտացոլված է հարցի հետ կապված փաստացի նյութ սեփական նպատակների և լսարանի (դրա բազմազանության) նկատառումով. օրինաչափությունների հայտնաբերում և մոդելավորում նոր իրավիճակի առնչությամբ, ռազմավարություններ ընտրել հարցը ուսումնասիրելու կամ առաջադրանքը կատարելու համար, վերլուծել՝ ինչ ազդեցություն գործեց հարցի ուսումնասիրությունը իր քաղաքացիական աշխարհայացքի վրա: Ձեռք բերած գիտելիքի օգնությամբ տեսակետներ որոնել սեփական կամ հասարակական կարիքների համար:
Ամբողջացված մակարդակ Աշակերտը կարող է. թիրախային հասկացության հետ կապված փաստերը և երևույթները քննադատաբար և փոխկապակցված ըմբռնել և վերլուծել, • թիրախային հասկացության կայուն պատկերացումները փոխադարձ կապակցված վերլուծել, • կոնկրետ թիրախային հասկացության հետ կապված տեղեկատվությունը ընդհանրացնել (առարկայի այլ թիրախային հասկացությունների հետ կապակցել):	Աշակերտը/աշակերտները կարողացավ/կարողացան թիրախային հասկացության հետ կապված փաստերը և երևույթները քննադատաբար և փոխկապակցված ըմբռնել- վերլուծել, թիրախային հասկացության կայուն պատկերացումները փոխկապակցել, ստացած տեղեկատվությունը կապել այլ թիրախային հասկացությունների հետ: **Աշակերտները անցկացրին հետազոտություն թեմայի տեղեկատվության և կախվածությունների պարզաբանման համար: Քննադատաբար վերլուծեցին կարծրատիպերի ազդեցությունը հասարակության վրա և հստակեցրին դրանց հաղթահարման հանձնարարականները: Տեսել են քաղաքացիական հասարակության (ինստիտուցիաների, քաղաքացիների) պատասխանատվության դերը օրենքի արդյունավետորեն գործարկման գործում: Ցանկացած օրինախախտում և բռնություն դիտված է որպես իրավունքների խախտման, բազմաթիվ անհատական և հասարակական հիմնախնդիրների առաջացման հիմք:** Հստակեցված է կապը կարծրատիպերի հաղթահարման և կրթության միջև: Վերլուծված է քաղաքացիական շարժման ազդեցությունը իշխանության կողմից տարբեր օրինախախտումների, հասարակության գիտակցության մակարդակի բարձրացման վրա:

Բազմակապ մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, միմյանց հետ չկապակցված չհամակարգված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի կապակցությամբ:	Աշակերտը/ները ունեն մի քանի ասոցիացիա: Հիշեցնում են քաղաքացիական հասարակության դերի և նշանակության մասին, անվանում կարծրատիպերը և ավանդույթները, բայց չեն կարողանում հստակեցնել պատճառա -հետևանքային կապը պասսիվ քաղաքացիական հասարակության և օրենսդրության միջև: Չեն կարողանում ներկայացնել առնչությունները ենթահարցերի և հասկացության/կայուն պատկերացումների միջև):
Միակապ մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցվածքային ասոցիացիա/պատկերացում քննարկվելիք հարցի կապակցությամբ:	Աշակերտների աշխատանքը/դատողությունը ուսանելի հարցի կապակցությամբ չունի ամբողջականացված բնույթ և սահմանափակվում է հանգուցային բառերի/վերնագրի վրա պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով: Առաջադրանքում անվանում են **օրինախախտումների, ոչ կառավարական կազմակերպությունների** մեկ տեսակետ**,** բայց դա մտածված բովանդակությամբ չեն կարողանում ձևակերպել, չեն զարգացնում:
Չկապակցված մակարդակ Աշակերտը հարցի կապակցությամբ չունի համապատասխան տեղեկատվություն:	Աշակերտը ճշգրտորեն չի կարողանում հասկանալ հարցի հետ կապված հարցումները/համալիր առաջադրանքի պայմանը: Աշակերտը չունի պատասխանը կամ նրա պատասխանը ընդհանրապես հեռացած է պահանջից/առաջադրանքի չափանիշներից, առաջադրանքը չի կատարել, չի կարողացել կատարել, պայմանից հեռացել է, համարժեքորեն չի ըմբռնել:

Հավելված 3

Զարգացնող գնահատման գործիք

Հարց/Ենթահարց - Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներ/իրավական մշակույթի ակտորներ

Համալիր առաջադրանք/Միջանկյալ արդյունք 3

Չափանիշ. Թիրախային հասկացություն → ↓	**Քաղաքացիական մասնակցություն**
Վերացական մակարդակ Աշակերտը կարող է թիրախային հասկացության վրա աշխատելու գործընթացում ձեռք բերված գիտելիքը և փորձը կապել Ազգային ուսումնական պլանի **գերառարկայական (մակրո) հասկացությունների հետ:**	**Աշակերտը կարողացավ.** ստացված տեղեկատվության հիման վրա ձևակերպել սեփական նարատիվը, որտեղ պատկերված է հարցի վերաբերյալ փաստացի նյութը՝ հաշվի առնելով սեփական նպատակներն ու լսարանը (նրա բազմազանությունը), հայտնաբերել օրինաչափություններ և մոդելավորում նոր իրավիճակի առնչությամբ, ընտրել ռազմավարություններ հարցը ուսումնասիրելու կամ առաջադրանքը կատարելու համար, վերլուծել՝ ինչ ազդեցություն է թողել հարցի ուսումնասիրությունը նրա քաղաքացիական աշխարհայացքի վրա, ձեռք բերած գիտելիքը կիրառելով գտնել ասպեկտներ՝ տեսակետներ, սեփական կամ հասարակության կարիքների համար:
Ամբողջացված մակարդակ Աշակերտը կարող է քննադատաբար ու համակցված ընկալել և վերլուծել թիրախային հասկացությունների հետ կապված փաստերն ու իրադարձությունները, • համակցված վերլուծել թիրախային հասկացության կայուն պատկերացումները: • կոնկրետ թիրախային հասկացության հետ կապված տեղեկատվությունը ընդհանրացնել (առարկայի այլ թիրախային հասկացությունների հետ կապակցել):	**Աշակերտը կարողացավ թիրախային** հասկացության հետ կապված փաստերն ու իրադարձությունները քննադատաբար ու համակցված ըմբռնել-վերլուծել, միմյանց կապել թիրախային հասկացության կայուն պատկերացումները, կապել ստացած տեղեկությունը այլ թիրախային հասկացությունների հետ: Աշակերտը հոդվածի ներածական բաժնում անվանում է այն հիմնական ակտորներին, որոնք ստեղծում են իրավական միջավայր, իսկ այնուհետև՝ ընտրված ակտորի գործառույթ-պարտականությունները: Իրավական որոշումների ընդունման գործընթացում տեսաբանում է քաղաքացիական ընդգրկվածության հնարավորությունները: Հոդվածը պատասխանում է հանգուցային հարցին, առաջադրանքի չափանիշներին և հասակակիցներին հերթականությամբ հաղորդում է տեղեկատվություն դատական համակարգի բնորոշիչների մասին: Խոսում է **իրավունքների պաշտպանության մեխանիզմների մասին՝ ընթացակարգային իրավունքների առնչությամբ: Բացատրում է՝ ինչ նշանակություն ունի այդ գիտելիքը իրավունքների պաշտպանության և հանցագործության կանխման համար: Այդ նարատիվը ներկայացնում է կոնկրետ իրավիճակների օժանդակությամբ, հասկանալի և ակնհայտ:** **Բացատրում է պատճառա-հետևանքային կապը հասարակական կարիքների մասին հոգածության և քաղաքացիական բարեկեցության միջև:**
Բազմակապ մակարդակ	Աշակերտն ունի մի քանի ասոցիացիա սովորած հարցի առնչությամբ, թեև նույն հարցի կապակցությամբ

Աշակերտն ունի միայն մի քանի, միմյանց հետ չկապակցված չհամակարգված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի կապակցությամբ:	նրա աշխատանքը <u>չունի</u> կայուն, հաջորդական, փոխկապակցված տեսք: Աշակերտը հոդվածում թվարկում է մի քանի տեսանկյուն: **Հասարակական կարիքները, տեղական և միջազգային իրավունքը, Ստրասբուրգի դատարանը:** **Կարող է ասպետներից մեկը կամ բոլորը ըմբռնել, բայց չի կարողանում դրանք ամբողջականացնել, առնչությունները արտացոլել:**
Միակապ մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցվածքային ասոցիացիա/պատկերացում քննարկվելիք հարցի կապակցությամբ:	Աշակերտի դատողությունը ուսանելի հարցի կապակցությամբ սահմանափակվում է հանգուցային բառերի/վերնագրի վրա պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով: Աշակերտի աշխատանքը շատ կարճ է, այն չենք կարող հոդված անվանել: Դատողությունը սահմանափակվում է հանգուցային բառերի/վերնագրի (երդվյալ ատենակալների դատարանի մասին) պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով:
Չկապակցված մակարդակ Աշակերտը հարցի կապակցությամբ չունի համապատասխան տեղեկատվություն:	Աշակերտը ճշգրտորեն չի կարողանում հասկանալ հարցի հետ կապված հարցումները/համալիր առաջադրանքի պայմանը: Աշակերտը չունի պատասխան կամ նրա պատասխանը ընդհանրապես հեռացած է պահանջից/առաջադրանքի չափանիշներից, առաջադրանքը չի կատարել, չի կարողացել կատարել, պայմանից հեռացել է, համարժեքորեն չի ըմբռնել:

Հավելված 4

Զարգացնող գնահատման գործիք

Հարց/Ենթահարց- Կայուն արդարադատության համար/Կայուն զարգացման նպատակ 16. Խաղաղություն, արդարություն/ամուր ինստիտուցիաներ **Համալիր առաջադրանք/Միջանկյալ արդյունք 4.**	
Չափանիշ. թիրախային հասկացություն → ↓	**Կայուն զարգացում**
Վերացական մակարդակ Աշակերտը կարող է. թիրախային հասկացության վրա աշխատելու գործընթացում ձեռք բերված գիտելիքը և փորձը կապել Ազգային ուսումնական պլանի **գերառարկայական (մակրո) հասկացությունների** հետ:	**Աշակերտը կարողացել է.** ստացած տեղեկատվության հիման վրա ձևակերպել սեփական նարատիվը, որտեղ պատկերված է հարցի վերաբերյալ փաստացի նյութը՝ հաշվի առնելով սեփական նպատակներն ու լսարանը (նրա բազմազանությունը), հայտնաբերել օրինաչափություններ և մոդելավորում նոր իրավիճակի առնչությամբ, ընտրել ռազմավարություններ հարցը ուսումնասիրելու կամ առաջադրանքը կատարելու համար, վերլուծել՝ ինչ ազդեցություն է թողել հարցի ուսումնասիրությունը նրա քաղաքացիական աշխարհայացքի վրա, կիրառելով ստացած գիտելիքը՝ գտնել ասպեկտներ՝ տեսակետներ, սեփական կամ հասարակության կարիքների համար:
Ամբողջացված մակարդակ Աշակերտը կարող է թիրախային հասկացության հետ կապված փաստերը և իրադարձությունները քննադատաբար ու համակցված ընկալել և վերլուծել, • թիրախային հասկացության կայուն պատկերացումների փոխկապակցված վերլուծություն կատարել, • կոնկրետ թիրախային հասկացության հետ կապված տեղեկատվությունը ընդհանրացնել	**Աշակերտը կարողացավ.** թիրախային հասկացության հետ կապված փաստերն ու իրադարձությունները քննադատաբար ու համակցված ըմբռնել-վերլուծել, թիախային հասկացության կայուն պատկերացումները փոխկապակցել, ստացած տեղեկատվությունը այլ թիրախային հասկացությունների հետ կապակցել: Շնորհանդեսում թիրախային լսարանին հարմարված ներկայացնել կայուն զարգացման 16-րդ նպատակի էությունը, թե ինչու է արդարադատության և ամուր ինստիտուցիաների նկատմամբ հոգատարությունը հանդիսանում անվտանգ հեռանկարի երաշխիք: Քննարկեց կոնկրետ քեյսեր: Նկարագրեց, թե ինչպես պետք է գործեն ինստիտուցիաները և քաղաքացիները՝ գլոբալ նպատակները հաշվի առնելով: **Շոշափեց անչափահասների**

(առարկայի այլ թիրախային հասկացությունների հետ կապակցել):	**արդարադատության սկզբունքները և դրանք ներկայացրեց որպես տեղայնացված որոշումներ, որոնք օժանդակում են չբռնացող հասարակության զարգացմանը, քաղաքացիական անվտանգության հեռանկարին:**
Բազմակապ մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, միմյանց հետ չկապակցված չհամակարգված ասոցիացիա/պատկերացում քննարկվող հարցի կապակցությամբ:	Աշակերտն ունի բազմաթիվ ասոցիացիաներ սովորած հարցի առնչությամբ, թեև նույն հարցի կապակցությամբ նրա աշխատանքը <u>չունի</u> կանոնավոր, հաջորդական, փոխկապակցված տեսք: Շնորհանդեսում թվարկում է մի քանի տեսանկյուն (տեղական և միջազգային իրավունք, անչափահասների հանցագործություն, որսորդության և ձկնորսության կանոններ), բայց չի կարողանում աշխատանքում կառուցվածքայնորեն ներկայացնել և ծավալները չի կարողանում ամբողջականացնել:
Միակապ մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցվածքային ասոցիացիա/պատկերացում քննարկվելիք հարցի կապակցությամբ:	Աշակերտի դատողությունը ուսանելի հարցի կապակցությամբ սահմանափակվում է հանգուցային բառերի/վերնագրի վրա պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով: Շնորհանդեսը չի կարողանում բավարարել չափանիշները, աշխատանքը մակերեսային է, հիշեցնում է կայուն զարգացման նպատակները, բայց նրա դատողությունը ավելի բացվել չի կարողանում:
Չկապակցված մակարդակ Աշակերտը հարցի կապակցությամբ չունի համապատասխան տեղեկատվություն:	Աշակերտը ճշգրտորեն չի կարողանում հասկանալ հարցի հետ կապված հարցումները/համալիր առաջադրանքի պայմանը: Աշակերտը չունի պատասխան կամ նրա պատասխանը ընդհանրապես հեռացած է պահանջներից/առաջադրանքի չափանիշներից, առաջադրանքը չի կատարել, չի կարողացել կատարել, պայմանից հեռացել է, համարժեքորեն չի ըմբռնել...

Հավելված 5.

Ինչպե՞ս գրենք հոդված:

1. Հոդվածի համար շատ կարևոր է լավ վերնագիրը: Այն պետք է արտացոլի ամբողջ տեքստի բովանդակությունը և միևնույն ժամանակ հրավիրի ընթերցողի ուշադրությունը:

2. Կազմե՛ք հոդվածի պլանը: Այն պետք է ներառի նախաբան (ինչին է վերաբերվում հոդվածը), հիմնական մաս (բովանդակություն, դատողություն) և եզրակացություն (ամփոփում):

3. Ձգտե՛ք լինել կոնկրետ, գրե՛ք կարճ և հասկանալի նախադասություններով: Լավ հոդված գրելու համար հարկավոր է սահմանափակվել 200-300 բառով: Հակառակ դեպքում ընթերցողները կհոգնեն մինչև վերջ այն աչքի անցկացնել կամ պարզապես կհրաժարվեն այն ընթերցել: Բայց եթե հոդվածի թեման պահանջում է ավելին ասել, գերադասելի է այն չափազանցել, քան հետաքրքրական մասը սեղմելու հաշվին՝ կրճատել տեքստը:

4. Կարող եք հոդվածին կցել տեսողական նյութ (լուսանկար, նկար, սխեմա, դիագրամ):

5. Լավ հոդվածի տեքստը պետք է լինի պարզ հասկանալի, քերականորեն արդարացված և հաճույքով ընթեռնելի: Այդ պատճառով անհրաժեշտ է գրելը ավարտելուց հետո քննադաբար վերանայել աշխատանքը և ուղղել թույլ տրված սխալները:

6. Մինչև հոդվածը կսկսեք գրել, անհրաժեշտ է ընտրած թեմայի մասին հավաքեք տարբեր տվյալներ: Օրինակ՝ ծանոթանաք տարբեր գրականության, փորձագետների կարծիքների և դուրս գրեք ձեզ համար կարևոր արտահայտությունները, տվյալները: Նշեք վիճակագրությունը: Որոնե՛ք ընտրված թեմայի առնչությամբ տեսողական նյութ, ուշադիր դիտեք ձեր շուրջը ընթացող գործընթացները:

   Երբ ամեն ինչ ձեռքի տակ կունենաք, մտածեք՝ ինչ եք ցանկանում ասել, հասկացնել ընթերցողին և դասավորեք ձեր ասելիքը վերևում տրված կառուցվածքի համաձայն:

Հավելված 6.

Իրավիճակներ՝ ակտիվության համար

❖

Քաղաքացիական հագուստով տղամարդը փողոցում երեխայի կանգնեցրեց: (*Ունի իրավունք)*

Տղամարդ. Բարև, ես ոստիկան եմ: Ասա քո անունը և ազգանունը: (*Ունի իրավունք)*

Երեխա. Եթե կարելի է, Ձեր անձը հաստատող վկայականը ցույց տվեք: (*Ունի իրավունք)*

Տղամարդ. Ահա, փաստաթուղթը, խնդրեմ: *(Պետք է ցույց տա)*

Երեխան վերցնում է փաստաթուղթը և կարդում է: (*Ունի իրավունք)*

Ոստիկան. Քանի՞ տարեկան ես: (*Ունի իրավունք)*

❖

Համազգեստով ոստիկանը կանգնեցրեց 16 տարեկան դեռահասի: (*Ունի իրավունք)*

Ոստիկան. Բարև, ասա քո անունը և ազգանունը: (*Ունի իրավունք)*

Դեռահաս. Կարելի՞ է իմանամ՝ ինչո՞ւմն է գործը: (*Ունի իրավունք)*

Ոստիկան. Մի տղայի ենք որոնում, որը քեզ է նման: *(Պետք է պատասխանի)*
Դեռահասը ասում է անունը և ազգանունը:

Ոստիկան. Անձը հաստատող փաստաթուղթ ունե՞ս: (*Ունի իրավունք)*

Դեռահաս. Այո՛, խնդրեմ:

❖

Համազգեստով ոստիկանը կանգնեցրեց երեխայի: (*Ունի իրավունք)*

Ոստիկան. Բարև, անձը հաստատող փաստաթուղթ ցույց տուր: (*Ունի իրավունք)*

Երեխա. Խնդրեմ:

Ոստիկան. Որտե՞ղ են աշխատում քո ծնողները*: (Չունի իրավունք)*

Երեխա. Վերադարձրե՛ք փաստաթուղթը: Ես հրաժարվում եմ պատասխանել: (*Ունի իրավունք)*

❖

Համազզգեստով ոստիկանը կանգնեցրեց անչափահաս Լալիին: (*Ունի իրավունք)*

Ոստիկան. Բարև, ասա քո անունը և ազգանունը: (*Ունի իրավունք)*

Լալի. Ինչո՞ւմն է գործը: Ինչո՞ւ եք հարցնում: (*Ունի իրավունք)*

Ոստիկան. Դա երեխայի գործը չէ: *(Չունի իրավունք)*
Լալի. Չեմ պատասխանի: *(Ունի իրավունք)*

Հավելված 7.

Դիտողական ուսման արդյունքների տաքսոնոմիա - կոգնիտիվ գործընթացներին կողմնորոշված մոդել (Քաղաքացիական կրթության օրինակով)

Սոլո տաքսոնոմիա (դիտողական ուսման արդյունքների տաքսոնոմիա) -SOLO (Structure of Observed Learning Outcomes), ինչպես նշում է դրա հեղինակներից մեկը՝ Ջոն Բոգսը, «նախատեսված է առավելապես ուսման գործընթացում աշակերտի կոգնիցիայի աճը գնահատելու համար»:Մոդելը ավելի կողմնորոշված է կոգնիտիվ գործընթացների, քան՝ ձեռք բերած արդյունքների վրա: Դրա կիրառմամբ ուսուցիչը կարող է ավելի լավ վերլուծել աշակերտի պատասխանները և տեղեկանալ, որ մակարդակին հասավ և ինչպիսի՞ առաջընթաց ունի կոնկրետ աշակերտը մտածողության գործընթացներում: Միևնույն ժամանակ, մոդելը ուսուցիչներին հնարավորություն է տալիս օգտագործելու համաձայնեցված տերմիններ աշակերտի դիտողական արդյունքները նկարագրելու համար: Մոդելում տրված է կոգնիցիայի 5 մակարդակ. չկապակցված, միակապ, բազմակապ, ամբողջացված և վերացական:

Դիտողական արդյունքների գնահատման մեթոդը կիրառված է համընդհանուր կրթության բարեփոխման մեջ («Նոր դպրոցի» մոդելում): Ազգային ուսումնական պլանում անվանված նպատակներին համապատասխան, բարեփոխումը ընդունում է աշակերտի հոլիստային գնահատումը: Ուսուցման կոնստրուկտիվիստական՝ կառուցողական տեսության վրա հենվելով, սոլո տաքսոնոմիան ուսուցչին տալիս է հնարավորություն՝ ուշադրություն դարձնել աշակերտի կոգնիտիվ զարգացման գործընթացի վրա և տալ կոնկրետ հետադարձ կապ, որը կօգնի ուսման մեջ: Գրությունում կոնկրետ առարկայի՝ քաղաքացիական կրթության կտրվածքով կխոսենք կոնկրետ համալիր առաջադրանքի կատարման ժամանակ աշակերտի մտածողության գործընթացների հետևողականության և հետադարձ կապի հնարավորությունների մասին:

Ազգային ուսումնական պլանի առարկայական չափորոշչի տեսքով, ունենք նախապես պայմանավորվածություններ թիրախային հասկացությունների մասին (իր կայուն պատկերացումներով), պարտադիր թեմաներով (իր կայուն պատկերացումներով), հասանելի արդյունքներով, որոնց աշակերտը պետք է հասնի բազային աստիճանի (այս դեպքում) ժամանակաշրջանում: Համաձանել ենք նաև այն մասին, որ ուսումնառության հիմք է ներկայացնում կոնստրուկտիվիստական՝ կառուցողական մոտեցումը (5 սկզբունք): Հետագա գործընթացում ուսուցչի ստեղծարարությունը և ընտրությունը ազատ է: Թեմայի սահմաններում ինքը անձամբ է ընտրում կոնկրետ հարցերը, որոնք աշակերտին հնարավորություն են տալիս ուսումնառության գործընթացը վարել միջանկյալ նպատակին, այսինքն՝ համալիր առաջադրանքին կողմնորոշված: Կարևորն այն է, որ համալիր առաջադրանքի պայմանը և գնահատման չափանիշները այնպես կարողանա «կապել, հանգույցի վերածել», որ դրանց կատարումը հարուցի մտածողական գործընթաց և հրահրի զարգացման, և ընձեռի արդյունքները դիտարկելու հնարավորություն: Ուսուցչի դիտարկման և հետաքրքրության առարկա է ներկայացնում աշակերտի կոգնիցիայի գործընթացը, քանի որ միայն այս «կրակի միջով» անցկացված գիտելիքը կարող է հաստատվել երկարատև հիշողության մեջ և վերածվել անհատական գիտելիքի, որը ցանկացած ժամանակ և ցանկացած տեղում, որտեղ այդ գիտելիքի կիրառման կարիքը կլինի, կհստակեցվի, կակտիվանա:

Համալիր առաջադրանք

Դասարան **- իններորդ:**

Պարտադիր թեմա **- Կենտրոնական իշխանություն:**

Հարց. **Ճանապարհային երթևեկության անվտանգություն:**

Թիրախային հասկացություն. **Քաղաքացիական մասնակցություն:**

Առաջադրանքի պայման.
Պատկերացրու, որ քո քաղաքով/ավանով/գյուղով անցնում է տարանցիկ մայրուղի, այն վտանգ է ստեղծում բնակչության համար, քանի որ չկա սարքավորված ստորգետնյա անցում և հետիոտները ստիպված են անցնել մայրուղով:
Պատրաստիր **խնդրագիր՝ պետիցիա՝** հասցեագրված իշխանությանը ստորգետնյա անցում սարքավորելու վերաբերյալ:

Մինչև առաջադրանքի կատարումը՝ ծանոթացիր.
ճանապարհային անվտանգության մասին օրենքի 35-րդ հոդվածին,
խնդրագրերի՝ պետիցիաների հարթակին և դրա հնարավորություններին:

Աշխատանքը ներկայացնելիս ընդգծված ցույց տուր.

- Ինչո՞ւ է անհրաժեշտ այդ իրավիճակում քաղաքացիների ակտիվ ընդգրկվածությունը և ընդգրկվածության ո՞ր ձևի հետ գործ ունենք,
- ո՞ր ինստիտուցիային կդիմեք խնդրագրով և ինչո՞ւ,
- *ճանապարհային անվտանգության հիմնախնդրի հրատապությունը և դրա կարգավորման անհրաժեշտությունը,*
- *քաղաքացիների տեսլականը այդ հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ և սպասելիք օգուտը:*

Շնորհանդեսից հետո զրուցե՛ք.

- առաջադրանքի ժամանակ կատարված քայլերի և արարքների մասին:
- Ի՞նչը հեշտ դարձավ, ի՞նչը դժվարացավ:
- Ի՞նչը կբարելավեիր խնդրագրում՝ եթե նորից կազմեիր:
- Ի՞նչ եզրակացություններ կարողացար կատարել: Ինչո՞ւմ կգործադրես այդ փորձառությունը:
- Այս հարցերով ի՞նչը ճշգրտել կցանկանայիր ապագայում:

Համալիր առաջադրանքի պայմանին ծանոթանալուց և իմաստավորելուց հետո, ուսուցիչը վարում է այն ակտիվությունները, որոնք աշակերտների շրջանում մտածողության գործընթացներ են հարուցում և ծառայում են հետզհետե սոլո տաքսոնոմիան վերին մակարդակի կողմը տանելուն: Այդ նպատակով նա պետք է նախապատրաստի **աշխատանքային հարցերի բլոկներ**, որովհետև բոլորից լավ ճիշտ այդպիսի ուղղություն տվող հարցերն են կատարում այն «ղարաչոների՝ կաղապարների» դերը, որը մեզ խորհուրդ է տալիս կոնստրուկտիվիզմը՝ ուսումնառության մեջ աշակերտի սուբյեկտիվ դերը պահպանելու համար:
Այդ հարցերի բովանդակությունը ուսուցչին պիտանի կլինի համալիր առաջադրանքը ներկայացնելուց հետո՝ հետադարձ կապի համար, որպեսզի աշակերտին, որը (ենթադրենք) մուլտիկառուցվածքային մակարդակը հաղթահարեց, կոնկրետ խորհուրդ կտա առնչությունները իմաստավորելու համար: Սոլո տաքսոնոմիայում մակարդակների համարժեք երաշխավորված բայերը կամ արտահայտությունները ուսուցիչը կիրառում է առաջադրանքը կազմելիս, գնահատման չափանիշները կազմելիս, հետադարձ կապի մեջ:

Որպես օրինակ առաջարկում ենք աղյուսակի տեսքով տրված նկարագրությունները.

Մակարդակներ	**Ընդհանուր նկարագրություններ, համարժեք բայեր և արտահայտություններ**	**Տրված համալիր առաջադրանքի համարժեք նկարագրության օրինակներ**
Վերացական մակարդակ	Աշակերտի պատասխանը ներառում է ոչ միայն տրվածը/առաջարկածը հասկանալու հիմնական տեսանկյունները և դրանց միջև կապերը/առնչությունները, այլև այդ ամենի ընդհանրացումը, կապում է տրվածի խորքում կառուցվածքներին, ձևավորում է այլ ոլորտի հետ կապված գաղափարներ, կառուցվածքներ, ընդհանրացնում է հարցը, կիսում է հիպոթեզները: **Համարժեք բառեր և արտահայտություններ** Ընդհանրացում, կանխատեսում, գնահատում, խորհում, ռեֆլեքսիա, հիպոթեզների կիրառում, տեսության ձևակերպում, ստեղծում, վերստուգում, հաստատում, հիմնավորում, առաջնահերթության անվանում, ձևավորում, կազմում, առաջադրում (պերֆորմանս) բացատրություն, կիրառում, վերլուծում:	Աշակերտի պատասխանը ներառում է ոչ միայն առաջադրանքի պայմանին համապատասխան սպառիչ և մտածված բովանդակություն, որը թիրախային հասկացության՝ քաղաքացիական մասնակցության հիմնական տեսանկյունների միջև առնչությունները արտացոլում է լրիվությամբ, այլև նախորդ դատողության և ոլորտի տիրույթից դուրս գալով՝ արտահայտում է կարծիքներ, որոնք ավելի են ընդհանրացնում հարցը (օրինակ՝ նշում է, որ «քանի որ մայրուղով կատարվում են միջազգային բեռնափոխադրումներ, ավտո-ճանապարհային պատահարների արդյունքում կարող են վնասվել տեղի և օտար երկրների քաղաքացիները, տնտեսական վնաս հասցվի բեռների սեփականատեր կազմակերպություններին: Դա ռիսկեր է ստեղծում նաև կայուն զարգացման տեսակետից, ինչպես նաև միջազգային պայմանագրերի պահպանության

	«Այս հարցերից ելնելով, ունեմ մի քանի գաղափար...» «Կարող եմ առանձին եզրակացություններից ելնելով՝ հանգել ընդհանուր եզրակացության...) «Եթե հարցը տարբեր անկյուններից նայենք, կտեսնենք կապ այլ ոլորտների հետ...):	տեսանկյունից, ինչը վնաս է հասցնում երկրի հեղինակությանը) կամ նաև, «Կարող եմ արտահայտել փաստարկված ենթադրություն, որ հիմնախնդիրների՝ ժամանակին որոշելու դեպքում քաղաքացիների և իշխանության միջև կվերականգնվի վստահությունը: Արդյունքի առաջացումը կմեծացնի քաղաքացիների մոտիվացիան՝ լինեն ակտիվ, ցուցադրեն նախաձեռնություններ...»)
Ամբողջացված մակարդակ	Աշակերտի պատասխանը ներառում է ոչ միայն թիրախային հասկացություն, թեմայի հանգուցային տեսանկյունների թվարկություն, այլև դրանց շրջանում կապերը/առնչությունները: Առանձին տեսանկյունների ինտեգրմամբ ձեռք են բերված ամբողջականացված եզրակացություններ, ըմբռնում: **Համարժեք բառեր և արտահայտություններ** Հաջորդականություն, դասակարգում, նմանության-տարբերության հայտնաբերում, բացատրություն (պատճառները և հետևանքները), վերլուծում, համանմանություններ բերել, կազմակերպում, տարբերության բացահայտում, հարցի առաջադրում, առնչության հաստատում, կիրառում, նկարագրությյուն: «Այդ տեսանկյունները միմյանց հետ սերտ կապի մեջ են...» «Կարող ենք տեսնել նաև համաձայնություն և հակադրություն, օրինակ...»	Պատասխանում աշակերտը ամրապնդում է առնչությունները այն տեսանկյունների միջև, որոնց մասին խոսում է: Նշում է, որ քաղաքացիական մասնակցությունը տարբեր ձևերով է դրսևորվում և խնդրագիրը՝ պետիցիան, ներկայացնում է իշխանության հետ հիմնախնդրի փաստաբանության ձևերից մեկը, որն ունի ճիշտ ընտրված հասցեատեր կամ հասցեատերեր, դատողություն է անում պատճառահետևանքային կապի մասին՝ հասարակական անհրաժեշտության, իշխանութան պատասխանատվության, առաջարկված ճանապարհների և սպասելի շահույթի միջև:
Բազմակապ մակարդակ	Աշակերտի պատասխանում բարձրացված է մի քանի նշանակալից տեսակետ, բայց դրանք քննարկվում են մեկուսացված: Չեն երևում	Աշակերտը կատարում է հարցերի թվարկում, համարժեք է կիրառում նաև տերմինները (հասարակական անհրաժեշտություն է ստորգետնյա

	կապեր/առնչություններ, այդ թվում՝ ըմբռնումը մակերեսային է: **Համարժեք բայեր և արտահայտություններ** Նկարագրություն, թվարկություն, լրացում, շարունակում, կոմբինացում, հաշվարկ: «Կարող եմ առանձնացնել մի քանի տեսանկյուն...»	անցման սարքավորումը, որի մասին ակտիվ քաղաքացին որոշեց գրել խնդրագիր՝ պետիցիա ...եթե անհրաժեշտ կլինի, անցման սարքավորման գործում նույնպես կունենա մասնակցություն...), բայց չի կարողանում հասնել այդ կապերի հստակեցման և չի ներկայացվում այն, թե՝ ի՞նչ կապ կա քաղաքացիական ակտիվության և հասարակական կարիքների, հասարակական օգուտի միջև:
Միակապ մակարդակ	Աշակերտի պատասխանը շատ կարճ է և ներառում է միայն մեկ կարևոր տեսանկյուն, ունի մակերեսային ըմբռնում: **Համարժեք բայեր և արտահայտություններ** Սահմանում, նույնականացում, անվանում, դուրս բերում, որոնում, նշանակում, հարմարեցում/կապակցում, հեշտ ընթացակարգերի պահպանում: «Այդ հարցով մի բան կարելի է նշել...»	Աշակերտը հստակորեն է կիրառում քաղաքացիական մասնակցության հետ կապված որոշ տերմիններ, հիշատակում է ակտիվ քաղաքացուն: Ստորգետնյա անցումների կարգավորումը հասարակական անհրաժեշտություն է անվանում, բայց այդ զրույցը դրվագային և մակերեսային է:
Չկապակցված մակարդակ	Աշակերտը չունի պատասխան կամ նրա պատասխանը ընդհանրապես կտրված է իրականությունից:	Աշակերտի պատասխանը կտրված է հարցից, չի կարող կամ ոչ համարժեք է կիրառում քաղաքացիական մասնակցության հետ կապված տերմինները (քաղաքացիական ընդգրկվածություն, հասարակական կարիքներ, հասարակական շահ, փաստաբանություն, կամավորություն...)

Համալիր առաջադրանքի ռեֆլեքսիայում առաջադրված հարցերը նույնպես ծառայում են մտածողության գործընթացների ակտիվացմանը և աշխատում են ինքնագնահատման և ուսումնառության գործընթացի առաջընթացի համար, որպեսզի աշակերտը ինքն նեթ ընդհանրացնի ստացած փորձը և նաև ընտելանա ուսումնառությունը բարելավելու որոշումներ կայացնելուն:

http://mastsavlebeli.ge/?p=26986

Առցանց թերթ՝ mastsavlebeli.ge